նուր ինչ էութիւն տարածեալ առ բազում անհատ կամ որ զբաղմաց ասի հասարակաբար. կօ, «Օառ, հաւ, գետ, տուն, դաշ, զոհ, խորհուրդ, բան, զօրութիւն, փառք, և Զի սոքա ոչ զմիոջէ միայն, այլ և զբաղմաց ասին՝ի հասարակի: Որպէս ծառան ոչ ասի զմիոջէ ծառոց միայն, այլ և զամենայն ծառոց. զի զոր ինչ նշանակէ անունս ծառ, դտանի այն յամենայն ծառս:

**Վ** Եծական կամ ըստ հնոց հակառական, անունն է, որ ինքնին ոչ վարի՝ի բանս, այլ պահանջէ յարիլ՝ի գոյականս՝ իրը յայտնիչ որպիսութեան նոցա. կօ, Բարի, չար, առատ, սակաւ, անստուեր, վեհագոյն, կարեոր, ամենափայլ, կենդանարար, բարեատեաց, ևն: Որք առանձինն ոչ վարին՝ի բանս, այլ յարագրելով՝ի գոյականս: Եւ պատճառն է, զի ունին դնշանակութիւն իրը ծապաղ. քանզի թէպէտ և յայտ առնեն զորպիսութիւն ինչ, բայց ոչ որոշեալ առ այս կամ առ այն. որով և միտք մարդոյ՝ի լսելն՝ մնայ տատանեալ. և որոնէ, թէ որոյ իրի արդեօք որպիսութիւն է այն, զոր նշանակին: Եպա և թէ ընդ գոյականի վարեցին, որոշի նշանակութիւն նոցա առ այս կամ առ այն. որով և միտք լսողին հանդչի. կօ, յասելն, «Օառ, բարի, պտուղ, բարի առնէ. և ծառ, չար, պտուղ, չար առնէ.» Պատրի: Եծական անունս բարի՝ յարելով՝ի գոյական անուանսդ ծառ և պատուղ՝ որոշի առ այս և առ այն. այսինքն առ ծառն և առ պտուղն. որով և միտք լսողին ոչ ևս որոնէ, թէ բարին զոր իր նշանակէ աստ, կամ զորոյ իրի որպիսութիւն յայսնէ: Ըստ այսմ և անունդ չար յարելով յանուանսդ ծառ և պատուղ, որոշի՝ի նշանակութեան իւրում:

Յասացելոցս տեսանի, զի գոյական անունն հայի՝ի պէնչգով իրին, իսկ ածականն հայի յորպիսն զոլ նորին. վասն որոյ մին վարի առանձին, և միւսն յարելով՝ի նոյն:

**Վ** Եյլ գիտելի է, զի թէպէտ ածականն պահանջէ յարիլ՝ի գոյականս, բայց ոչ է հարկ միշտ ներգործութեամբ ունել զնոսին. այլ բաւական է ևս զօրութեամբ միայն ունել. կօ, յասելն, «Դ փոքուն նկարեաց զմեծն, և՝ի մարմնականն ըզ-հոդեւրն:» Իժնապ: Եծական անուանքս՝ի փուտուն, պէտին,՝ի մարմնականն, պէտեսոյն զօրութեամբ ունին զգոյական իւրեանց. այսինքն է՝ իլ, զործ, զործողութիւն, խորհուրդ. որպէս

թէ ասէր, 'Ի փոքու իրի նկարեաց զգործ մեծ, և 'ի մարմնական գործողութեան զխորհուրդ հոգեոր:

Աջական անուանց ոմանք դրականք ասին, ոմանք բաղդատականք և ոմանք գերադրականք:

Դրականք են, որք ցուցանեն զորպիսութիւն կամ զորքանութիւն իրին պարզապէս առանց ձոխացուցանելոյ կամ նուազեցուցանելոյ. զօ, Բարի, սպիտակ, գեղեցիկ, վատթար, պակաս, երկայն, կարճ, և է:

Բաղդատականք են, որք բաղդատելով զմի իր ընդ այլում իրի, ցուցանեն զորպիսութիւն կամ զորքանութիւն նորին առաւելեալ կամ նուազեալ քան զմիւսոյն. և սոքա կազմին մասնկամբս ժոյն. զօ, Բարեգոյն, սպիտակագոյն, գեղեցկագոյն, վատթարագոյն, պակասագոյն, երկայնագոյն, կարձագոյն, և է:

Գերադրականք են, որք ցուցանեն զորպիսութիւն իրին յոյժ առաւելեալ, կամ յոյժ նուազեալ քան զայլոցն. և սոքա կազմին մասնկամբս ամեն. զօ, Ամենաբարի, ամենագեղեցիկ, ամենավատթար, կամ՝ ևս վերագոյն, ևս մեծագոյն, և է: Զայսցանէ տես յընդարձակն:

### Անուաններ մշականներ:

Աստանօր արժան համարիմ խօսիլ զայնոցիկ անուանց, որք կոչն մշականներ, և բաժանին 'ի հինդ տեսակս. որ են, Ա երբերականք, հանրականք, հարցականք, մասնականք և թուականք:

Ա երբերականք են, որք 'ի մէջ բերեն վրազդատութի ինչ որպիսութեն կամ որբանութեն. և են սոքա. Այնպիսի, զոյնպիսի, նոյնպիսի: Այսպիսի, այդպիսի, այնպիսի: Այսքան, այդքան, այնքան. սոյնքան, նոյնքան. և սոքա վարին ածականապէս: Ընդ որս դասին և բառքս՝ Այսչափ, այդչափ, այնչափ. սոյնչափ, դոյնչափ, նոյնչափ. որք առանց հոլովելոյ վարին:

Անրականք են բառքս՝ Ամենայն, ամենեքեան կամ ամենեքին, բոլոր, բոլորեքեան կամ բոլորեքին. որք իրը ածական 'ի գործ ածին: Ընդ որս կարեն դասիլ և անուանքս՝ ընաւ, համայն, և է:

Հարցականք են, որք հարցականապէս վարին. յորոց ոմանք են իրը գոյական. և են սոքա, Ո՞, ով, զի՞նչ, ով

ոք, ոյք. Եւ ոմանք իբր ածական. և են սոքա, Ո՞ր, զե՞նչը պիսի, որպիսի, որչափի, որքան, քանի՛: 'Ի սասա բառքս Արդիսէ, որդոն, ժանի, որշափ, վարին երբեմն նաև իբր վերը երականք առանց պարզիի:

Մանականք, որք և ճականշն ասին, են նոքա, որք մասնաւորեն զեշանակութիւն անուան իրիք. երբեմն իբր ածական վարելով և երբեմն իբր գոյական. և սոքա են չորեքին: Եռաջինն որոշէ զմին 'ի յերկուց. և է բառս այս՝ Վիա. զոր օրինակ, «Յաստուծոյ երկու ձանապարհ կոչեցան. մին լայն և ընդարձակ, խակ մեռն նեղ և անձուկ.» Ուէ: Սա չունի յոդնական:

Երկրորդն որոշէ զմին 'ի բազմաց. որպէս սոքին, Ո՞հ, ո՞ւ, ի՞ն, ի՞նչ զօ, «Օ՞սն (ի մարդկանէ) ասս պատմէ և անոյ պսակէ.» Լաճբանն. 'ի մեն. պատր:

Երրորդն ցուցանէ զերկումն մի մի յինքեանս՝ և է բառս այս՝ Երկատանչնուր. զոր օրինակ, «Օկերպարանս երկաքանչեւրոց առ միմեանս եղեալ զմի և զնոյն վհատութեան ծընունդս արտադրեն.» Կապ:

Չորրորդն ցուցանէ զբազումն 'ի միասին անձներաբար և ոչ հաւաքապէս և է բառս՝ Խոշատանչնուր. զօ, «Եռանձինն ունի իւրաքանչեւր անդամ զիւրաքանչեւր գործ.» Կապ. Երժ:

Սորա ուղղականն բազում անգամ վարի փոխանակ սեռականի և տրականի. զօ, «Եսին հոգի բաշխէ Խոշատանչնուր ըստ իւրաքանչեւր կարի.» Մոր բաշխէ իւրաքանչեւրոց. Կապ:

'Ի աեզի սորա երբեմն զնի կրկնակ բառքդ մ մ, այր այր, և ն. զոր օրինակ, «Բաշխէր մոյ մոյ 'ի նոցանէ զգանձս.» Խորշն: «Օսան առան զբաջութիւն պատմէր նոցա.» Եղիշն: « Ձառւականք են, որք 'ի մէջ բերեն զթիւ և վարին ածականապէս. որոց են հինգ աեսակը: Եռաջին աեսակըն ասին ընդգարձակը, որք արձակապէս նշանակին զթուեալսն. որպէս՝ Վի, երկու, երեք, չորս, հինգ, վեց, տասն, հնգետասան, քսան, քսան և մի, երեսուն, և ն: Երկրորդ աեսակըն ասին գասականք. որք կարգաւ ցուցանեն զթուեալսն. որպէս՝ առաջներորդ, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, տասներորդ, հնգետասաներորդ և ն: Երրորդ աեսակըն ասին զատականք. որք նշանակին զթուեալսն իբր վատուցեալս և ա-

ուանձնացեալս . զօ , Արիակ , Երկեակ , Երբեակ , Հնդեակ , Կօթ-  
նեակ , յիննեակ , ևն : Զոլրորդ տեսակիքն ասին անձներականք .  
որք զքաղումն ընդ միով թուով իւրաքանչիւրաբար նշանա-  
կեն . զօ , Երկոքեան կամ երկոքին , Երեքեան կամ երեքին ,  
չորեքեան կամ չորեքին , Հնդեքեան կամ Հնդեքին , վեցե-  
քեան կամ վեցեքին , տասնեքեան կամ տասնեքին , և այլն :  
Հնդերորդ տեսակիքն ասին կրկնականք . որք զկրկնումն թուոյ  
ցուցանին՝ վերջաւորութեամբս պատրի . զոր օրինակ , Քառա-  
պատիկ , (այսինքն մին քառ իցս կրկնեալ) . Հնդապատիկ , (ց  
մին Հնդիցս կրկնեալ .) ևն :

Յումանս 'ի սոցանէ յարի և մասնիկս կեն . զօ , Երեքին ,  
չորեքին , Հնդեկին , վեցին , և այլն :

### ԳԼՈՒԽ Օ.

Յաղաժոյ պարագայից անուան : Եւ նախ յաղաժոյ Աւան :

Պարագայք անուանց ասին այնք , որք շուրջ զանուամբ  
մտածին՝ իրք Հետեւումն որպիսութեան նոցա . ուստի նաև  
հետեւանք կոչին . և են վեց , այսինքն , Աեռ , ձեւ , տեսակ ,  
թիւ , հոլով և հոլովումն :

Աեռքն կամ սերք անուանց են որոշմունք գոյական անուանց՝  
ըստ նշանակելոյ նոցա զսերս իրաց , այսինքն , զարու և զէդ ,  
կամ զշասարակ ինչ , և կամ զչէզոք : Ուստի և անուանք՝ ըստ  
սեռի են . չորք , արական , իգական , հասարակ և չչոքական :

Երականն է որ նշանակէ զարու . զօ , Երահամ , Իսա-  
հակ , Հայր , Եղայր , այր , Փեսայ , աներ , Հաւ , պապ , Եղն ,  
ցուլ . արջառ , քաղ , ևն :

Խգականն է որ նշանակէ զէդ . զօ , Աարա , Աննա , կին ,  
տիկին , դշխոյ , հարսն , մայր , քոյր , զոքանչ , հանի , նու ,  
հօրաքոյր , մայրադիր , մօրու , կով , երինջ , մաքի , ալոջ ,  
մարի , և այլն :

Հասարակն է որ միով ձայնիւ նշանակէ զարու և զէդ .  
զոր օրինակ , Օաւակ , որդի , թոռն , կորիւն , կոզոն , մըտ-  
րուկ , ձադ , ևն : Եւ ևս Վարդ , առիւծ , ձի , նասպատակ ,  
արտուտ , անդդ , և այլն :

Զեղքականն է որոյ նշանակեալն ոչ արու է, և ոչ էզ. զօ, ֆուր, օդ, հող, մոմ, ճրագ, թուղթ, լոս, մեծութիւն, ծնունդ. և այլն: Խսկ եթէ անկենդան իրք կոչեսցին երբեմն արու կամ էզ. զօ, Արու կամ էզ ծղմնի, արու կամ էզ արմաւենի, արու կամ էզ պղմնձ, և այլն, այն նմանութեամբ ասի, և ոչ տիրապէս:

Ասացի 'ի վերոյ, թի այս որոշմունք են գոյական անուանց. զի 'ի լեզուի մերում ոչ գտանի որոշումն սեռի ածական անուանց ըստ արականի և ըստ իգականի. զի որչափ և ածականս ունիմք, կամ հասարակ են արուի և իգի և կամ չէզոք. և բազումք ևս հասարակ են մարդկան և անամոց, ըդգայնոց և անզգայից. արհեստականաց և բնականաց:

Ասացի և ևս, ըստ նշանակելոյ նոցա զաերս իրաց. զի սեռք անուանց ոչ նկատին 'ի մեզ ըստ վերջաւորութեան կամ ըստ յօդից ինչ, որպէս 'ի լատինս, և 'ի յայլ. այլ ըստ նշանակութեան նոցին. իրբ զի եթէ նշանակեալն անուան իցէ արու՝ անունն ասի արական, եթէ էզ՝ իգական, եթէ երկուցն ևս պատկանեալ՝ հասարակ, և եթէ և ոչ միում սպատշաճեալ, չէզոք:

Եւ թէպէտ ոմանք յածականաց ունելով զվերջաւորութիւն սեռի որոշին 'ի սեռ իգական. զօ, Արբուհի, երանուհի, ևն, բայց այս վերաբերի յածանցումն անուանց. զորմէ տեսցես 'ի ժւ է:

Եւ դարձեալ 'ի յատուկ անուանս թէպէտ կան՝ որք ըստ այս ինչ վերջաւորութեան արականապէս նշանակեն. զօ, Յովհաննէս, Ճերովդէս, Ախւրոս, Յուստիանոս, և այլն. և ըստ այլ ինչ վերջաւորութեան իգականապէս. զօ, Յովհաննա, Ճերովդիս, Ախւրիս, Յուստիանէ, ևն: Բայց այս ոչ է 'ի յատկութենէ լեզուիս մերոյ, այլ գրեթէ 'ի թարգմանութենէ անուանց այլոց ազգաց. որպէս յայտ է:

Խսկ եթէ պիտոյ լիցի 'ի լեզուի մերում զանուն ինչ հասարակ իգականապէս 'ի գործ ածել, յարեմք յայն զանուն իգական. զօ, «Ան մի վհուկ.» ա. թագէ: Ան մարդարէ. Դաստ: Ան ժրագլուխ: Արտակ: Աղջին՝ որ դռնապանն էր. Յովհ. ևն: Եւ ևս Ատարակ ձի. Տարակ առիւծ, գած աղուէս, գած կատու, և այլն:

## ԳԼՈՒԽ Է.

Յաղաբիս Ջևոյ անուանոց:

Չեք անուանոց որոշին ըստ պարզութեան, ըստ բարդութեան, և ըստ բաղադրութեան նոցա: Ուստի և անուանք ըստ ձեռյն երբեակ են. Պարզ, բարդ և բաղադրեալ:

Պարզ անունն է որ կայ յինքեան միայնակ և առանձինն, և ոչ է զօդեալ ընդ այլում նշանական բառի, և ոչ ունի յառաջոյ զաննշան ինչ մասնիկ. զօ, Աով, հոգի, բարի, խառն, կեղծիք, ելք, և այլն:

Բարդն է, որ յերկուց նշանական բառից զօդեալ է 'ի մի անուն 'ի ձեռն յօդիցս, ա, է, է, է, ու կամ է-։ զօ, Աովամահ, բարեմիտ, հսգեկիր, խառնիխուռան, կեղծուպասիր, ելեէջ, ևն. յորս յօդքդ ե և է եդեալ են փոխարկմամբ ինչ տառին:

Այլ բաղում անդամ առանց այսպիսի յօդից ևս բարդի անունն. զօ, Երկճայն, վրէժինդիր, բարձընտիր, և այլն:

Այլ գիտելի է, զի անունն բարդի ընդ պէսպէս մասնոց բանի. Եախ ընդ ինքեան. զօ, Պարագլուս, սկզբնաշար, բաղմապարզե, մեծապայծառ, և այլն:

Երկրորդ ընդ գերանուան. զօ, Ինքնազոյ, ինքնահնար, նոյնատիպ, քյոյնասատեղծ, և այլն:

Երրորդ ընդ բայից. զօ, Չարախնդաց, թագընկէց, ծովաշնեղձոյց, վարձահատոյց, բեռնաբարձ, աիեղերակալ, սրատիս, գիւահար, ականջալուր, ևն: Երբեմն ևս ընդ արմատը բայից. զօ, Բազմածին, զինակիր, լուսակիցն, հոգեպատում, և այլք բաղումք: Կ սոսա ոմանք ունին զզօրութիւն ողի, և ոմանք եալի. քանզի լալախնդացն նշանակէ ըզինդացովն ընդ չարիս. Նադընկէցն զթագ ընկեցօղ, նեռնաբարձն զըեռն բարձող, բաղմածինն զբաղումն ծնանօղ, պինակին զզէնս կրող, ևն: Այնալիս և ծովանեղյոյցն հեղձեալ 'ի ծովու նշանակէ կամ 'ի ծովու հեղձուցանող, հոգեպատուծին հոգւով պատմեալ կամ զըոգւյն պատմող. դէսահացն 'ի գիւէ հարեալ, և այլն:

Չորրորդ ընդ ընդունելութեան. կօ, «Երողամիտ, քերթողահայր, տեսանողագուշակ, առաքելաշնորհ, ընտրելակից, սրանչելագործ, և այն»:

«Ծնդերորդ ընդ նախադրութեան. կօ, Գաղատամիտ, ընդդիմամարտ, հեռաբնակ, միջասահման, մօտաքաղաք, շրջապարիսպ, և այն»:

Ա եցելորդ ընդ մակրայի. կօ, Յառաջապահ, յարագալար, յաւետահրաշ, մշտանուէր, նախաժաման, ներքսակողմն, և այն»:

«Կար է անուանց բարդիլ նաև. ընդ միջարկութեան և ընդ շաղկապի. կօ, Վաշվաշաէր, թէախնդիր, և այն. այլ սոքա չեն՝ ի գործածութեան»:

Գիտելի է ևս, զի բարդութիւն անուանց լինի քառակի. «Ասխ՝ յերկուց ամբողջ բառից. կօ, Մհծահանդէս, գեղատեսիլ հրեշտակակերպ, լայնախորհուրդ, շքեղապայծառ. ևն: Երկրորդ՝ յերկուց պակասելոց կամ փոփոխելոց. կօ, Լուսատու, երկդիմի, երկնառաք, բազմագունի, և այն: Երրորդ՝ ի միոջէ փոփոխելոյ՝ ի հաւին, և՝ ի միոջէ ամբողջէ՝ ի յանդին. կօ, Գեղեցկատիպար, ժողովրդապետ, բարեվիճակ, տանուտէր, չարեացապարտ, ձերբակալ, և այն: Չորրորդ՝ ի միոջէ ամբողջէ՝ ի հաւին, և՝ ի միոջէ փոփոխելոյ՝ ի յանդին. կօ, Յոդնապիսի, մեծազդի, միամօր, անարդամեծար. ևն:

Դ բարդ անուանս դասին և այլ քանի մի անուանք որք կոչին յարաբարդք. զի յերից նշանական բառից զօդին՝ ի մի անուան, որք և չեն այնչափ՝ ի յաճախ զործածութեան. որսիսի են սոքին, Վնաշառասիիւռ, անձնապահապետ, բարեհասակաչափ, երեքփառատրեան, հնդետասամամեայ, ողբերգարկութիւն, և այն»:

Ե Խսկ բաղադրեալ անունն է, որ յառաջոյ զօդեալ ունի զաննշան մասնիկ ինչ բաղադրական, որպիսի են սոքին, Վներկիւղ, աղերսախտ, աղենիսաղ, աղիկար, առողջ, արտուղի կամ պարտուղի, պարաժամ, հակածառ, համախորհ, և ոճասեռ, բաղաձայն, փաղանուն, ներանձն, որկար աժդուհ, ոժժուատեհ, ևն:

## ԳԼՈՒԽ Բ.

Յաղաք Տեսակաց անուանց:

**Տեսակը** անուանց են որպիսութիւնք անուանց ըստ նախնական և ըստ ածանցական նշանակութեան նոցա: Ուստի և անուանք կրկին են ըստ տեսակին: «Ախաղաղափար», և ածանցական: որ 'ի հնոց կոչի նաև յարանուն:

«Ախաղաղափար կամ նախատիպ անունն է: որ կայ յառաջին նշանակութեան իւրում, և կամ յայնմ որպիսութեան զորինքնին նշանակէ: թէ գոյական իցէ, և թէ ածական: թէ պարզ իցէ, և թէ բարդ կամ բաղադրեալ: Ըստ որոյ և կոչի նախաղաղափար կամ նախատիպ: իբր թէ նախկին օրինակ և տիպ, յորմէ կարեն ածանցիլ և յարանուանիլ այլք: որպիսի են սոքա, լոյս, երկիր, գործ, մահ, բարի, զուարժ, լուսափայլ, բարեգործ, անմահ, և այլն:

Ածանցական անունն է նոյն նախատիպ անունն՝ 'ի ձեռն ածանցականակերտ աննշան մասնկանց տրամակայեալ՝ ի յանգին, և ածեալ յայլ իմն կերպ նշանակութեան: որգոն, լուսաւոր, երկրային, բարեգործութիւն, անմահական, ևն: Յորս որպէս տեսանի անունդ լոյս ածանցիչ մասնկամբս առաջ եղանակաւորեալ՝ ածեալ է յայլ իմն կերպ նշանակութեան: զի՝ ի կերպաւորին լուսաւոր՝ ոչ ևս նշանակէ զլոյն, այլ զունովն լուսոյ: Ըստ այսմ ևս անունս բարեգործ՝ տրամակայեալ ածանցիչ մասնկամբս ունին, ոչ նշանակէ զայն, որ գործէ զբարի: այլ զգործս նորա բարեգ կատարեալս: Ըստ այսմ իման և զայլոց:

Ածանցականակերտ կամ ածանցիչ մասնիկը բազում են յոյժ, զորս կարես տեսանել յընդարձակ քերականութեան:

Այլ ոմանք յանուանց երբեմն 'ի կրկին մասնկանց ածանցին: որգոն, թաղաւորութիւն, թաղաւորութիւն, ևն: և սոքա կոչին կրկնածանցականք:

## ԳԱՂԱՔ թ.

Յաղաքական թագավորություն:

Թակուք անուանց են միութիւն կամ բազմաւորութիւն նշանակութեան անուանց ըստ ձայնին: Եւ են կրկին. եղական և յոդնական, կամ միաւորական և բազմաւորական:

Եղականն է, որ ըստ ձայնին զմի ինչ նշանակէ. զօ, չոդի, մարմին, խոնարհ, հօտ, ևն: Օքի թէպէտ նշանակեալն այսպիսի անուանց 'ի բազումն է, բայց ըստ ձայնին ոչ իբրև բազում նշանակի, այլ իբրև մի:

Խսկ յոդնականն է, որ ըստ ձայնին զբազումն նշանակէ. զօ, չոդիք, մարմինք, խոնարհք, հօտք, ևն:

Վայլ գիտելի է, զի 'ի բարբառս մեր անուանք կրկնակի լենին յոդնականք: Կախ յաւելլով յեղականն զտառ ինչ. որպէս յուղղական և 'ի գործիական հոլովս +. զօ, Բանի, բանիւ+. Խսկ 'ի հայցական և 'ի ներգոյական հոլովս ++ զոր օրինակ, Օքանս, 'ի բանս. այլ 'ի սեռականն և 'ի բացառական' ց. զոր օրինակ, Բանից, 'ի բանից:

Երկրորդ յաւելլով յեղականն զվանկս ինչ, կամ զմանիկս յոդնականակե ըստ. որպէս երեխ 'ի սոսին, Վղախնայ+, այգեստանեայ+, դաշտայայ+, գեղոյեայ+, կողման+, բեռնի+, սերմանի+, ատամուն+, գահոյ+, մոռացօն+, անդէ+, գիւղօջէ+, աւագանի, մանկով, խողեան, բարձկնեար, մարդիկ, բազմական, մանկտեակ:

Գիտելի է դարձեալ, զի 'ի բարբառս մեր բազում անուանք կան, որք ըստ ինքեանց անյոդնականք են. զօ, Խաւար, լոյս, տիւ, սէր, յոյս, ևն: Այնպէս անյոդնական են և ամենայն յատուկ անուանք աստեղաց, ամսոց, քաղաքաց, գետոց, լերանց, կղզեաց, մարդկան, ևն. զօ, Լուսին, Յունվար, Վաղարշապատ, Երասխ, Աինա, Կիպրոս, Ճայկ, ևն:

Կան ևս բազում անուանք որք անեղականք են. զօ, Վղաչանք, բարձանք, բարք, փառք, կամք, խելք, մելք, ալիք, ժանիք, կարծիք, ընթրիք, դժոխք, ցնորք, կուոք, աղօթք, և այլք բազումք:

Եւ ևս դիտել արժան է, զի անեղական անուանքս, Թղթ, համբ, ևն, յորժամ յարին՝ ի բայս ինչ՝ իրրե մի վարելով ընդ նոսին կամ իրը դիմացուրի, երբեմն եղականապէս դնին. ղօ, «Անձանց իւրեանց մեղ է, և ոչ փրկողին.» Իդեալ: «Որոց զիտրդ կամ եղև անձանց իւրեանց, բերին նուշը տեսառն.» Եւից:

## Գլուխ Ճ.

Յաղագո Հողից անուանց:

Բառս հողով՝ հասարակ առմամբ նշանակէ թաւալումն և գլորումն կամ շրջումն: Եյլ ըստ քերականաց նշանակէ պէսպէս փոփոխումն մի և նոյն անուան՝ ի սկիզբն կամ՝ ի վերջն և կամ յերկոսին միանգամայն: Որպէս անունս բայս՝ ի հոլովին պէսպէս փոփոխի կամ՝ ի սկիզբն, կամ՝ ի վերջն և կամ յերկոսին ևս. ղօ, բոյս, բուսոյ,՝ ի բոյս, զբոյս,՝ ի բուսոյ, զբուսոյ, բուսով, զբուսով,՝ ի բոյս, ով բոյս:

Եւ այսպիսի փոփոխութիւնք կամ զանազանութիւնք միոյ անուան կոչին հոլովք անուանց. և են տասն. այսինքն. Աւղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, պատմական, գործիական, պարառական, ներգոյական, կոչական:

Ուղղական կամ անուանական հոլով է, յորում իրն ուղղակի և արձակաբար նշանակի յինքեան. ղօ, Հաց, անձն, հիմն, և այլն: Խոկ յայլ հոլովս անուղղակի և հոլովակի նշանակին իրը: Եյս հոլով թէպէտ և փոփոխամբ իւիք ոչ ձեւանայ, բայց դասի՝ ի հոլովս վասն երկուց պատճառաց, նախ՝ զի իրը արմատ այլոց հոլովից, և երկրորդ՝ զի՝ ի յոդնակին փոփոխի. ղօ, Հացք, անձինք, հիմունք, ևն:

Սեռական կամ ստացական հոլովն է, յորում ոչ իրն, այլ իմն իրին զօրութեամբ նշանակի, թէ աղդ իցէ նորա, թէ տուն և թէ այլ ինչ. որպէս յասելն Տարդոյ, զօրութեամբ նշանակի իմն որ մարդոյն է. որպիսի են միաք, խօսք, դէմք, ձեռք, զգեստ և կամ այլ ինչ որ ոչ է նոյն ինքն մարդն, այլ իմն նորա: Եւ վասն այսորիկ այս հոլով կոչի սեռական, զի յուցանէ, թէ որոյ սեռի է այս իր, այսինքն թէ որոյ է, և

կամ ոյր ստացուած։ նմին իրի ստացական եւ կոչել։ Եւ յայս մանէ է, զի երբեմն փոխանակ սեռականի վարեմք զստայտական յարանուանս։ Պօ, Այս երինացին, պարձանք պշղութան, և ։ փոխանակ ասելոյ, լոյս երինից, պարձանք Պօղոսի, և այն։

Տրական, այսինքն տուտղական հոլովն է, յորում նշանակի իրն իրը այն ինչ՝ որում տալի է իմն կամ առ որ հայելի է, կամ գիմելի, և այն։ Այս հոլով կրկին է, վերջահոլով և նախդրիւ։ Վերջահոլովն է, որոյ վերջաւորութիւնն միայն այլայլի նման սեռականին։ Պօ, Եզրի, դրան, դասու, և այն։ Որոց յոգնակին լինի, Եզրաց, դրանց, դասուց, և այն։ Իսկ նախդրիւն է, որոյ սկզբնաւորութիւնն փոփոխի՛ ի ձեռն նախ դըրաց 'ի, յ, առա, առա 'ի, ց, ընդ. Պօ, 'Ի խունի, յարուեստ, առ թագաւոր, ցանձն, ընդ լեաւն, և այն։ Որոց յոգնակին լինի, 'Ի խունիս, յարուեստս, առ թագաւորս, ցանձնիս, ընդ լերինս, և այն։

♦ Հայցական հոլովն է, յորում նշանակի իրն իրը ենթակայ ինդրոյ կամ իրը ենթակայ ներգործական գործողութեանց. և ձեւանայ այսպէս, Օկողով, զպտուղ, զմատունս, և այն։ Որոց յոգնակին լինի, Օկողովս, զպտուղս, զմատունս, և այն։ Այս հոլով բաղում ուրեք զօրութեամբ ունի զզայ, և կոչե անուրոշ հայցական. զի փոխանակ ասելոյ, զճանապարհ, զոգի, զաջ, զիկշտ, և այն ասեմք երբեմն, ճանապարհ, ոգի, աջ, վեշտ, և այն. Պօ, «Յոյց ինձ ճանապարհ, յոր զնացից.» Ասոլծոս։

Այլ սակայն 'ի զերանուանս ոչ է այսպէս. զի հայցական նոցա միշտ զայի ձեւանայ. զի ոչ լինի ասել, Յիշեա իս. այլ «Յիշեա զիս.» Պառկի։ Եւ ոչ լինի ասել, Որսն՝ որ որսայցէք, ըմբռնեսցէ ձեզ. այլ «Որսն՝ զոր որսայցէք, ըմբռնեսցէ զձեզ.» Խոր։ Եւ ոչ լինի ասել, Այս ամենայն և առաւելքան զսոյն խօսէր. այլ «Օայս ամենայն և առաւելքան սոյն խօսէր.» Եղիլ։ Բառ այսմ իման և վասն այլոց։

Բացառական կամ ըստ հնոց՝ առաքական հոլովն է, յորում նշանակի իրն իրը այն ինչ, յորմէ ելանէ իմն կամ ծաղէ կամ 'ի բաց բառնի և կամ առաքի. Պօ, 'Ի սենեկէ, 'ի բերանոյ, 'ի զայթակղութենէ, և այն։ Որոց յոգնակին լինի, 'Ի սենեկայ, 'ի բերանոց, 'ի զայթակղութեանց, և այն։

Այլ գիտելի է, զի յորժամ մի և նոյն անունն 'ի բացառա-

կան և 'ի տրական հոլովն միանգամայն 'ի գործ ածի, նախդիրն բացառականին կամ տրականին՝ իրը 'ի բաղումն ներգործութեամբ ոչ դնի. դո, «Օամենայն տիեզերս կրօնից 'ի կրօնա փոխեցին.» Ապա՞ . առաջ. պէտք է:

Եյլ ուրեք ուրեք ներգործութեամբ ևս դնի. դո, «աւածեալ շրջեցայ 'ի քաղաքէ 'ի քաղաք.» Յով. կան:

Պատմական, այսինքն ճառողական հոլովն է, յորում նշանակի իրն իրը առարկայ պատմելոյ կամ ասելոյ, և կամ առնելոյ ինչ վասն նորա. դո, Օանկոյ, զիայտէ, զծագմանէ, ևն: Որոց յոգնակին լինի, Օանկոց, զիայտից, զծագմանց, և այն:

Գործիական հոլովն է, յորում նշանակի իրն իրը միջնորդ՝ կամ գործի, 'ի ձեռն որոյ առնեմք ինչ. դո, Առւսերաւ, գըլ խով, եղնգամբ, ևն: Որոց յոգնակին լինի, Առւսերօք, գըլ խովք, եղնգամբք, և այն:

Պարառական հոլովն է, յորում նշանակէ իրն իրը պարառեալ կամ փարեալ իւիք. դո, Օքաղաքաւ, զսեղանով. ըլտամբ, ևն: Որոց յոգնակին լինի, Օքաղաքօք, զսեղանովք, զտամբք, և այն:

Կերգոյական հոլովն է, որով նշանակի իրն իրը այն ինչ, յորում լինի մնալ, կամ կալ, և կամ լինել. դո, 'Ի տապանակի, յատենի, 'ի լերին, ևն: Որոց յոգնակին լինի, 'Ի տապանակս, յատեանս, 'ի լերինս, և այն:

Եյլ գիտելիք է, զի նաև եղակի նախդրիւ տրականն փոխանակ ներգոյականի վարի բաղում ուրեք՝ գրեթէ յամենայն հոլովմունս. որգոն, 'Ի բանի կամ 'ի բան, քաղաքի կամ 'ի գուղագ, ևն. ըստ որում եղաք յառաջին մասին:

Առջական կամ հոշական հոլովն է, որոյ նշանակի իրն իրեւ կոչեցեալ. դո, ով ազգ անհաւատ, ով կին դու, ոտէր, ու արք, ու սովերք, ևն: Եյս հոլով բաղում անգամ առանց կոչական մասնկանց ևս ձեանսայ, դո, «Բժիշկ բժշկեալ զանձն քոյ.» Պատկ. փոխանակ ասելոյ. ով բժիշկ:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագ հոլվմանց անուանց:

Հոլվմանք անուանց են պէսպիսութիւնք վերջաւորութեանց նոցա՝ ի սեռական և՝ ի գործիական հոլովս միանգամյն։ Դբը զի այն անուանք, որք ըստ սեռականին՝ միանգամյն և ըստ գործիականին՝ այսպիսի ինչ վերջաւորութեամբք յանդին՝ կացուցանեն զայս ինչ տեսակ հոլովման։ որդոն, բան, բանի, բանիւ։ Եւ որք այնպիսի ինչ վերջաւորութեամբք յանդին, կացուցանեն զայն ինչ տեսակ հոլովման։ որդոն, Եղբիւր, աղբերք, աղբերք։

Եւ քանդի այսպիսի վերջաւորութիւնք լինին առ հասարակքան օրինակաւ, հոլովմանք անուանց ևս համարին քան։ որոց չորեքտասանքն ասին հասարակք, կամ տարածականք, և վեցքն մաննաւորք կամ յատուկք։

Հասարակքն են սոքա, բառ, ի, իւ։ Քաղաք, ի առ։ Գետ, ոյ, ով։ Եկեղեցի, ոյ, եաւ։ Եղեղն, ան, ամբ։ Եղութիւն, եան, եամբ։ Գառն, ի, ամբ։ Օգետառ, ու, ու։ Փոքր, ու, ումբ։ Աղբիւր, եր, երբ։ Աստղ։ եղ, եղբ։ Տըրդատ, ոյ, առ։ Եսայի, եայ, եաւ։ Հայաստանեայք, եայց, եօք։

Սոքա եթէ միայն ըստ վերջաւորութեան եղակի սեռականացն առցին, թուին ութ ըստ ութից յանդիցս։ ի, ոյ, ան, ու, այ, ին, եղ, եր։ որդոն, բառի կամ քաղաքի, զետոյ կամ եկեղեցւոյ, աղեղան կամ նեղութեան, զգեստու կամ փոքրու, Տըրդատայ կամ Եսայեայ, գառին, աստեղ, աղբերք։ Եյսոքիկ հոլովմանք կոչին հասարակ։ զի իւրաքանչիւր սոցա՝ բազում անուանց հասարակ է։ իբր զի բազում անուանք հոլվին ըստ օրինակի սոցա։

Խակ մաննաւորքն են սոքին, Տէր, տեառն, տերամբ։ Հայր, հօր, հարբ։ Քոյր, քեռ, քերբ։ Աին, կոտջ, կնաւ։ Գիւղ, գեղջ, գիւղիւ։ Օր, աւուր, աւուրբ։ Սոքա ասին ճաննաւոր կամ յատուկ, զի ըստ օրինակի իւրաքանչիւրոց՝ ի սոցանէ։ մի կամ երկու անուն հոլովի, և կամ բարդեալքն անուան։ որպէս եղաք յառաջին մասին։

Յայսոսիկ հոլովմունս բովանդակին ամենայն անուանքը լեռուիս Հայոց թէ անեղականք իցեն և թէ անցոգնականք, թէ յատուկը իցեն և թէ ընդհանուրք. և թէ առենեքին ընդ ամեներումքը, այլ ոմանք ընդ առաջնով, ոմանք ընդ երկրորդիւ, և այլք ընդ այլովք, և բազումք ևս ընդ երկրումք. որոց քաջ կարես հասու լինել ոչ կանոնօք և ոչ օրինակօք, այլ յաձախ ընթերցմամբ դրոց, և 'ի բառարանի գեգերելով. զի նման եղեալ կան ըստ կարգի հոլովմունք ամենայն անուանց :

Այլ աստ զիտելի է, զի կան անուանք ինչ որք 'ի հոլովին ընդ զանազան հոլովմամբ վիսին զնշանակութիւնս իւրեանց. որպէս, Անունս Գայլ 'ի հոլովին՝ ի, իւ, ից, իւք, նշանակէ զքէլէփէլ. որ է գործի ինչ տանջանաց. իսկ 'ի հոլովին՝ դայլոց, ովլ, ևն, նշանակէ զգուրստ զազանն :

Անունս Գել 'ի հոլովին՝ ի, իւ, ից, իւք, նշանակէ զլորոշափողն. իսկ 'ի հոլովին փողոց, փողով. ևն, նշանակէ զպօռու և զգուռնաս. ևս և զգրամ :

Անունս Գել 'ի հոլովին գեղոց, ովլ, ոց, ովք, նշանակէ զզեղեցկութիւն. իսկ 'ի հոլովին գեղի, իւ, ից, իւք, նշանակէ զդիւզ :

Անունս ՊԵ 'ի հոլովին ոյ, ովլ, ոց, ովք, նշանակէ ըզտունի խաղաղոց. այսինքն է ասմա. իսկ 'ի հոլովին, ու, ու, ուց, ուք կամ օք, նշանակէ զճնունդ կովու. ց' է տանա:

Անունս ՊԵ 'ի հոլովին ոյ, ովլ, ոց կամ ից, ովք, նշանակէ զմին 'ի չորից տարերաց. այսինքն է հաւա. իսկ 'ի հոլովին՝ ի, իւ, ից, իւք, նշանակէ զագանելիս ոտից: Ըստ այսմ են և այլ քանի մի անուանք :

Եւ ևս զիտելի է, զի դտանին բազում անուանք ածականք, որք ոչ վակին ընդ իւք հոլովմամբ. այլ նախդրիւ միայն հոլովին. որգոն, Ազաղուն, բնիկ, զուրկ, խիտ, համակ, նկարեն, ուրախ, պատիր, տրտում, ևն: Ըստ այսմ և բարգեալք բազումք յոյժ. որգոն, ըսյնտարր, խաւարամնունդ, հրաշաղննին, մաշահրաւեր, որոգայթադիր, սաղարթափթիթ, օձաջամբ, և այլք բազումք :

Ըստ այսմ են և բազում անուանք զյականք, որք նախդրիւ միայն հոլովին. կամ ընդ բայս յարելով վարին. զօ, Յամբակ գործոյ ժամանել, պատիկաստ կալ, յուրաստ լինել, ևն:

## ԳԼՈՒԽ ԺԲ.

ՅԱՂԱՔԻ ՊԵՐԱԿԱՆԱԿԻ :

Թմէ զի՞նկ և ժամի պատճի է իցեւ դերանուանն :

ՊԵՐԱԿԱՆՈՒՆՆ է մասն բանի՝ որ փոխանակ անուան գնի, և առ որոշեալ դէմն վերաբերի. որսիս Դրու, իմ, այն, որ, ևն, զօր օրինակ, «Իմ կամքս է այն, զոր դու սիրես.» Լամբ. ուր դերանուանըս այն, ոչ, ևծ, եղեալ են փոխանակ անուանց. այն փոխանակ անուան որ ցուցանէ զկամեցեալ իրն. ոչն փոխանակ անուան՝ որ ցուցանէ զսիրեցեալ իրն խկ դառ՝ փոխանակ անուանս առաջատած։ Սոյնպէս և իձ եղեալ է՝ ի վերայ անուանս կամք՝ 'ի տեղի անուան կամեցողին. խկ յօդս « զկամնն որոշեալ է առ առաջին դէմն։ Յորս որպէս տեսանի՝ զերկուս պաշտօնս վարէ դերանունն. Մի՛ զի փոխանակ անուանն գնի. ըստ որոյ և կոչչ պերանուան. այսինքն փոխանակ անուան. քանզ զի դեմն փոխ լսի. յոր միտ ասեմք, պերադատաւոր, պերասան, պերամտանել, և այն։ Դւ երկրորդ՝ զի ցուցանէ, թէ յոր դէմն վերաբերի անուան՝ որոյ փոխան գնի. և վասն այսորիկ ասացաք 'ի ասհմանի, թէ դերանունն առ որոշեալ դէմն վերաբերի. զորմէ ունիմք ևս խօսիլ 'ի յաջորդ գլուխդ։

\* ՊԵՐԱԿԱՆՈՒՆՆ է հնգապատիկ, կական, ցուցական, ստացական, յարաբերական և դիմորոշական։

Հական դերանունն է, որ զոյականապէս և որոշակի նշանակէ զգէմն իրին. որպիսի են սոքա. Էս, դու, ինքն, իւր, իւրեան։ Ընդ որս զասին և սոքին. միմւանց և իջերաց, որ ուղակասին 'ի յուղղականն։

Յուցական դերանունն է, որ փոխանակ անուան եղեալ՝ իրը յանդիման ցուցանէ զայն, զորմէ է բանն. որպիսի են սոքա. Աա, դա, նա, այս, այդ, այն. սոյն, դոյն, նոյն։

Ստացական դերանունն է, որ ածականապէս նշանակէ զիմն որոշեալ դիմաց. որպիսի են սոքին. Իմ, քոյ, մեր, ձեր, իւր, իւրց։ Զի սոքա նշանակին զայն ինչ, որ է այսր կամ

այնր դիմի, թէ մարմին իցէ այն, թէ հանդերձ, և թէ գործք, և այն. զօ, յասեն, «Տուր՝ ի խրատ զսիրտ ո՞յ» Եւակ. դերանունս ո՞յ ցուցանէ զիմն երկրորդ դիմի, առ որ է այս բան:

Եւ որպէս յայանի տեսանես, այսոքիկ դերանուանք կազմին՝ ի սեռականաց էական դերանուանցս՝ Եւ, դու, մետ, դուուտ. զի սեռական սոցա լինի, Եմ, ո՞յ, ԱԵ, ՅԵ: Եւ վասն այսորիկ բաղրում անգամ նաև սեռական հոլովք ցուցական դերանուանցը՝ Աս, դա, նա, յաւելմամբ յ տառին իրբեւ ստացական վարին. որգոն, Աորայ կամ սորայն, դորայ կամ դորայն, նորայ կամ նորայն. սոցայն, դոցայն, նոցայն. որոց յոգնականն լինի, Աորայք, դորայք, նորայք, սոցայք, դոցայք, նոցայք: Եւ սոքա հոլովին ըստ հոլովման ստացական դերանուանս քոյ, քոյոյ, որգոն, սորայ, սորայոյ, նորայն, նորայոյ, դոցայք, դոցայոց, ևն: Վ Յարաբերական դերանունն է, որ՝ ի կարգս բանի՝ զօրութեամբ յառաջ բերեալ զնախընթաց կամ զյաջորդ բառն՝ զնի՝ ի տեղի նորա, յոր հոլով և սղաշանջեսցէ բառն. և է բառս այս ո՞յ. զօ. «Երանեալ է այր, ո՞յ եղիտ զիմաստութիւն.» Եւակ: Աւր բառս ո՞յ եղեալ է՝ ի տեղի անուանս այլ:

Դիմորոշականքն են երեքին տառքս այսոքիկ «, ո, ն. որք իրը յօգք ինչ յարելով՝ ի մասունս բանի՝ որոշեն զգէմն նոցա. զօ, «Ամ կեանքս՝ ի քո ճշմարիտ ճանապարհիով սերն է.» Լամբ:

Սոքա թէպէտ ընդ դերանուանս դասին, բայց չեն յատկապէս դերանուն. զի ոչ զնին փոխանակ անուան. բայց քանզի որոշեն զգէմն բառից, և լինին ևս սկզբունք կամ վերջատառք, յորոց բգիւնն ցուցական դերանուանքս, Աս, դա, նա. սոյն, դոյն, նոյն. այս, այդ, այն. վասն այսորիկ առ դերանուանս վերաբերին:

### ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագո Պարագայից դեւանուանց:

Պարագայք դերանուանց են հինգ. Տեսակ, զէմք, թիւ, հոլով և հոլովումն: Ոմանք եօթն զնեն, յաւելեալ՝ ի սոսա զսեռ. և զձեւ. բայց յայտ է՝ թէ՝ ի դերանուանս սեռ ամենենին

ոչ զտանի 'ի լեզուի մերում, ևս և ոչ ձեւ. զի գերանուանք 'ի բարդին ընդ այլ մասունս բանի և ոչ ևս մնան գերանուն, այլ փոխադրին յանուն. որդոն, Խւրակերտ, նոյնահրաշ, ինքնակալ, քոյինաշունչ, ևն. որք իբր անուն վարին:

Տեսակը գերանուանց են երկու, որպէս և անուանցն. այս ինքն նախատիպք և ածանցականք: «Ամխատիպք են սոքին. Խմ, քոյ, մեր, ձեր, նոյն, իւր, ինքն, և եռ՝ սորա, դորա, նորա, և այլն»:

Խակ ածականք են նոյն նախատիպք գերանուանք վերածեալք յայլ իմն եղանակ նշանակելց 'ի ձեռն աննշան մասնկանց, այն, ոյն, ական, առար, առնիտն. որդոն, Վերային, քոյին, իւրական, ինքնաւոր, նոյնութիւն:

Դէմք գերանուանց են յայտարարութիւնք որոշեալ անձանց կամ այնց՝ որք իբր գիմաւոր նկատին, և իբր գիմօք որոշին. և են երրեակ. առաջին, երկրորդ և երրորդ:

Առաջին գէմքն յայտ առնէ զայն, զորմէ է բանն. կամ որ խօսի. որդոն, Ես, Ձե՞:

Երկրորդ գէմքն յայտ առնէ զայն, զորմէ է բանն. կամ յաղագս որոյ լինի խօսիլ. որդոն, «Ես, ինդն, ի՞շ:

Առ այս երրորդ գէմս վերաբերին և այլ ամենայն գերանուանք՝ թէ ստացականք. որդոն, Խմ, ՁԵՐ, ՔՈՅ, ՅԵՐ, ԷՐ. և թէ ցուցականք՝ որդոն, Աս, Դա, այս, այդ, այն, առյն, դպյն, նոյն. զի սոքա ամենեքին յայտ առնեն զայն ինչ, զօրմէ լինի բան: Եւ ստկայն համեմատութեամբ միմեանց՝ 'ի սոցա ևս կան որոշմունք երից գիմաց. զի 'ի ստացականս՝ ոմանք նկատին ըստ առաջին գիմաց. որդոն, իմ, ՁԵՐ, ինյին, ՁԵՐԵՅԻՆ, ևն. վասն զի սոքա ցուցանեն զայն ինչ, որ է առաջնոյ դիմի: Ոմանք նկատին ըստ երկրորդ գիմաց. որդոն, ՔՈՅ, ՅԵՐ, ՔԵՐԵՅԻՆ, ևն. զի սոքա ցուցանեն զայն ինչ, որ է երրորդ գիմի:

Այնպէս և 'ի ցուցականս համեմատութեամբ միմեանց՝ ոմանք նկատին իբր առաջին, կամ իբր մօտաւոր, որդոն, Աս, այս, այն: Ոմանք նկատին իբր երկրորդ, կամ իբր մերձ

մօտաւորին. որդոն, դա, այդ, դոյշ: Եւ ոմանք նկատին իրը  
երբորդ, կամ իրը հեռաւոր. որդոն, նա, այն, նոյն:

Խակ գերանունս ինքն յորժամ առանձինն վարի, թէպէտ  
յերբորդ դէմ վերածի, սակայն յորժամ ընդ գերանուանս  
յարի, կարի վերաբերի յառաջին և երկրորդ դէմն ևս.  
զոր օրինակ, «Ես նիֆն սպանի ընա.» Ա արդ հարց: «Դրու  
նիֆն խառնեցար՝ ի սոյն մաքրութիւն.» Եար: «Եսյն նիֆն  
զդժոխս աւերեցեր.» Ը ար:

Օխիւք գերանուանց են երկու. եղական և յոզնական: Օխ  
որ իբրև զմիաւոր նշանակէ՝ ասի եղական, թէ միոյ դիմի  
իցէ, և թէ բազմաց. որդոն, Ես, զու, իմ, մեր, ձեր,  
և այլն: Խակ որ իբրև զբազումն նշանակէ ու և իցէ դիմի,  
ասի յոզնական. որդոն, Վեք, զուք, մերք, իմք, նորա, ևն:

Հոլովք գերանուանց են տաննապատիկ փոփոխումն մի և  
նոյն գերանուան՝ ըստ օրինակի անուանց. որոց և բազմաց կո-  
չականքն պակասին, ըստ որում եղաք յառաջին մասին:

Հոլովմօւնք գերանուանց են պէսպիսութիւնք հոլովից նո-  
ցա՝ որպէս և անուանցն. ըստ որում յայտ է յեղելոց յա-  
ռաջին մասին անդ:

Այլ գիտելի է նախ, զի ցուցական գերանուանքս՝ Այն,  
Դոյշն, նոյն որք իրը ածական վարին՝ նախդրիւ միայն հո-  
լովին. իսկ յոյլ հոլովն լրանան՝ ի ցուցական գերանուանց,  
Աս, դա, նա, 'ի հոլովիլ նոցա Աս, առյին. դա, դոյշն. ևն,  
'ի վարիլ սոցա ածականապէս որպէս եղաք յառաջին մասին:

Պիտելի է երկրորդ, զի ցուցական գերանուանցս, Այս,  
այշ, այն. առ, դա, նա, եղակի տրականքն, որք են այսմ  
կամ այսմիկ, այդմ կամ այդմիկ, այնմ կամ այնմիկ, սմին,  
դմին, նմին, յորժամ յարին յառաջոյ 'ի բացառական նաև 'ի  
պատմական հոլովս անուանց, իրը բացառական և պատմական  
վարին. զօ, «Բազում ծնանին հերձուածք յայսճ պատճառէ.»  
Ծ նոյնիալի:

«Այսուհետեւ զընյշ լեր յայտճ ամենայնէ.» 'Ի Ա ար Ասկէ՞:

«Առին զսուրբն յայսճ անսապատէ.» Եղիշէ:

«Եհան 'ի նմին քաղաքէ Ասորի քրիստոնեայս.» Եսյն:

Եւ գարձեաւ այսոքիկ ցուցական գերանուանք, այսինքն  
են այս, այդ, այն, երբեմն եղական ձայնիւ վարին իրը յոդ-

նական, մանաւանդ յուղղականն. զօ, «Երկու այլ ևս քահանայք երանելիք, որոց անուանըն են այս, Ասմուէլ և Երբահամ»։ Եղիշե։

«Այս և 'ի մարդիկ երեխն.» Ասյնն։

«Այն էին իղձք աղօթից նոցա առ աստուած.» Ասյնն։

Գիտելի է երրորդ, զի ստացական գերանուանց եղակի սեռականքն՝ բաղում անդամ իբր տրական վարին. զօ, «Որդեւակ, ի՞նչ իմաստութեան անսա.» փոխանակ ասելոյ, իմում իմաստութեան. Առակ։

«Տուր փրկութիւն ուզյ ծառային.» այսինքն՝ քում ծառ ուայի. Ասք։

«Անկարօտ է աստուած. այլ սակայն քաղցեալ և կարօտ է Ֆերյ փրկութեան.» այսինքն՝ մերում փրկութեան. Ասք. Երգ։ «Թաղու զթագաւորութիւնն՝ Երտաշը որդւոյ իւրոյ.» այսինքն՝ որդւոյ իւրում. Յովն. կան։

Եւ ներհակ այսմ՝ եղակի տրականք սոցա բաղում անդամ իբրեւ սեռական վարին. զօ, «Խճուծն խոռվութեան հաշտարանք.» փոխանակ ասելոյ. իմոյս խոռվութեան. Ասք։

«Դ ներքոյ ուուծդ թագաւորութեան եմք դրաւեալ.» Լամբ. պատր։

«Բնկալ զերդարան օրհնութիւն մերուծն լեզուի.» Ասք։

«Զ համայնն հաւաքեսցէ առ. 'ի նոյն մարմինն իւրուծն գըլ-խոյ.» Ասյնն։

Խսկ ուուծն՝ ուրեք ուրեք զնի ևս փոխանակ սեռականի էական գերանուանս՝ պատ, իբր յատկացուցիչ. զոր օրինակ. «Խու քեզէն 'ի ուուծդ լըութենէ փառաւորեալ խսկ էիր.» փոխանակ ասելոյ, 'ի քո լըութենէդ. Ասքեկ։

Գիտելի է չորրորդ, զի յարաբերականն ով բաղում անդամ յարի 'ի բառսդ, Յնչ, Ջանդամ, սի. և վարի ընդ նոսա իբր մանական անուն. բայց այնու ևս ոչ կորուսանէ զյարաբերականութիւն. որպէս երեխ 'ի սոսա. «Յոր Յնչ հայի ոք, 'ի նոյն փոխի մտօք.» Ասք. Երժ։

«Որ Ջանդամ ունի զոխութիւն 'ի սրտի իւրում, գեղ ըըժշկութեան նորս չիք.» Ամեն։

«Որ սի աստ սիրէ երկայնել զբանս վարդապետութեան, ըզդիրսն Յովհաննու ընթերցցի զլսկերելանին.» Խճուծդ.

Դ վախճան դերանուանց ամենայն գիտելի է և այս, զի  
'ի հոլովա սոցա գտանին ուրեք ուրեք խոտորմունք ինչ ար-  
տաքայ սովորութեան. յորոց գործածութենէ պարտ է զգու-  
շանալ:

## ԳԼՈՒԽ ԺԴ.

### Յաղագո բայե.

Թէ զի՞ն և +անիարտը իցե բայե:

Բայն է մասն բանի, որ զառս կամ զկիրս և կամ զլինե-  
լութիւնս իրաց ընդ ժամանակաւ նշանակէ ըստ որոշեալ  
գիմաց. վասն զի յայտ առնէ կամ զներգործել իրաց յայլս,  
կամ զկրել նոցին յայլմէ, և կամ ըսկ զգործել և զլինել նո-  
ցին՝ ըստ այս ինչ կամ ըստ այն ինչ գիմաց որպէս յասելն,  
«Ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց.» Ասդ. նշա-  
նակի ներգործել մեղաւորացն յաղեղունս. և այս յերրորդ  
դէմն: Եւ յասելն, «Դ գաղանի նետից բանսարկուին վիւ-  
արեցայ.» Ըստ. նշանակի կրելն անձին 'ի նետից բանսար-  
կուին. և այս յառաջին դէմն: Եւ յասելն, «Ավելի զու-  
հաւատարիմ յամենայնի.» Ժաղով. նշանակի հաւատարիմ  
լինելն անձին. և այս յերրորդ դէմն:

Ա լրդ որովհետեւ յատուկ է զործողութեանց և լինելու-  
թեանց 'ի ժամանակի կատարիլ, կամ 'ի ներկայն, կամ յան-  
ցեալն և կամ յապագայն, բայն ևս որ զգործողութիւնս և  
զլինելութիւնս նշանակէ, ցուցանէ զնոսին ընդ ժամանակաւ  
կամ ընդ ներկայիւ, որգոն, գործեմ. կամ ընդ անցելով՝ որ-  
գոն, գործեցի. և կամ ընդ ապագայիւ, որգոն, գործեցի:

Ա բայք բաժանին յերկուս, յէական և յառքական:

Եականք են, որք նշանակին սոսկ զլինելութիւն իրին ընդ  
ժամանակաւ. և են չըրեքին, Եպանիմ, Նիմիմ, Եմ և Գոմ:

Եսկ առքականք են, որք զառնել կամ զկրել իրացն նշա-  
նակեն. զօ, Տնկիմ, լում, աղօթեմ, մատչիմ, աղատիմ,  
և այլն:

Առքական բայր բաժանին՝ ի կանոնաւորս և յանկանոնս. Կանոնաւորք են, որք՝ ի խոնարհմունս, կամ՝ ի վերացմունս իւրեանց՝ հասարակօրէն անփոփոխ մնան ձայնիւ, անթերի ժամանակաւ, և անպակաս դիմաւ. և են սոքա. Գործեմ, հատանեմ, զօրացուցանեմ, աղամ, խոստանամ, թողում, ընկենում, և որք ընդ սոքօք պարունակին:

Խակ անկանոնք են, որք ոչ խոնարհին ամբողջ, այլ կամ պակասին՝ ի ժամանակս ինչ, և յայլոց լրանան և կոչին պակասաւորք. և են սոքա. Ուտեմ, կերայ, ըմպեմ, արրի. Ճանաչեմ, ծանեայ, ունիմ, կալայ, երթամ, չոգայ: Կամ զարտուղին, այսինքն՝ այլայլին ձայնիւ՝ ի խոնարհին իւրեանց. և կոչին զարտուղիք, և են սոքա. Ըսնեմ, արարի. գնեմ, եղի. լսեմ, լրայ, տամ, ետու. մեղանչեմ, մեղայ. յառնեմ, յարեայ. զամ, եկի: Եւ կամ երբեմն պակասին յառջին և երկրորդ գէմս, ևս՝ ի յողնականան, և կոչին գիմազուրկք. որպիսի են սոքա. Յաջողէ, լուսանայ, թուի, հարկ է. և որք ընդ սոքօք են, զորոց ամենեցուն զիտնարհմունն եղաք առանձինն յառաջին մասին:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Յական պարագայից բայց. և նախ յական Աւաշ:

Պարագայք բայից են պէսպէս հետեմունք որպիսութեան նոցա. և են ինն. Աեռ, ձեւ, տեսակ, թիւ, դէմք, ժամանակ, եղանակ, խոնարհմունք, և լծորդութիւնք:

Աեռք բայից, որք՝ ի հոգին կոչին տրամադրութիւնք, են որոշմունք նոցա ըստ ներգործականութեան, ըստ կրաւորականութեան, ըստ հասարակ լինելոյ և ըստ չեղքք գոլոյ: Ուտեի և են չորք. Ներգործական, կրաւորական, հասարակ և չեղքական:

Աերգործականք են նոքա, որք նշանակին ըստ ներգործելիքն՝ ի կրողն՝ որով և իցէ գործողութեամբ, թէ արտաքին իցէ, և թէ ներգին. որգոն, Խորտակեմ, դովեմ, սիրեմ, ևն: Արովք նշանակի այնպիսի գործողութիւն, զոր խորտակողն՝ գործով ներգործէ՝ ի խորտակեալն, զովողն՝ բանիւ

Ներգործէ՝ ի սիրեցեալն. զօ, «Դուռ խորակէցն զգլուխ վիշապին.» Ասդ: «Գառվացն զքեղ ընկերն, և մի քո բերան.» Եւստի: «Այրեցն զաստուած, որ սիրեացն զմեզ.» Խոսրով:

Արաւորականք են, որք նշանակեն զիիրս իրին յումեքէ ներգործողէ՝ որով և իցէ կրելութեամբ. որգոն, Խորտակիմ, զովիմ, սիրիմ, ևն. յորս նշանակի կրելութիւն խորտակելոյն՝ ի խորտակողէն. գովեցելոյն՝ ի գովողէն, սիրեցելոյն՝ ի սիրողէն, զօ, «Ա էմք խորակէցն ՚ի նմանէ.» Եւստուծ: «Բերան իմաստոց հովի՝ ՚ի մարդկանէ.» Եւստի: «Ու սիրին զիս, «Եցեացի՝ ՚ի հօրէ իմմէ.» Յովի:

Ճասարակը են, որք միով կրաւորական ձայնիւ մերթ ըզներգործութիւն իրին առ կրողն նշանակեն, և մերթ զիրելութիւն իրին յումեքէ ներգործողէ. որգոն, «Օնանիմ, զատիմ, և այլն: Որովք մերթ նշանակի ներգործութիւն ծնողին և դատողին, և մերթ կրելութիւն ծնելոյն և դատելոյն. զօ, «Ո՞ի ոք դատեացի զընկեր իւր, զի մի և ինքն դատեացի յարդարադատն աստուծոյ.» Ընողի:

Զեզոքականք են՝ որք զներգործութիւն գործողին յինքեան՝ ՚ի գործողն նշանակեն. և ոչ իբր՝ ՚ի ներգործողէ առ կրողոք. զօ, «Փախուցնեալ երեաց ամբարիշտն առանց ուրուք հալածելոյ.» Եւստի:

Սոքա կամ ըստ ներգործական բայից լծորդին, և կամ ըստ կրաւորականաց: Որք ըստ ներգործականաց լծորդին, կոչին ներգործակերպ չեզոքական. որպիսի են այն ամենայն չեզոքական բայք որք յանդին՝ ՚ի եճ, ՚ի աճ և առճ՝ զօ, Պիմեմ, զնամ, զարթնում, և որ ընդ սոքօք:

Խոկ որք ըստ կրաւորականաց լծորդին՝ կոչին կրաւորակերպ, կամ ձայնակրականք. որպիսի են այն ամենայն չեզոքական բայք որք՝ ՚ի իճ յանդին. զօ, Ճաշիմ, մնանիմ, փախչիմ, և որ ընդ սոքօք: Եյլ գիտելի է. զի են բայք ներգործականք՝ որք երրեմն իրը չեզոքական վարին. որգոն, ասպատակեմ, ծագեմ, յաճախեմ, կարդամ, յամբառնամ, յաւելում, զեղում, և այլն:

Եւ ընդ հակառակին՝ են բազում չեզոքական բայք, որք իբր ներգործական վարին. որգոն, լում, խնայեմ, մաղթեմ, սում, փայլեմ, անդ իտանամ, րդամ, վստահանամ, ևն:

Ան և բազում կրաւորական բայք բղխեալ՝ ի բայից եղեւոց ընդ Գոշեմիւ և ընդ հապանեմիւ, որ իր ձայնակրական վարին. որգոն, ամբոխիմ, բորբոքիմ, զինիմ, թաւալիմ, կանգնիմ, ձգտիմ, գտանիմ, լքանիմ, և այլն:

Դիմուլի է ևս՝ զի գրեթե ամենայն ձայնակրական բայք, որք ըստ կրաւորականի Գոշեմ բային լծորդին, իրեւ զներգործակերպ չէզոքականս ևս խոնարհին. որգոն, հակառակեմ, հրաժարեմ, սարասփեմ, բնակեմ, և այլն:

Հարկաւոր է ևս գիտել, զի բազում բայք կան՝ որք փոփոխեալ իւիք ընդ այլ և այլ լծորդութեամբ խոնարհին. որգոն, խինջամ, խինջեմ. ծփամ, ծփեմ. կարօտիմ, կարօտանամ. զբաղնում, զբաղնիմ. թագչիմ, թագնում. և այլն:

## ԳԼՈՒԽ Ժ.Օ.

Ձեք բայից մտածին ըստ պարզութեան, ըստ բարդութեան, և ըստ բաղադրութեան նոցա. ուստի և բայք երեք են ըստ ձեւոյն. Պարզ բարդ և բաղադրեալ: Պարզ բայն է, որ զպարզ նշանակութիւն առից կամ կրից ցուցանէ. որգոն, Ծեկանեմ, հարկանեմ, զարդարեմ, ստեղծում, ևն:

❖ Ծարդ բայն է, որ զօդեալ ընդ այլում նշանական բառի՝ զերկուս իմացուած առից կամ կրից միայարէ. որգոն, Ահարեկեմ, յաղթահարեմ, զեղազարդեմ, կենդանաստեղծում, ևն:

Ոմանք յայսպիսի բայից վասն բարդութեան այլազգ խոնարհին, քան զոր յառաջն. զօ, Ծերեմ, բերի, բեր. ընծայարերեմ, բերեցի, բերեա: Հարկանեմ, հարի, հար. յաղթահարեմ, հարեցի, հարեա, և այլն:

❖ Ահազարեալ բայն է, որ բաղկանայ բաղադրական մասնկամբք, և այս քառակի:

“Սախ՝ առ՝ ի զարդ կամ առ՝ ի եղանակաւորել զնշանակութիւնն. որգոն, Տարակորզեմ, բաղչիւսեմ, բացորոշեմ, վիճակառորդեմ, յանկառորդեմ, և այլն:

Երկրորդ՝ առ՝ ի փոփոխումն նշանակութեան. զօ, Ահարեմ, սոգտանեմ, ոգիտանամ, ոգիտանամ, ոգիտանամ, արդարերեմ, հանձ-

ձայնեմ, պրածաբանեմ, ևն: Այլ յաճախ գործածութիւն մասն-կանց արք, համ, ճակ, որտած, պար, բաղ, ևն, աղաւաղէ ըզ-շնորհս կազմութեան բայից:

Երրորդ՝ առ ՚ի վերածել յայլ իմն լծորդութիւն ՚ի ձեռն մասնկանա՝ ան. զօ, Օծեմ, օծանեմ, բուծեմ, բուծանեմ, ևն:

Չորրորդ՝ առ ՚ի յաճախապէս նշանակել ՚ի ձեռն յօդիցս, առ, առ, առ, զ ևն. զօ, Խոցել խոցոպել պատել պատա-պել, քակել, քակուել, գրգռել, զգրգռել, եղծանել զեղծա-նել, ընկենուլ, զընկենուլ, անցանել, զանցանել և այլն:

Այս կերպ յաճախման բայից լինի երբեմն նաև կրկնելով առաջնոյ վանկի բային. որգոն, Ըեկել չեկեկել կցել կցել ցել բախել, բախսել ջաղխել ջաղխջախել շրջել շրջել և այլն:

Լինի այս երբեմն նաև կրկնմամբ նոյն բայի. զօ, «Օար-թիցուք զարթիցուք.... յարբեցութենէ սատանայական մոլո-րութեանց» Խոտպահ:

Երբեմն դրութեամբ դերբայից այնր բայի. զօ, «Երթա-լով երթայր և զօրանայր» Յավհաննէս կան:

Երբեմն դրութեամբ աներեւութին կամ ընդունելութեան ըստ անցելոյն. զօ, «Դն իսպումք՝ որ սիրել սիրեն, այլ ոչ սերտիւ» Ապրէն:

Այլ զգուշանալ պարտ է ՚ի յաճախելց զայսպիսիս:

Երբեմն դրութեամբ արմատոյ բային. զօ, «Արհամարհո-նօք արհամարհեն զօրէնսդիրն» Յանախ. է:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

### Յաղագ Տեսակաց բայից:

**Տեսակը** բայից որոշն ըստ նախնական և ըստ անցողական նշանակութեան իւրեանց. ուստի և բայք կրկին են ըստ տեսա-կին. նախաղաղափար և անցողական:

Կախաղաղափար կամ նախափափ բայք են, որք կան ՚ի նախ-կին նշանակութեան իւրեանց, թէ պարզ իցեն, թէ բարդ և թէ բաղադրեալ. և ցուցանեն զառու գործողին միայնն որգոն, Բարկանամ, խոնարհիմ, զարթնում, ևն: Առքա եկոչ Նախա-

Քաղաքար կամ նախատիպ, զի են իրը գաղափար և տիպ անցողականաց . մանաւանդ թէ՝ իրեւ արմատ նոցին :

Իսկ անցողական կամ ածանցական բայր են, որք 'ի ձեռն ածանցակերտ մամնկանս ուցան՝ ածին և իրեւթէ անցուցանին յայնպիսի որպիսութիւն, որով նշանակեն ոչ միայն զգործողութիւն առնողին, այլև զգործել կրողին 'ի ներգործելոյ անտի արարողին . որդոն, Քարկացուցանեմ, խոնարհեցուցանեմ, զարթուցանեմ, ևն . այսինքն՝ առնեմ, զի այլ որք բարկասցի, առնեմ, զի խոնարհեցի . առնեմ, զի զարթիցէ, և այլն :

Արդ թէպէտ բազում բայր լինին անցողականք, բայց առաւելապէս չէզոքականքն . զօ, Շեմեմ, Ֆեղուցուցանեմ . մերձենամ, Ֆընեցուցանեմ . զայրանամ, պայրացուցանեմ . ևն : Եւ յաճախագոյն ևս ձայնակրականքն . զօ, Օկծիմ, պաժեցուցանեմ . թմրիմ, Ռոյեցուցանեմ . խոնջիմ, խոնջեցուցանեմ . սողիմ, սողեցուցանեմ . հանգչիմ, հանգուցուցանեմ, և այլն :

Այլ գիտելի է՝ զի ոմանք 'ի ձայնակրական բայից՝ յանգետալ 'ի էմ՝ երբեմն իրը անցողական նշանակեն . որդոն, աշխատիմ, աշխատիմ . զբաղիմ, դժաղլէմ . հնազանդիմ, հնազանդէմ . սասանիմ, սասանէմ . ևն . որք երբեմն իրը ներգործակերպ չէզոքական ևս վարին . որպէս սասացք 'է գլ. ծէ :

Իսկ ներգործական բայր հաղեւ երբէք փոխին յանցողականն . և եթէ հարկ լցի վարել իրը անցողական՝ կազմեմք զայն 'ի ձեռն բայիս պալ . զօ, «Եթէ ծառայ ըստ ունին ոչ լսէ, ընդմկանունս գանձնաւ լսել նմա» այսինքն՝ լսեցուցանեն նմա՝ գանելով զնա ընդմկանունս . Եղինի :

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագի թառոց և Գիմաց բայից :

Ա ամն թուոց և գիմաց բայից սակաւ ինչ ունիմք ասել . զի զոր ինչ խօսեցաք զթուոց անուանց և զգիմաց գերանուանց, նոքօք յայտնին ըստ խմիք և թիւք և գէմք բայից : Օք որպէս թիւք անուանց մտածին ըստ եղականութեան և ըստ յոդնականութեան նոցին, սոյնպէս և թիւք բայիցն մտածին ըստ եղականութեան և ըստ յոդնականութեան իւրեանց . ուստի և ևն երկու, եղական և յոդնական :

Եղականն է, որ նշանակէ զմիակի ներգործութիւն կամ կրելութիւն միոյ գործողի կամ կրողի. չօ, Գործեմ, գործիմ, և այն:

Յողնականն է, որ նշանակէ զբագում ներգործութիւնս կամ կրելութիւնս բազում գործողաց կամ կրողաց. չօ, Գործեմք, գործիմք, և այն:

Դէմք բայից են այնք, որք ցուցանեն զգործողութիւնս լինել որոշեալ անձին. և են երեք, առաջին, երկրորդ, երրորդ: «Քանզի գործք և կիրք կամ նորա են, որ խօսի. և ըստ այսմ է առաջին դէմքն. որգոն, Գնամ, պատմեմ, ևն: Կամ նորա ընդ որում լինի խօսելն. և ըստ այսմ է երկրորդ դէմքն. որգոն, Գնաս, պատմես, ևն: Եւ կամ նորա, զորմէ լինի խօսիլն. և ըստ այսմ է երրորդ դէմքն. որգոն, Գնայ, պատմէ, ևն:

### ԳԼՈՒԽԸ ԺԹՅ.

Յաղագո Ժամանակաց Բայից:

✓ **Ժամանակք** կամ ըստ հնոց ամանակք բայից են, որք ցուցանեն զառս կամ զկիրս լինել յայս ինչ կամ յայն ինչ ժամանակի. այսինքն, կամ 'ի ներկայն, կամ յանցեալն, և կամ յատպագայն. ուստի և են երեք. «Երկայ, անցեալ և ապառնի: Եւ անցեալն քառակի որոշե. այսինքն իբր անկատար, իբր կատարեալ իբր յարակատար և իբր գերակատար: Եւ ըստ այսմ ժամանակք բայից ասին լինել վեց. այսինքն, «Երկայ, անցեալ անկատար, անցեալ կատարեալ, անցեալ յարակատար, անցեալ գերակատար և ապառնի:»

«Երկայն է, յորում բայն նշանակէ զառս և զկիրս յառաջեկայ կէտ ժամանակի, կամ այժմ նորոգ սկսեալ. որգոն, Ա արեմ՝ վարես, վարէ. զենում, զենուս, զենու, և այն:

✓ **Անկատար** ժամանակն, կամ ըստ հնոց՝ յարձականն է յորում բայն նշանակէ զառս կամ զկիրս արդէն սկսեալ բայց գեռձգի 'ի կատարիլ. որգոն, Ա արէի, վարէիր, վարէր. զենուի, զենուիր, և այն:

Կատարեալ ժամանակն, կամ ըստ հնոց՝ յարակայն է յորում բայն նշանակէ զառս և զկիրս կատարեալ կամ զՃա-

րեալ, որդոն, Աշարեցի, վարեցեր, վարեաց, զենի, զեներ, և այլն:

Յարակատար ժամանակն է, յորում բայն նշանակէ զառս և զիրս վճարեալ, և ժամանակ ինչ՝ ի վերայ, որդոն, Աշարեալ եմ, ես, է, զենեալ եմ, ես, է, և այլն:

Գերակատար ժամանակն է, յորում բայն նշանակէ զառս և զիրս ոչ միայն վճարեալ, այլև յետ վճարման բաղում ժամանակ ես ՚ի վերայ անցեալ ՚ի վճարման անդ, որդոն, Աշարեալ էի, էիր, էր, զենեալ էի, էիր, էր, և այլն:

Ապանի ժամանակն է, յորում բայն նշանակէ զառս և ըզկիրս իբր եղանելի, կամ իբր հանդերձեալ առ ՚ի լինել, որդոն, Աշարեցից, վարեսցես, վարեսցէ, զենից, զենցես, զենցէ, և այլն:

Ասն յարակատար և գերակատար ժամանակաց, (ընդ որս և վասն անցելոյ ստորադասական եղանակին) գիտելի է նաև, զի յոգնական սոցա կրկնակի ձեանայ: Երբեմն առանց Քեր օրինակ, «Ընտրեալ են պահք սուրբ առաջի այ»: Ածբ:

Խակ երբեմն Քեր, Պօ, «Քրիստոսի շնորհիւն փրկեալք եմք»: Լամբը բոնացից:

Այլ յայսպիսիս յաճախութիւն Քերն ծանրալուր առնէ ըզկինարհմունս բայից:

Աղքա առ հասարակ թէպէտե ՚ի Ետլ յանդին, բայց երբեմն ՚ի Եցեալ ես դնին, թէ ներգործականք իցեն և թէ հասարակ: Պօ, այրեցեալ, սիրեցեալ, խօսեցեալ, կարծեցեալ, և այլն:

Գիտելի է երկրորդ, զի սոքա թէպէտ նախադաս լինելով էական բայի ձեանան, որդոն, Հատեալ եմ, ես, է, թողեալ էի, էիր, էր, ևն, բայց ՚ի գործածութեան՝ յետադաս լինելով վայելուչ ես կերպաւորին, զոր օրինակ,

«Ի քեզ եմք ապաւինեալ՝ Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ»: Ծար:

«Կոյն մարմին է, որում զուդ ես վիճակեալ»: Լամբը ապէն:

«Կա միայն է պատառեալ և անջատեալ յեկեղեցւոյ, որ ՚ի հաւատս կործանի, և մեղաց լինի պաշտօնեայ»: Ապիսէ կան: Հարդ էկեղ:

Երբեմն այլ մասն բանի ես ընդ մէջ անկանի: Պօ, «Դմէ է

օրն լինելութեան նզովեալ, և ոչ յորայ, կամ երեմիս.» «Ապրեկ:

«Քանողի խաւար խոր և դիշեր տիսրալից էր՝ի վերայ բնութեանս մերոյ մատուցեալ.» Ապրեկ. ու, ալես. ու:

Գիտելի է երրորդ, զի սոցա եզակի երրորդ գեմն վարի՝ի տեղի երից դիմաց ևս, թէ իրրե եզական, և թէ իրրե յոզնական. որդոն, Գործեալ է իմ, գործեալ է քո, գործեալ է նոցա: Գործեալ էր իմ, քո, նորա. գործեալ էր մեր, ձեր, նոցա: Գործեալ իցէ իմ, քո, նորա. գործեալ իցէ մեր, ձեր, նոցա. ու, «Օմ՞նչ վաս գործեալ է իմ.» Երպ:

«Ընդէր տրտմեալ է քո հայր.» Ապրեկ հարց:

«Եթէ լուեալ էր քո պատուիրանաց իմոց, լինէր քեզ իրբեւ զգեստ խաղաղութիւն քոյ.» Երպէլ:

Գիտելի է չորրորդ, զի սոքա բազում անգամ առանց էական բայի վարին՝ի բանս. որդոն, թառշեալ, ծնեալ, կործանեալ, և յայնժամ կոչին պրադեմ. և այս կարի յաճախեալ է՝ի գիրս մեր. ու, «Թռողալ ումանց զօրէնս՝ պարծին՝ի մեջս.» Ածբ:

«Վահկանացու ծնեալ անմահ զիւրն յիշատակ եթող.» Խոյը:

«Ամաւ կործանեալ կորստեանն վիճակեցայ.» «Ապր. ահս և յընդարձակն:

## ԳԼՈՒԽ Ե.

### Յաղականաց բայից:

Եղանակը բայից են պէսպէս կերպը կամ աստիճանը նշանակելոյ նոցա զառս և զիրս, կամ զլինելութիւնս, և են չորս:

Վահմանական, հրամայական, ստորադասական, և աներեւոյթ կամ անորոշ:

### Յաղականական եղանակի:

Վահմանական եղանակն է, յորում բայըն արձակաբար և որոշակի նշանակեն զառս կամ զիրս՝ առանց ցուցանելոյ զիա-

խումն ինչ . որդոն , Գրեմ , գնացի , տեսից . և այլն : Եւ ամենայն բանք սահմանականք , պատմուկանք , ծանուցականք , խոստացականք և հաստատողականք՝ այսու եղանակաւ ձեւանան :

Այս եղանակ բայից ունի կատարելավէս զվեց ժամանակս . այսինքն գներկայ , գանկատար , զկատարեալ , զյարակատար , զգերակատար և զապառնի :

Այլ վասն կատարեալ ժամանակի սորա գիտելի է , զի ըստ հին սովորութեան լեզուի մերում երկրորդ դէմն յոդնակի սորա ոչ յանդիւր 'ի չ+ , այլ 'ի է+ , կամ 'ի չու+ . իբր զե որոց հրամայականի յոդնակի երկրորդ դէմն յանդիւր 'ի է+ , կատարեալն ևս գնիւր է+ . ուստի փոխանակ ասելոյ գործեցիք , հատիք , բացիք և այլն , ասէին . զործեցէք , հատէք , բացէք , ևն . առանց շեշտի : Խակ որոց յոդնակի հրամայականն յերրորդ դէմը յանդիւր 'ի չու+ , կատարեալն ևս գնիւր չու+ : Ուստի փոխանակ ասելոյ , լուաք , դարձայք , ևն , ասէին , լուարուք , դարձարուք , ևն . թէպէտ երբեմն այդ ևս գնէին , այսինքն է , լուայք , դարձայք . և այլն :

### Յաղաժու Արամայական եղանակի :

Հրամայական եղանակն է , յորում բանքն ցուցանեն զառս կամ զկիրա՝ ոչ արձակաբար , կամ իբր անկախ , այլ ընդ հրամայողութեամբ . որդոն , Արա , տուր , գթա , հայեաց , ևն : Եւ ամենայն բանք հրամայողականք , մաղթողականք , սպառնականք , կոչականք , յորդորականք , խրատականք և արգելականք այսու եղանակաւ ձեւանան :

Այս եղանակ ունի զերկուս ժամանակս միայն , գներկայ և զապառնի , այլ ոչ զանցեալ , զե զանցելոց հրամայել ոչ լենի : Եերկայն ունի զմի դէմ միայն , այսինքն՝ զերկրորդն . որդոն , Թռող , մի թողուր . թողէք , մի թողուք : Եւ ապառնին ունի 'ի յեղականն զերկուս դէմն միայն , այսինքն՝ զերկրորդն և զերբորդ . որդոն , թողջիր , թողջէ : Խակ 'ի յոդնականն ունի զերիս դէմնն ևս . որդոն , Թռողուք , թողջիր , թողջէն :

Առօք թէպէտ (բաց 'ի յանդելոյն 'ի Ալ) ըստ ձայնին նոյն են ըստ սահմանականի ապառնոյն , բայց կարեն որո-

շել յեղանակէ նշանակելոյն. զի հրամայականն հրամայողականապէս նշանակէ. զոր օրինակ.

«Եյտուհետեւ յօժարեսցիս սիրելի առ աղօթս.» Ածբ:

«Լեզու քո սիրեսցէ զլուութիւն.» Այցն:

«Մանձահարեսցնէք զլեզուս. սանձահարեսցնէք զակն.» Ասրդ:

Իսկ սահմանականին՝ ծանուցողապէս. զօ, «Երդարութիւն խոնարհի առաջնորդեսցէ նմա.» Ածբ:

«Եթէ հաւատասցիք, և ոչ բաժանեսցիք՝ ի միտ ձեր, չեք այն ինչ՝ զոր գուք ոչ կարիցէք առնել.» Այցն:

### Յաղագու Սպորտադասական Եղանակի:

Ստորագասական եղանակն է, յորում բայն նշանակէ զառս կամ զկիրս՝ ոչ արձակարար, այլ ցուցմամբ ըղձի կամ թեռութեան, կամ պատճառի, կամ ժամանակի, կամ տարակուսանաց, կամ հարցման, և այլն. այսինքն ստորագասելով ըղնշանակեալ գործողութիւնն ընդ ըղձիւ, կամ ընդ թեռութեամբ, կամ ընդ պատճառաւ, ևն. յոյր սակա իսկ այս եղանակ Սպորտադասական կոչեցաւ:

Երդ եթէ ընդ ըղձիւ նշանակեսցէ, կոչի ըղնական. զօ, «Երանի թէ չէի պատահեալ այնմ ամենայնի.» Պիտոյէց:

Եթէ ընդ թեռութեամբ նշանակեսցէ, կոչի նեական. և ըստ ոմանց ստորակցական, կամ անկատարական. զոր օրինակ, «Դատաւոր է՝ ի մեզ միտքս. թէ զբարին գովիցէ, և զշարն խոտիցէ, դատաւոր արդար է.» Գհերդ:

Եթէ ընդ պատճառաւ նշանակեսցէ, կոչի պատճառական. զօ, «Պամն այսորիկ տուան կերակուրք, զի կերակրիցիմք. և ոչ զի կերակրովք զոգի և զմարմին կորուսանիցեմք.» Գհերդ:

Եթէ ընդ ժամանակաւ իւիք նշանակեսցէ, կոչի ժամանակական. զօ, «Մի հաներ յինէն զշնորհս մինչեւ մեռեալ իցեմ.» Երան:

Եթէ ընդ տարակուսանօք նշանակեսցէ, կոչի երկբայսական կամ տարակուսական. զօ, «Տներեւ արդեօք՝ ի հանդերձեալ յաւիսենին՝ ի քրիստոսէ զնոյն ճշմարտապէս վայելիցեմք.» Յանի. ինսուս:

Եթէ ընդ հարցմամբ նշանակեսցէ, կոչի հարցական. զօ,

Զիահօրդ օտար եղելոց 'ի մօրէ կորիցէ լինել ոք ծնօղ»  
«Նորհանձիւ»:

Այս եղանակ ունի զերկուս յատուկ ժամանակս, այսինքն՝  
զանցեալ «որդոն», Տեսեալ իցեմ, իցես, իցէ, ևն. և զա-  
պառնի. «որդոն», Տեսանիցեմ, իցես, իցէ, և այն:

Ասացի յապուտէ ժամանակն «քանզի բաց յերկուց աստի բա-  
զում անգամ իբր զիւր ժամանակս վարէ նաև զժամանակնն  
սահմանականին, թէ ըստ ներկային, թէ ըստ անկատարին  
և թէ ըստ այլոց:

Ըստ ներկային. զոր օրինակ, «Մանուկ կրօնաւոր թէ-  
պէտ և զերկինս բանայ, մի՛ մոտաներ» «Նորհանձիւ»:

Ըստ անկատարին. զոր օրինակ, «Երանի թէ զաղատու-  
թիւնն, զոր ետ Աստուած բնութեանս, բարոք 'ի կիր  
արկանէին» «Նորհանձիւ»:

Ըստ կատարելոյն. զոր օրինակ, «Եթէ յարեաք ընդ Վրիս-  
տոսի, ապա զվերինն խնդրեցէք» «Կողուա»:

Ըստ յարակատարին. զոր օրինակ, «Եթէ այսու կենօքս  
միայն յուսացեալ եմք 'ի քրիստոս, ողորմելի եմք քան զա-  
մենայն մարդիկ» ։ ։ ։ «Կողուա»:

Ըստ գերակատարին. զոր օրինակ, «Ուեկ կացեալ էր 'ի  
պատուիրանին, պահէր զնա կենդանարարն կենդանի» «Եղինի»:

Ըստ ապառնուոյն. զոր օրինակ, «Գուցէ մուացոյց զշափ  
բնութեանս» «Լամբէրնացի»:

### Յաղագի Աներեւոյն Եղանակի:

Աներեւոյթ կամ անորոշ եղանակն է, յորում բայն իրր  
վերացեալ նշանակի զառս կամ զիւրս առանց որոշման ժա-  
մանակաց, դիմաց և թուոց. զոր օրինակ, Փրկել, բարեբե-  
րել, խոնարհել, ընթանալ, լինել, ևն; Այս եղանակ բայի  
վասն այսորիկ կոչի աներեւոյն, զի ոչ երեի 'ի նմա ժամա-  
նակ ինչ, կոչի և անորոշ, զի դիմօք ոչ որոշե. և սակայն  
'ի ձեռն գերանուանց կամ դիմորոշական տառից՝ կարէ նկա-  
տիլ 'ի նոսս կարգ ինչ ըստ օրինակի դիմաց, զոր օրինակ,  
«Փրկելը ոչ է իմով զօրութեամբս, այլ քոյին խնամօքդ»

Լամբէրնի:

«Քո է բարեկարելը առ մեղ և առ նոսին.» Կարք:  
«Խոնարհելն նուաստին է անդ քան մեծին.» Լամբե:

Այս եղանակ բայի ձեւանայ յառաջին դիմաց սահմանականի ներկային՝ զտառադ մ' ի լ փոխարկելով, որդոն, Գործեմ. գործել, գործիմ, գործիլ. բանամ, բանալ. թողում, թողուլ. թողանիմ, թողանիլ. շահիմ, շահիլ. ևն:

Այլ գիտելի է, զի ՚ի հնումն սակաւ ուրեք ՚ի կիր առնուին զվերջտւորութեան էլ թէ ՚ի հասարակ բայս, թէ ՚ի ձայնակրականս, և թէ ՚ի կրաւորականս. մանաւանդ այնոցիկ որոց ներգործականի ներկայն յանդի ՚ի ամ և ՚ի ուժ. այլ ըստ վերջաւորութեան ներգործականացն ձեւացուցանեին զնոսին: Ուստի փոխանակ ասելոյ՝ ծագիլ, բառնիլ, լնանիլ, թողանիլ, զեղանիլ, ևն. ասէն, ծագել բառնալ, լուռլ, թողուլ, զեղուլ հերձուլ, առնուլ, որպէս երեխ յառաջիկայ օրինակադ:

«Ե ծագել ճշմարտութեանն պարտ է բառանալ ստուերին.» Անանիս:

«Յայնժմ ահաւոր նշանք լինիցին, պատառել վիմաց, հերձուլ վարագուրի, ևն.» Կանայ:

Եւ սակայն յորժամ հարկն պահանջէր, դնէին նաև վերջաւորութեամբս իւ զօ, «Չեմ արժանի կուլ և ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անսկիտան ապարան վարձկան.» Կարքեկ:

«Վաեսցուք զարդեխին յերեւելիս.» Լամբըրոն:

«Օինչ չարաչար կիրք մեղ քան զթշնամանելն և նշանանիլ անպատուել և անպատուիլ ատել և առել հարկանիլ, տրամեցուցանել և արդիլ, բամբասել և բամբասիլ.» Ասքի:

Պիտելի է ևս, զի այս եղանակ բայի որպէս յիշեցաք յառաջին մասին, իրեւ անուն հոլովի ընդ գետուն և եղակին և եթ. որդոն,

Աղղական.

Գաղթել.

Սեւ.

Գաղթելոյ.

Տրա.

Գաղթելոյ. ՚ի գաղթել, առ. ՚ի գաղթել.

Հայ.

ՀԳաղթել.

Բայ.

՚ի ՀԳաղթելոյ.

Պատր.	զԳառվելոյ.
Պար.	Գառվելով.
Պար.	զԳառվելով.
ԱԵՐ.	'ԻԳառվել՝ 'ի գովելս, 'ի գովելք, 'ի գովելն կամ ընդ գովելն:

Եւ այսպիսի հոլովեալքս թեշտայ+ կոչեն, այսինքն փոխանակ բայի. զի չեն յատկապէս բայ. որովհետեւ ոչ նշանակեն ընդ ժամանակաւ և դիմաւ, այլ ընդ մէջ բայի վարին. զօ, յասելն, «Ի խաղաղանալս իմում» ամբոխիմ». » «Եացեկ. գերբայս 'ի խաղաղանալս՝ իբր անուն հոլովեալ ներգոյական հոլովիւ եղեալ է իբր բայ. որպէս եթէ ասէր. յորժամ խաղաղիմ» ամբոխիմ:

Գիտել պարս է և զայս, զի 'ի հոլովիւ սոցա՝ բազում անգամ նախդիրն զօրութեամբ դնի 'ի տրականն. զօ,  
«Որ եկն կեցուցանել՝ ոչ կարաց անտես առնել.» փոխանակ առելյ, որ եկն 'ի կեցուցանել. Իդնապ:

«Քան զատեն և զյանդիմանեն՝ ողոքելն թուի թէ զօրաւորագոյն է՝ խոնարհեցուցանել զբիրս հոգին 'ի հնադանդութիւն.» այսինքն՝ առ. 'ի խոնարհեցուցանել.» Ապէջիւ:

Եւ երբեմն ես 'ի մէջ սոցա և 'ի մէջ նախդրին անկանի լնդիր սոցին. զօ, «Ի զերկրորդն խուզել զնախնին կորուսի,» փոխանակ ասելյ, 'ի խուզելն զերկրորդ՝ զնախնին կորուսի. «Եաց:

«Ոչ է ժամանակ յերկրագործութեան առ. 'ի զպարտմն հատուցանել.» փոխանակ ասելյ, առ. 'ի հատուցանել զպարտմն. «Եաց:

## ԳԼՈՒԽ ԻՇ.

Յաղագու Խոնարհմանց և Հուրդունեանց բայից և բայինց

Խոնարհմանք բայից են պէտք փոփոխութիւնք մի և նոյն բայի 'ի զանազան վերջաւորութիւնս, 'ի դէմս, և 'ի ժամանակս. թէ յեզականն և թէ 'ի յողնականն. որդոն, Գործեմ, զոնծես, զործէ. զործեմք, զործէք, զործեն. զործէի,

գործէիր, գործէր, գործէաք, գործէիք, գործէին. գործեցի, գործեցէր, ևն: Ըստ այսմ և յայլ ամենայն բայս:

Այսպիսի փոփոխութիւնք վասն այսորիկ կոչին խոնարհմունք բայից, զի սոքօք զիջանին և խոնարհին բայք առ այս կամ առ այն դէմն, առ այս կամ առ այն ժամանակս, ևն: Օք որպէս յանուանս պէտքէս փոփոխութիւնք մի և նոյն անուան կոչին հոլովք, վասն հոլովիլոյ և թաւալելոյ անուան յայնպիսի փոփոխութիւնս, տղնպէս և 'ի բայս պէտքէս փոփոխութիւնք մի և նոյն բայի՝ կոչին խոնարհմունք, վասն խոնարհելոյ և իջաննելոյ բային յայնպիսի այլայլութիւնս: Եւ այսպիսի խոնարհմունք բայից այնչափ են, որչափ փոփոխի մի և նոյն բայն 'ի զանազան դէմն և 'ի ժամանակս:

Խակ լծորդութիւնք ոչ են պէտքէս փոփոխութիւնք նոցա ըստ դիմաց և ըստ ժամանակաց, այլ որոշմունք նոցին ըստ զանազան վերջաւորութեանց սահմանականի ներկային. որպէս և հոլովմունք անուանց ոչ են պէտքէս փոփոխութիւնք մի և նոյն անուան, այլ որոշմունք նոցա ըստ զանազան վերջաւորութեանց սեռականացն և գործիականաց:

Արդ քանզի այսպիսի վերջաւորութիւնք սահմանականի ներկային են չորք, էմ, աճ, ուճ, իճ, լծորդութիւնք բայից ևս ասին չորք. Առաջինն լծեալ և յանգեալ 'ի էճ. Երկրորդն 'ի աճ. Երրորդն 'ի ուճ և Չորրորդն 'ի իճ. ընդ որով լծին ամենայն բայք և լծելով որոշին առ այս կամ առ այն տեսակ լծորդաւթեանց, ըստ որում եղաք յառաջին մասին. յորս պարտէ ուսանողին զգուշանալ, զի մի բռնադասեսցէ զամենայն բայուր և իցէ՝ յամենայն ժամանակս և 'ի դէմն խոնարհեցուցանել. մանաւանդ զայնոսիկ, որք են ընդ օրինակօք հապանեմին և նողումին:

Եւ ևս պարտէ զգուշանալ 'ի գործածութիւնս կրաւորական բայից, զի բաց 'ի յառաջին լծորդութեանց, որք են գրայժեմ և հապանեմ. և որ ընդ սոքօք, ոչ է արժան յաձախել զկրաւորականս այլոց լծորդութեանց. բայց եթէ զկատարեալն և զապառին եեթ: Վանաւանդ զի բազումք ես 'ի նոցանէ 'ի կրաւորականս պակասին. ըստ որում կարգեցաք յառաջին մասին: Եւ զորս եղաք ևս անդ, ոչ է պարտ նաև զնոսին վարել անխտիր. այլ ըստ տեղւոյն, ուր հարկն ստիպես.

ցէ, և կամ վայելչութիւն բանին պահանջեսցէ՝ 'ի բացատրութիւնս մեկնութեանց և մակացութեանց։ Այսմ քեզ յարացոյց առ զնախնիս մեր, որը միայն 'ի հարկաւոր տեղիս և ըստ պահանջելց բանին 'ի դործ ածէին զայսպիսիս։ որպէս է տեսանել յօրինակսդ որ զինի։ «Լուսանիմ, և նովին զաղըանամ։» Կարսեկացի։

«Ունենիւ լնանիմ և ոչ բժշկիմ։» Կարսեկացի։

«Ես խոնարհն առաւել պեղանի (շնորհը)։» Ապագի։

«Հոգի մարդոյ, որ ոչ բերէ պատուղ աստուածապաշտութեան . . . լքեալ լուղանի՝ 'ի պահպանութենէն Աստուծոյ։» Գուրգի։

«Որ էրն լինի, և ստացին սպացանի, և անտանելին տարեալ լինի։» Կարսեկացի։

«Օսոր օրինակ զօրեղ հանգերձ անկասկած լուսանացի . . . այսպէս է և անինչ անձն։» Ապագի հարց։

Խսկ եթէ կրաւորականապէս զնելն խորդ թուեսցի 'ի սոսա, մարթէ է կազմել զայն էական բայիւ. որպէս և նախնիք մեր առնէին. դո, Լուսացեալ լինիմ և ոչ պայծառանամ։» Կարսեկացի։

«Աստուածայինքն ամենայն հաւատովք իմացեալ լինին և ոչ քննութեամբ։» Իգիսարու։

Աւեալ լինի արծաթն 'ի չար ծառայից։ Մծեմ։

«Ասմա աստուծոյ 'ի հուր ընկեցեալ լինին։» Խոսունի։

«Դործ սինկլիսոսիդ է յոյժ այպանելի. զի առ դոսա 'ի քննութենէ մարդկան առեւեալ լինի աստուածութիւն։» Խոսրու։

Խսկ յաղագս բղլամանց ժամանակաց բայից և վասն կերպաւորելց գիմաց նոցին գիտելի է, զի սոքա են հետեւմունք խոնարհմանց բայից. իբր զի 'ի խոնարհիւ բայից յարմատոյ նոցին ծագին և հետեւին ժամանակը և գէմք նոցա. որդոն, Գուրգեմ, ես, է, եմք, էք, են, էի, էիր, էր, էաք, են։ Գուրգեցից, եսցես, եսցէ. եսցուք, են։ Զայսցանէ երկար զրէ հայրն մեր 'ի քերականութեան իւրում, ճան ի. գլւ եր։

## ԳԼՈՒԽԸ ԻՐԱ.

ՅԱՂԱՔԻ ՇՆՐԱՆԵԼՈՒՄԵԱՆ:

Թռէ զենև իցէ, և ժանի պարսագայտ նորա:

Ընդունելութիւն է մասն բանի, որ նշանակէ զիրն՝ ի յառանելութեան կամ՝ ի կրելութեան, և մերթ զառս կամ զիկիրս ընդ ժամանակաւ. որդոն, Այրօղ, այրեալ կամ այրեցեալ, այրելոց, այրելի: Օք այլողն նշանակէ զիրն յառնելութեան այրելոյ զայլս՝ ի ներկայ ժամանակի:

Եւ այրեցեան նշանակէ զիրն՝ ի կրելութեան այրման յանցեալ ժամանակի: Այնապէս և այրելոց իմասպէս նշանակէ զիրն՝ ի ներգործութեան այրելոյ յապայն, և այլելին՝ ի կրելութեան այրման յապառնին: Յորս որպէս երեի, ընդունելութիւնք ունելով զզօրութիւն անուան՝ ունին միանգամայն և զզօրութիւն բայի. զի են իբր անուն՝ ի բայից բղխեալ՝ ի ձեռն չըրից վերջաւորութեանց ու, եաւ լի, լու: Եւ միանգամայն ցուցանեն զայնպիսի առս և զիկիրս, զորպիսի նշանակեն բայքն, յորոց բղխեն:

Այս մասն բանի կոչի ընդունելութիւն վասն երկուց. «Կախ» զի ընդունի զզով և զանուն՝ ի յառից, կամ՝ ի կրից, յորս իրն նշանակի լինել, զի որ այրէ,՝ ի յայրելոյն առեալ զնշանակութիւն և զանուն այրող ասի. և որ այրի, յայրմանէ անտի այրեալ կամ այրեցեալ ասի. ըստ այսմ իման և վասն այլոցն: Երկրորդ՝ զի ունի զմանակցութիւն ընդ երկուց մասանց բանից, այսինքն ընդ անուանս և ընդ բայի և՝ ի նոցունց ընդունի զպարագայս. որպէս տեսցի այժմ:

Պարագայք ընդունելութեանց են վեց. այսինքն, Աեռ, ձեւ, տեսակ, ժամանակ, թիւ և հոլով: Աեռն, ձեւն, տեսակն և ժամանակն ըստ բայից, իսկ թիւն և հոլովն ըստ անուանց:

Աեռք ընդունելութեանց չըրք են, որպէս և բայից. «Կերգործական» փրկող, փրկեալ, փրկելոց: Արաւորական. զբկեալ կամ զբկեցեալ զբկելի կամ զբկելոց: Զեղոքական՝ ընթացող,

ընթացեալ, ընթանալոց. ընթանալի: Հասարակ՝ խօսող, խօսեալ կամ խօսեցեալ, խօսելոց, խօսելի:

Չեք ընդունելութեան են երեք: Պարզ՝ գործող, գործեալ: Բարդ՝ կենագործող, կենագործեալ: Բաղադրեալ՝ ներգործող, ներգործեալ:

Տեսակը ընդունելութեանց են երկու: “Ախսատիպ՝ հրնացող, հնչեալ: Ենցողական, հնչեցուցանող, հնչեցուցեալ: Ոմանք ըստ անուանց ես կազմեն տեսակ ընդունելութեան այսպէս. հնչողական հնչողութիւն, և այն. բայց այս կազմութիւն վերաբերի առ անուանս, զի այսպիսի բառք իր անուն վարին.

Ժամանակը ընդունելութեանց են երեք: “Երկայ. գրաւող: Ենցեալ. գրաւեալ: Եպառնի. գրաւելոց, գրաւելի: Ծիւր ընդունելութեանց են երկու: Եղական. ծագող, ծագեալ, ծագելի: Յոզնական. ծագողք, ծագեալք, ծագելիք:

Հոլովք ընդունելութեանց են տասն, որպէս և անուանց, զորմէ գիտելի է, զի որք՝ ի Էալ յանդին, հոլովին՝ որպէս գետ, գետոյ. զօ, զօրացեալ, զօրացելոյ. զօրացեալք, զօրացելոց, ևն: Եւ որք՝ ի վ յանդին, հոլովին՝ որպէս եկեղեցի, եկեղեցւոյ. զօ, զովիլի, զովիլոյ. զովիլիք, զովիլեաց: Խակ որ՝ ի լայ յանդին, ոչ հոլովին: Այլ որք՝ ի ու յանդին ըստ եղականին հոլովին որպէս Էան, Էանի. իսկ ըստ յոզնականին որպէս +աղաժիտ+, +աղաժիտոց+. զօ,

Առող.

Առողք.

Առողի.

Առողաց.

Առողի, ցառող.

Առողաց, ցառողս.

ՀԱռող.

ՀԱռողս.

ՀԱռողէ.

ՀԱռողաց.

ՀԱռողէ.

ՀԱռողաց.

Առողեւ.

Առողօք.

ՀԱռողեւ.

ՀԱռողօք.

ՀԱռող կամ յառողի.

ՀԱռողս.

ԽԱռող:

ԽԱռողք:

Բայց գիտելի է՝ զի առ նախնիս ոչ պահիւր Ճիշդ այս որոշումն, քանզի հանգիտութիւն ունելով հնչմանցս և և կամ ըստ հնոց առ, անխտիր դնեին ու կամ առդ, այսինքն

օղ, զի և « դնելով սուր հնչէին իրը օ. ըստ աւանդելոյ Երգնկացւոյն 'ի քերականութեան:

### ԳԼՈՒԽ ԵՊ.

Գիտելին էն՝ ի վերայ ընդունելու-ընեանց 'ի մասնաւոյն:

Ա ան ընդունելութեանց յանդելոց 'ի սու գիտելի է, զի 'ի կրաւորական բայից բնաւ ոչ ելանեն ընդունելութիւնք վերջաւորութեամբս սղ, այլ էաւ, վ և զա:

Եւ թէպէտ ուրեք ուրեք դնի եցող որդոն, Այրեցող, տանեցող, ևն, բայց այսոքիկ 'ի գործ ածին 'ի ներգործականը և 'ի չփոքականս. դօ,

«Օքոցն 'ի բարիլոն՝ (արար աստուած) մանկանցն ցօղ, և քաղգեացւոյն հուր այրեցող.» Ընորհ. նղն:

«Օօրէն դիւաց տանեցողք ամենասին.» Պիտոյից:

«Օրինակ բարեաց և գու լինիցիս հայեցողացն 'ի քեզ.»

Ասրդի.»

Խակ 'ի կրաւորական՝ փոխանակ սղի դնեմք եաւ. դօ, «Բաշալի ճգնութեամբ 'ի յերկրի նահատակեալ, և 'ի լերինս պատկեալ.» Ըսպ:

«Բայեր զաղսեալ դուռն դրախտին.» Եղեց:

«Չարչարեալք արիաբար ընդդէմ մահու չար իշխանին.»

Ըսպ:

Սոյնպէս իման և վասն էական բայիցս եղանէմ, լինէմ և էմ. զի 'ի սոսա ևս փոխանակ սղի միշտ եաւ դնի. որդոն, եղեալ, եղելոյ, և այլն. դօ,

«Օիմ այսպէս ստորաքարշ եղելոյս զաղօթս... ոչ արար անտես.» Լամբան:

«Օուղիսս փափկութեան քո տացես ըմպել արժանի եղելոյն.» Աժան:

Աստ այսամ և ընդունելութիւնք այնց չփոքական բայից, որք են ընդ օրինակաւ զարթիստմին, ոչ լինին սղ, այլ եաւ. դօ, «Եղեն որպէս երազք զարթուցելոց.» Ասդ:

«Մի կշամամբեր զշարթուցեալս.» Կարեկ:

«Տաց նմա ուտել 'ի մանանային թաքուցելոց.» Յայտ:

Այնպէս և ընդունելութիւն գայ բային հասարակօրէն ոչ  
զնի յանդիւս ով այլ եաւ զօ, «Օգուշացուք զինի եկեալըս.  
այսինքն՝ եկողքս. Խոսքն»:

«Յորմն վարել հրամայէ (արամ զնիւքար)՝ ի տեսիւ անցա-  
ւորաց և ամենայն եկելոց անդր.» Ես:

Թռէպէտ գուն ուրեք ով յանդիւս ևս գտանի եղեալ. զօ,  
«Գրով աւանդեցին զամենայն զինի եկողացս.» Ենոքն:

Ա ասն ընդունելութեանց՝ յանդելոց՝ ի եաւ դիտելի է, զի  
սոքա երբեմն իբրև բայ վարին, և երբեմն իբրև անուն. որ-  
պէս ունիմք ասել յերրորդ մասին. էւ ի՞ն:

Դարձեալ գիտելի է, զի սոքա երբեմն զնին փոխանակ ա-  
ներեւութիւն. զօ, «Ենպէս ուրախացեալք՝ ի սէրն Եստուծոյ՝  
մինչեւ չամարեալ զնիքեանս՝ ի մարմնի, այլ՝ յերկինս.» այ-  
սինքն՝ չամարել. Եղիշն:

«Ոչ ներքինք շարժեալ կարեն, (դր շարժել կարեն), և ոչ  
վերինք դրդուեցուցանեն.» Եղիշն:

Այլ պարտ է՝ ի գործածութենէ սոցա զգուշանալ:

Ա ասն ընդունելութեանց՝ որք յանդին՝ ի լոց գիտելի է,  
զի սոքա միշտ իբր բայ վարին, թէ՝ ի ներգործականս, թէ՝ ի  
կրաւորականս, և թէ՝ ի չեղոքականս:

Ի ներգործականս. զոր օրինակ, «Խնդրելոց է զվերժ յավըշ-  
տակութեանցն.» Գեղոքն:

Ի կրաւորականս. զօ, «Դատապարտելոց են, որք գիտեն տի-  
րապէս, թէ ոչ գիտեն, և ձեւանան, թէ գիտեն.» Ապղն:

Ի չեղոքականս. զօ, «Երդ զինչ արարից՝ մեղուցեալ ան-  
ձամբս, որ չեմ առջրելոց յահագին հրցն.» Ենոքն:

Բայց գիտելի է, զի յաճախ գործածութիւն այսպիսի ըն-  
դունելութեանց տպեղացուցանէ զկազմութիւն շարադրութեց,  
վասն որոյ բազում անզամ՝ ի տեղի սոցա զնեմք զբոյսդ՝ հան-  
դելքեաւ կամ ունիլ. և մերթ ևս՝ հասանէ. զօ,

«Եթէ հանդերձեալ էք Քրիստոսի լինել գործակից, պար-  
տիք և ձանապարհի նորին լինել հետեւող.» դր եթէ լինելոց  
էք գործակից Քրիստոսի. Ենոքն:

«Եւ եթէ անտես առնէ, ունի տոկոսեօք վճարել առաջի  
Քրիստոսի.» այսինքն՝ վճարելոց է. Ենոքն:

Գիտելի է ևս, զի ընդունելութիւնքս գալոց և լինելոց՝ ու-

րեք ուրեք նաև իբր անուն վարին՝ նախդրիւ միայն հոլովելով. կօ, «Եւ զգալոցն պատմեսցէ ձեզ.» Յակ. «Յազդմանէ հոգւոյն զլինելոցս նախատեսեալ. . . պատրաստէր.» Յակ. իմաստ:

**Վ**ասն ընդունելութեանց յանդելոց 'ի վ՝ զիտելի է, զի սոքա բղիսեն յամենայն կրաւորական և 'ի ձայնակրական և 'ի հասարակ բայից. և նշանակեն իբրեւ լինելի. որդոն, Պատմելի, հրաժարելի, գաւանելի, ևն:

Խսկ եթէ բղիսեցեն ևս 'ի ներգործականաց, ունին յոյնժամ զզօրութիւն ողի. կօ, «Գործն և դործելին առ հասարակ տան ջեսցին.» Իմաստ:

«Դառնացաւ ցքի ըմպելեաց.» այսինքն՝ ըմպողաց. Եսայ: «Խթան ընդդէմ աքացելեաց ոչ վնասի, այլ զոտս նոցա ծակոտէ.» այսինքն՝ խթան ընդդէմ աքացողաց ոչ վնասի. Գետրի: «Յարեաւ նախապատմելին.» այսինքն՝ նախապատմողն. որ է ասել՝ յարեաւ նա, որ յառաջն պատմէր՝ թէ յառնեմ. Ըստ:

Ոմանք յընդունելութեանց աստի զնին երբեմն ևս և փոխանակ ընդունելութեանց յանդելոց 'ի ետև, մանաւանդ ընդունելութիւնդ խնդրելի. կօ, «Խնդրե ջերմեռանդն արտասուօք զքաւութիւն, և առնու զինդրելին.» Յաճախ:

Գիտելի է ևս, զի այսպիսի ընդունելութիւնք բազում անգամ յարելով յէական բայս՝ վարին դրեթէ իբր դիմազուրկ բայ. կօ, «Անկարելի է. . . երկուց հակառակ տերանց ծառայալի և հաճոյանալ.» Ըստի:

## ԳԼՈՒԽ ԵՐ.

Յաղաժն Կայսերական:

«Սախագրութիւնն է մասն բանի; որ 'ի յարին յանուանն էս և յայլ մասունս բանի իբր յանուանս, ցուցանէ զպարագայս ինչ իբին, զոր անունն նշանակէ. կամ թէ յայտ առնէ զայն ինչ, որ շուրջ զերօք մտածի. զորս ըստ կարգի հոլովեց եդաք յառաջին մասին. Գլ. ԺՀ. Տես յընդարձակն Է. 25:

Այլ գիտելի է նախ՝ զի ոմանք 'ի նոցանէ երբեմն առնուն զկրին ինդիր 'ի միասին. և ոմանք զայլ փախանակ բուն ինդրոյ իւրեանց. որպէս է տեսանել 'ի յետազայտ:

«Յախագրութիւնքս մինչ, մինչ, երբեմն առնուն միանգամայն զբացառական և զնախղիւտ տրականն է զօ,

«Ի դաւթէ մինչ՝ ի մը իստոս հազար ամ է.» Ա արդան:

«Ի մերոյն այսից մինչ ցթագաւորելն Ա աղարշակայ գտանին ամք ոջձը.» Յակ. կան:

«Յախագրութիւնքս յառաջ տան, յեպոյ տան, 'ի վեց տան, ևն, առնուն միանգամայն զհայցական և զգործիական. զօ,

«Դատանեմք զժամանակս կրիւսոին երկերիւր ամաւ յառաջ տան զնեկրտանեբայ (ժամանակն).» Խոր:

«Դնն հարիւր ամաւ յեպոյ տան զըբրահամ շինեցաւ Աիսն՝ ի դաւթայ.» Ա արդան:

«Յախագրութիւնքս՝ հերթ, 'ի բացեայ, միուսոի, առնուն երբեմն զբացառական և զգործիական, մանաւանդ՝ ի վարին հական բայիւր, որպէս և նախագրութիւնքս, մըն, օսո, հուս, առնուն երբեմն զտրական և զգործիական. զօ,

«Թաղեցին պատուով՝ ի մեջ պողոտային՝ չորս ասպարիսաւ հերթ՝ ի քաղաքէն.» Յայոնաս:

«Եր այր նորա 'ի բացեայ 'ի մենջ ասպարիսօք հինգ.» Ա արդ հորը:

«Մ'ըն եր գեղն յերտւասաղէմ մղոնաւ երեք.» Ա ամբէրթ:

«Դարձեալ նախագրութիւնքս մըն, օսո, հուս, երբեմն հանդերձ նախղիւտ առ առնուն զինքրջահոլով տրական. զօ, «Ա'ըն առ նմին հանգուցեալ.» Երնկանցի:

«Ա օս առ Սատուծոյ կացոյց (զշողեղէն բնութիւնա).» Ա արդ:

«Հուսու առ նմին տեսանեք և զնա եկեալ յերինից.» Խժնասու:

«Դիտելի է երկրորդ, զի գտանին և ևս նախագրութիւնքինչ զնչ, զորս մեք ոչ եղաք յառաջին մասին. վասն զի առ նախնիս մեք հազիւ ուրեք երեխն նորին, և կամ յօտանաւոր բանս միայն. որպիսի են սոքա. Ասոյ, Ասոյ, ակս, հետ, զընի, ևն:

«Դիտելի է երրորդ, զի երբեմն ոմանիք՝ ի մակրայից ևս իւլնդիր առեալ վարին իրբե զնախագրութիւն. զօ,

«Փրկեաց զժողովուրդդ՝ ի ներփոսոս ձեռին եղիպացւոց.» Ելիս:

«Հուսու յեպոյ ամենեցուն զայ՝ ի կութս (որթ).» Պիտոյից:

«Լու՝ ի լու ամենայն ժողովրդեանն ասէ ցաշակերտն.» Պ ուսէ:

«Խոստովանին լերուք ... զանիոսու՝ ի լսողաց.» Ա արդ:

«Ի նմանէ և անդը շինեաց աշտարակս.» Խորեն:

Երբեմն ևս ածական անուանք ինչ խնդիր առեալ՝ վարին իբր նախադրութիւն։ ղօ, «Որ սիրէ զԱստուած, նման նմին սիրէ զամենայն մարդոյ զկեալն։» Խոսքով։

«Հանգոյն իժի և քարբի խցեալ զլսելիս։» Ընողի։

«Եղաղակեցին և երկու ծերքն իջ նմին։» Գան։

«Ոչինչ շնորհապ յայսմ պատուց տայ Ամբատայ։» Խոսք։

«Օչին ընդ հրամանին և գործն վճարեալ լինէր։» Խան։

«Խաւան ընդ նոսաս . . . սկսանի նուագել։» Յովհ։ իմաստ։

Գիտելի է չորրորդ, զի նախադրութիւնք թէպէտ հասարակօրէն յառաջոյ դասին խնդրոյ խրեանց, ըստ որոյ և կոչին նախադրութիւնք, բայց բազում անգամ ևս յետոյ դնին։ ղօ, Զարին զինի միտեցայ։» Կարեկ։

«Օդատախաղն՝ դատաւորին հանդէալ կացուցի։» Կար։

«Ենմարթ էր զարբութիւնն շանց առաջի արկանել։» Լամբ։

Եւ երբեմն ևս՝ ընդ մէջ նախադրութեան և խնդրոյն անկանի այլ մասն բանի, այսինքն՝ կամ բայց, կամ խնդիր խընդրոյն, և կամ այլ ինչ։ ղօ, «Օխաչ առաքինութեան բարձին և զինի զնացին քրիստոսի։» այսինքն՝ զնացին զինի քրիստոսի։ Յովհ։

«Ուզիւ չարի՝ ի վերայ խրոխտայր հասուցանել արքայի։» այսինքն՝ ի վերայ արքայի հասուցանել. Յովհ. կան։

«Օաղքատն վասն զցնցոտին զգենլոյ անպատուեք։» այսինքն՝ վասն զգենլոյ զցնցոտին. Սարգիս։

Գիտելի է հինգերորդ, զի յայնպիսի նախադրութիւնս, որը ունին զնախդիր, որպիսի են, զինի, զինի, յաղադու, ևն, երբեմն կրինի նախդիրն նաև՝ ի վերայ խնդրոյ նոցա. ղօ, «Օմիմեանց զինի անշետ՝ ի վերայ գային։» Խոսք։

«Յամենայն ժամ զբարեաց զինի երթայք։» Ա. Աւա։

«Մի ինչ պատճառս տալ հակառակորդին՝ ի հայհոյութեան յաղադու։» Ա. Տիգ։

Խակ երբեմն զնի միայն՝ ի վերայ խնդրոյ նոցին. ղօ,

«Օմիմեանց ինի կարգեալ առղեսցին։» Սարգիս։

«Օնորին անպիսանութեանն վարեցաւ հետո.» Պիտոյեց։

«Եւ ինքն՝ ի ծշմարտութեան վերայ չե հասեալ.» Եղիշե։

«Ի պատիրանազանցութեանն ստիս դարձաւ առ փչողն։»

Մամեդ։

Երբեմն ես՝ ուր պիտոյ է կրկնիլ նախադրութեան՝ նախ-  
դիր միայն կրկնի՝ ի տեղի նորա. կօ,

«Երժ պհեա արդարութեան, զաստուածպաշտութեան, զհա-  
ւատոց, պիրոյ, զհամբերութեան, զհեղութեան.» և. Տիմ:

Յորս զօրութեամբ կրկնի նախադրութիւնս պհեա + որպէս  
թէ ասէր. Երժ զհետ արդարութեան, զհետ աստուած-  
պաշտութեան, զհետ հաւատոց, և այլն:

«Ա էրս՝ ի վլրայ վիրաց՝ և ցաւս ՚ի ցաւոց յաւելուն.» այսինքն՝  
ցաւս ՚ի վլրայ ցաւոց. Ընորհալի:

«Ենիրեցի զօրութիւն Աստուծոյ կարով՝ ՚ի մշկ ձեր, որպէս  
յերից մանկանցն.» այսինքն՝ որպէս ՚ի միջի երից մանկանցն.  
Ճառընդ:

«Հանիր զգիշերն՝ ՚ի գլուխ յաղօթնն Աստուծոյ՝ ոչ յեր ակտոս,  
այլ՝ ՚ի մերն.» այսինքն՝ ՚ի մեր պէտս. Լամճ:

Վ Ասմ խնդրառութեան նախադրութեանցս, Իբրև, իբր,  
իբրու, սրակ, ժամանակ:

Ազքա թէպէտ հասարակօրէն առնուն զինդիր՝ ՚ի հայցական  
հոլովն, բայց բազում անգամ և ըստ պահանջման բանին և. ՚ի  
զօրութենէ բային պէսպէս խնդիրս առնուն՝ գրեթէ յամենայն  
հոլովն, յուղղականն, ՚ի սեռականն, ևն:

Յուղղականն. կօ, «Իբրև այլազգիր և այլալեզուք տանիմք  
և բերեմք (բամբասանոք) զմիմեանս.» Յուղն. իմաստ:

«Որպէս վտանգաւորք ողորմութիւն հայցեսցուք.» Խոսքով:  
Խ սեռականն. կօ, «Իբրև օձի զմոյնս՝ ՚ի բաց եղեալ դեսպանս  
առ իշխանն ատոմ առաքէր.» Յուղն. իմն:

«Եղիցի միատարի խաղաղութիւն՝ ՚ի մեջ մեր՝ սրպէս հօր  
հարազատի և որդւոյ սիրելոյ.» Յուղն. իմն:

«Մարթ էր զայդ իւղ վաճառել աւելի ժան երեքհարիւր  
դաշնեկանի.» Մարթ:

Խ վերջուով տրականն. կօ, «Իբրև անմահից հատուցանէ  
մեղ զվարձս վաստակոց մերոց.» Խողելի:

«Ոմինդրութիւն և հպատակութիւն (մատուցի քահանայի)  
սրպէս հրեշտակի Աստուծոյ.» Խոսքով:

«Մեղ արդարեւ՝ ՚ի գէպ է երից մանկանցն երդ առ Աստուած  
ժան խրայէլեան տոհմին յայնժամ.» Ընորհ:

Ի նախդրիւ տրականն. զօ, «Զգէ զբանն առ Պետրոս՝ իշվե՝ ի գլուխ աշակերտացին.» Իժնապ:

«Որդէս յաստուածային մեղան՝ ի սոյն մերձենոյ.» Ապահ. աղապ:

«Փափաքէ՝ ի մահ ժան՝ ի կեանս.» Եղիշէ:

Ի հայցականն. զօ, «Մի ոք աստանօր անուսումն զմեզ համարեալ բամբասիցէ իշվ զանվարժու.» Խորին:

«Որդէս զմուերիմ ծառայս պատիւ ընդունիցիք յերկնաւոր թագաւորէն.» Ծնորի:

«Չիք ինչ զգուշաւոր ամրութիւն ժան զերկիւզն Աստուծոյ.» Խորին:

Սոքա երբեմն զօրութեամբ ունին զհայցականն. և ներգործութեամբ զյատկացուցիչ նորա. զօ, «Ո՛չ իշվե զմահկանացուի համարի զմահս մեր.» այսինքն՝ ոչ իրրե զմահս մահկանացուի համարի զմահս մեր. Եղիշէ:

«Բանք ձեր ոչ լինիցին անհամ և անաղ, որդէս զուամլայ.» այսինքն՝ որպէս զբանս ուամլայ. Ծնորի:

«Բարձր է ծառայութեանն պատիւ ժան զառաքելութեան.» այսինքն՝ քան զպատիւ առաքելութեան. Ապահ:

Ի բացառականն զօ, «Ի բարկութենէն և ի նորին չարութենէն իշվե՝ ի կատաղի զաղանէ զերեսս՝ ի բաց դարձուսցուք.» Ապահ:

«Գրեալ ես երկնչել՝ ի կեղծաւութենէ որդէս յանհաւատառութենէ.» Ծնորիալ:

«Են որ ժանտի կենացն վրիպել՝ յաստեացս զարհուրին.» այսինքն՝ են որք զարհուրին վրիպիլ յաստեացս՝ քան յանտի կենացն. Իժնապ:

Ի պատմականն. զօ, «Ոչ ասէ զաւակայ՝ իշվե զբազմայ, այլ իբրեւ զմիոյ.» Գաղ:

«Օհօրէն իւրմէ որդէս զմարդոյ ումեքէ պատմէ.» Արէն. պար:

«Աշխարհ է առաւել հոգալ զմարմնոյ ժան զհողւոյ.» Ապահ. հարց:

Ի գործիականն. զօ, «Ա երակացուք մարդկան ունին բանիւ կակըլ զիստութիւն մասց՝ իշվե բրջու.» Իժնապիս:

«Են որ բանիւք իւրեանց խոցոտեն որդէս սրով. բայց լրզուք իմաստոց բժշկեն.» Ապահ:

«Օթու չունս վայրենիս և զզազանս սիրով ուն բռնութեամբ սպար են մարդիկ վարժել .» Ընոցի:

Ի պարաւականն . զօ , «Ի՞շլ զփեսայիւ էարկ զինե ըդ վականն .» Առև ընծայ:

«Խսկ երկրորդն անհմուտ գոլով ծիծաղի զնովաւ որպէս զանս մուտ .» Առճի:

«Բան զբազմօք առաւելեալ մեծապէս 'ի փառս .» Ասհակ իսլի:

Ի ներգոյականն . զօ , «Տատանեալ հողիս 'ի յայսմ աշեարհի՝ մարմնոյս շինուածով իբր 'ի նաւակի .» Ասրէի:

«Օի ցորչափ արտաքոյ կամացն աստուծոյ լինի մերս ոգի , որպէս 'ի ծովու ալէկոծիմք .» Ասորով:

«Որքան խաղաղութիւն է 'ի տունս շինականաց՝ և անհոգութիւն , ուն 'ի տունս թագաւորաց .» Ասրդ:

«Սախագրութեամբ . զօ , «Օանձն իւր եղ 'ի վերայ ձեր իբրև 'ի վերայ սիրելեաց .» Ասրդ . առ պէտք . ի :

«Ապեալ են ամենայն ուրեք ազգ մեր յաղքատութեան որպէս ընդ երկաթոյ 'ի ներքոյ լծոյ ծառայութեան .» Ընոցի:

«Ենէծք ցաւագինք վասն այլ մեղաց ոչ ևս շարժին 'ի մէջ եկեղեցւոյ , քան յաղագս գողութեան .» Ասյնի:

## ԳԼՈՒԽ ԻԵ .

### ՅԱՂԱՔԻ ՄԱԿՀԱՅԻ :

Մակրայն է մասն բանի , որ զպարագայս կամ զեղանակս զործողութեանց նշանակէ . զի եղեալ մակ բայից , այսինքն 'ի վերայ բայից՝ ցուցանէ զգէսպէս եղանակաւ կատարին գործողութեանց . և զի այս պէսպիսութիւն կարէ մատածիլ երեսուն և երեք օրինակաւ ըստ պէսպիսութեան նշանակութեան իւրեանց . Տես յընդարձակն . առ . 19 . և ը , 26 : Յայն սակս երեսներեք տեսակք մակրայից թուլին . Արակական , քանակական , ժամանակական , տեղական ևն , որպէս եղաք յառաջին մասին :

Այլ գիտելի է նաև , զի մակրայից ոմանք են բնականք , որպէս , Այժմ , աստ , անդ , գեռ , մերժ , երբ , միշտ , հիմ , այր , ոչ , ուր , և այլն :

Խոկ ոմանք, մանաւանդ թէ բազումք՝ կաղմին յանուանց, ևս և յայլ մասանց բանի՝ ի ձեռն պէսպէս վերջաւորութեանց կամ մասնկանց, որգոն, Առիւծաբար, մեծապէս, ինձեն, հայեցին, ուժգնապէս, նշանացի, ինքնին, բիւրից, այլուստ, ևն:

Գիտելի է երկրորդ, զի մակրայք՝ երբեմն նախագասին բայից, դո, «Մէջ ուսանիմ, և Երբէտ՝ ի գիտութիւն ճըշմարտութեան ոչ հասանեմ . . . ոռող ինչ քաջալերիմ, և առանելուալին լքանիմ.» Ասպէի:

Խոկ երբեմն յետագասին. դո, «Ացորդակիր լեր բժիշտուալին, և մի՝ ի խոյդ ընտրութեան կոչեր դադասորաբար.» Ասպէի:

Եշ երբեմն ևս ընդ մէջ մակրայի և բայի այլ բան անկանի. և կամ այլ մասն բանի. դո, Յուրժամ որ այժմն բանապաճոյք խրոխաճայն՝ սիգացող՝ բարձրապարանց, անկետը դնէմ դի անկենդան.» Ասպէի:

«Եշ դու մ' զանբանիցն կենդանութիւն ինձ՝ ի դէմն բերեց.»

Ասպէի:

Գիտելի է երրորդ, զի մակրայք անդամ երկու կամ երեք՝ ի միասին դնին: Երկու նովինն տեսակաւ. դո, «Օմարդոյ բարին ընդ աստուծոյ բարւոյ համեմատել արտարև ըստուգալու ըստալու ըստ գտանի.» Ասպէի:

Երբեմն ևս այլւայլ տեսակօք. դո, «Ահաւանին արդարապէս կանխեցաք ասացաք, իբրու պարանաւ յինքեանս ձգել զմեզս.» Ասպէի:

Եշ երբեմն ևս մի և նոյն մակրայն կրկնելով դնի առ. ի յաճախականապէս նշանակել. զոր օրինակ, «Մեծացաւ այլն յոյժ յոյժ.» այսինքն՝ կարի յոյժ. «Օհնովոյ:

«Այս այս և ես մի եմ՝ ի նոցանէ.» Ասպէի:

«Առեղ առեղ զմարտ հինին՝ ի վերայ հեղութիւն.» Յովի. կան:

Ըստ այսմ լինի երբեմն և բացասական մակրայս՝ ոչ կըրկնելով՝ ի սկզբան և՝ ի վերջոյ. դո, «Եշ ոչ մի ինչ առանց շնորհացն աստուծոյ՝ ի գլուխ ոչ ելանէ,» այսինքն՝ և ոչ մի ինչ բնաւ. Ասպէի:

Գիտելի է չորրորդ, զի մակրայք ոչ միայն դնին՝ ի վերայ բայից, այլւ՝ ի վերայ ընդունելութեան. զոր օրինակ, «Ամենից տիրող հաւասարապէս.» Ասպէի:

«Եղեւ վերստին ծնող մարդկութեանս.» Գագ. լուս:

«Անձառելի դրախտին աստին տեսող.» Ի շար. ին:

«Մեծ է փառք քահանայութեան յարժանապէս ունողն.» Լամբ:

Երբեմն՝ ի վերայ բայանու անց ևս. դօ, «Լոեցոյց զմոլեզ-նաբար գոչումն.» Եղիշե:

«Անասնաբար բահեցմամբ... ընդ երկիր մածաք.» Կապ:

«Վերստին առումն բանին՝ դշաւատարմութիւն իրացն ցուցանէ.» Ապրիլ:

Երբեմն ևս դնին՝ ի վերայ այնպիսի ածականաց, որք ու-նին զհաղորդութիւն ընդ բայից. դօ, «Կայեա վերստին՝ ի բնութեանս կերպարան՝ միշտ սիսալական.» Կապ:

«Բատ հոգւոյ՝ ամենելին անշարժք՝ ի բարիս.» Շնորհ. ընդի:

«Հեղցես զաղըիւրաբար առատաբուղին զշնորհս.» Մաշտոց:

Աւր աղբերաբարն է մակրայ՝ ածական անուանդ առատաբուղին:

Երբեմն ևս դնին յայսպիսի բանս, յորս զօրութեամբ կայ բայն. դօ, «Եյօր ՚ի կառս, վաղիւն՝ ի դադաղս.» այսին-քըն՝ այսօր նատեալ կայ՝ ի կառս, և այլն. Լամբ:

«Եթէ կանոնն թիւր իցէ, քանի՞ մանաւանդ, ոյք ուղղեն նովաւ.» Ապրիլ:

«Դակ արդ չար արժան է ասել թագաւորին, քան՝ ես ոչ ասեմ.» Եղիշե:

Գիտելի է հինգերորդ, զի մակրայք ինչ ածական լինին գոյականաց, և իբր ածական վարին. դօ,

«Օաստի կենցաղս գիշեր կոչեաց առաքեալն.» Խոսքով: Աւր աստին լեալ է ածական՝ անուանս կենցաղ:

«Չար է նախանձ, ՚ի կար յանդգնութիւնս ածէ.» Խժնադ:

«Յայնեցին որդւոց մարդկան պշածիալէս խորհուրդ.» Շնորհ:

Եւ ևս երբեմն նախդիրք ինդրոյն դնին՝ ի վերայ մակ-րայից. դօ, «Բարեպաշտ արքայն կոստանդիանոս զայտը անդր տարբերեալ տուն հաւատոյ... անխախտելի ամրութեամբ պնդեալ հաստատեաց.» Լամբ:

«Օայլուր եղեալն... առաջի աչաց աեսանէր.» Առալ:

«Գայր առ նա ապա և մեծ իշխանն Արաց Սարներաէս՝ ՚ի ցաւականը վշտակցութիւն.» Յոհան. կալ:

Գիտելի է վեցերորդ, զի բազում անուանք ածականք եր-

բեմն իրեն զմակբայ վարին, դո, «Ես ծաղկեաց զարունն հաւատոյ .» Ընդհիք:

«Եթէ նոքա (ոյսինքն առաջնորդք), ուղիղ գնան, հետեւ եալըն անխառապ ճանապարհորդեն .» Լամբըն:

«Բազ միտ դիր աղաչեմ .» Առաջըն:

«Առա ձեանամ և իրօք խոտորիմ .» Եսր. համ:

Այս կիրառութիւն յաճախ է 'ի բարդ ածականս . դո,

«Պարսկէն կացջեր առաջի աւանդողին ձեղ զտաղանդ պատուիրանին .» Ընդհալիք:

«Օմեղ ինքեանս բոլորապատուալ ընծայել ասոուծոյ .» Առաջ:

«Երաժառաւիւն ելանել 'ի կամարս լուսեղինս .» Առաջոց:

Սոյնպէս և ածական անուանք, որք ունին զբաղագրական մասնիկս ան, կամ զբաղատական մասնիկս գոյն, բազում անգամ վարին իրեն զմակբայ . դո, «Անայիստ կարող եմք գնալ ընդ ճանապահ կենցաղոյս 'ի յերկինս .» Լամբ:

«Անձաս նաւեցիք, և հասիք առ Վրիստոս .» Ըսր:

«Գերադոյն գոչ փող Գարրիկեան .» Ըսր:

«Որք կանքագոյն զաստուածեղին բանն ընկալան, կատարելագոյն են և առաջինք .» Առաջըն:

Երբեմն ևս անուանք ինչ ածականք ունելով 'ի վերջոյ ըդյուղս «կամ զբարդ ին», իրը մակբայ վարին . դո,

«Ճաղումն առաքինանամք .» Խոսքով:

«Անբարտաւան « և բարձրայօնս փքայր .» Յով. կան:

«Գեղեցիկ ին անդ կարգելով .» Խոսք:

«Որ սքանչելի ին դիպեալ եղել ըստ գործոյն և անունն .» Եսոյն:

Գիտելի է եօթներորդ, զի երբեմն անուանք ինչ, թէ ածականք և թէ գոյականք հոլովմամբ իւիք իրը մակբայ վարին . դո, «Մինչ կենդանեօտս խօսիմ, մեռեալ եմ անհասիդ .» Եսր. իդ:

«Յանդարբասադից եկեալ սրտարեկ առներ .» Գերըն:

«Յանիսիքս հայեցեալ յանդելու տեսաներ .» Կուլ:

«Անմիան առ օքին յայտնէ դբարկութիւն իւր .» Առասի:

«Խափանեսցի առ աշք կարծելն .» Ընդհիք:

«Օինչ վեճէիք զանապարհայն .» Առաջի:

Եւ երբեմն ևս մի և նոյն անունն կրինելով իրեն մակբայ

վարի. կօ, «Կամբեցաւ պատերազմն, և մատեան ճակարդ առաջականությունը» լսոր:

«Ուստի առաջականությունը մատուցեալ՝ միապետել ջանայլը.» Յանձնականությունը կամ:

«Բներան ՚ի բներան զմիմեանս համբուրեն.» Անձնությունը:

«Օք ըստ օրէ յաւելուած լեցի ՚ի լաւութեանն.» Յանձնականությունը:

«Տօնէ խորայէլ ամ յամեն պենտակոստէ առ ձայնեալ.» Լսոր:

Հայրը:

«Եմ ամի առնուին զքահանայութեանն պատիւ.» Եւանձնայ:

«Գրայն ՚ի գոյացի կային յօրէնսն առաջինն.» Ֆ. Մահիկ:

Եւ ևս երբեմն այլ և այլ անուանք և կամ նուև այլ մասունք բանի ՚ի միասին եկեալ՝ իբրև մակրայ դնին. զոր օրինակ. «Մեծ ամուրդ այդ հիմն ՚ի վեր տապալեցաւ.» Երշելէ:

«Եւ յեղան մեղքէր զամուր գլխանոցն.» Յանձնականությունը:

«Եւ յեղան պատրաստ տեսանեմք զգործն բանիցս վկայ.» Լամբի:

«Յան և ցիր սիռեալ ընդ գլուխս կոհակացն.» Յանձնականությունը:

«Բանզի ողորմութիւն է, որ բարձր ՚ի գլուխ պարծի առ դատաստանաւան.» Ընողի:

«Առչելոյ հրաման տայր յականէ յանուանի.» Երշելէ:

«Եւ այսպէս սոքա (այսինքն սելեկիոս և անտիոքոս) թագաւորեալ ընդ կոտր և ընդ շատ իբրև ամս է, ապա ապրատամբին պարթեք ՚ի Մակեդոնացւոց.» Յանձնականությունը:

Գիտելի է ութերորդ, զի ցուցական դերանուանքս առյն, առյն, նոյն, յարեալ յանունդ օքինակ վարին ընդ նմա իբրև մակրայ, ունելով երբեմն զնախդիրդ ո. կօ, «Օսոյն օքինակ և ծերունին այն («Եոյ») յայնժամ ՚ի սուդ տրամութեան վտանգեալ էր.» Ուիշել:

«Դոյն օքինակ և Յոյնք . . . ունին զիբաւումս.» Յանձնականությունը:

«Եոյն օքինակ և ՚ի Տեառնէ են ամենայն պահպանութիւնք.» Եգանի:

Եգանի:

«Մի ևս ձեզ պնոյն օքինակ գնալ.» Երշել:

Ըստ այսմ ձեանայ և ցուցական դերանունդ այս. կօ,

«Եւ նա զայս օքինակ փոխեցաւ յաշխարհէ.» Ֆ. Մահիկ:

«Եւ էր պատճէն հրովարտակին օքինակ զայս.» Եգանի:

Դարձեալ և բայս է, վարի երբեմն իբրև ժամանակական և աեղական մակրայ ընդ բառիցս առբեժ, առը, զի, ար.

զոր օրինակ, «Ե՞ս ուղեւ ուր բանիւ վճարէ... և է զի ձեռքն դնե՞» այսինքն ուրիեք ուրիեք, կամ երբեմն. Իգնատի: «Ե՞ս ուղեւ զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է զի նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է՝ ո՞ր յաղթող գտեալ եմք և ոչ յաղթեալք.» Երկին:

Գիտելի է իններորդ, զի մակրայքս Աստի, այտի, անտի, աստի, այսը, այտը, անտը, դնին երբեմն փոխանակ ցուցական դերանուանց. ղօ, «Եւ են կրկին կարօտ 'ի տարաբնակ լինել 'ի բնակութենէ աստի» այսինքն՝ յայսմ բնակութենէ.

Յովի. կա՞:

«Բայց արդ դարձ 'ի բարկութենէ այտի.» Եսյնն:

«Անյոյս եղեն... 'ի մեծութենէ անտի, որ արդարոցն պահեալ կան յերկինս.» Իգնատի:

«Յաշարհի աստ նեղութիւն ունիցիք.» Յովի:

«Յիսուս գնաց 'ի գերեզման անտը, ուր եղեալ էր Դավար.» Մամեդիկ:

Երբեմն ևս դնին 'ի տեղի դիմորոշական տառից. ղօ,

«Դղոգեալ սասանեցաւ ողորմելի աշխարհս մեր 'ի մերոց աստի.» այսինքն՝ 'ի մերոցս. Յովի. կա՞:

«Եհա ըղձալի համարիմ ասել աստանօր 'ի քոյոց այտի, զոր ընդ իմ կրեցեր աստուած բոլորից.» Եսը:

«Ոչինչ կարաց շարժել զնոսա 'ի անտի աստուծոյ.» Մարդի:

«Վաղվաղակի փոփոխեալ գտայց 'ի լաւ անդը.» Եսը:

Եւ երբեմն ևս դնին իբր զարդ. ղօ, «Աեցցեմ 'ի հիւանդութենէ աստի իմին յայսմանէ.» ղօ. Օճախ:

«Ելաներոց էք 'ի մարմնոց այտի.» Մամեդիկ.

«Ուք 'ի լցոս անդ են՝ ցնծան, և որք 'ի խաւարի անդ են, յոդոց հանեն.» Մամեդի:

«Առ իւրսն անդը եկն, և իւրքն զնա ոչ ընկալան.» Եսյնն:

## ԳԼՈՒԽ Ի.Օ.

Յաղագիւարի:

Կաղկապն է մասն մասն բանի, որ յարէ և միաւորէ ընդ միմեանս զայլ մասունս բանի, նա և զնոյնն իսկ զբանս. և

բաժանի 'ի զանազան տեսակս. որք ևն՝ բաղդիւսական, տրոհական, ևն. որպէս կարգաւ եղաք յառաջին մասին. տես և յընդարձակն. թ. 27:

Այլ գիտելի է, զի երբեմն վասն վայելչութեան բանին զօրութեամբ դնին շաղկապք ինչ. որպիսի են հասարակօրէն սոքա. Բայց, ասկայն, այլ վասն այնորին, ևն: Յորժամ յառաջոյ սոցա դնին շաղկապքդ նեղեա, վասն զի, ևն, զօ, «թէպէտ փակեաց և կնքեաց զդրունա եկեղեցեաց ընդ ամենայն աշխարհն պարսից, (բայց) նոքա զամենայն տուն եկեղեցի արարին.» Երկշ:

«Ա ասն զի ոչ կացաք յուխտի տեառն, (վասն այսորին) անփոյթ արար զմեզ.» Յան. կան:

Խոկ երբեմն ներհակ այսմ շաղկապս և իբր յաւելորդս դնի 'ի դրագէմ բանս և 'ի դերբայաւորս. զօ, «Առ երկիւղի անկանելոյն զարհուրեալ և թմրեսցի.» Ապդ. ուր ևն ամենեին թարմատար դնի:

«Ո՛վ ոք լսելով զարժանի ողբոց բանքս և ոչ բեկանի սիրան.» Ապդի:

«Ի յընթանալս իմում և կասիմ... 'ի յաթոռս ծերոց բաղմեալ և խելայեղից կցորդիմ.» Կար: Այլ գարս է զդուշանալ յայսպիսի ոճոյ:

Գիտելի է դարձեալ, զի շաղկապս իսկ երբեմն միայն առ 'ի զարդ դնի 'ի բանս. զօ, «Ինքն իսկ է ամենայն յամենայնի աղբիւր բարեաց.» Յանակ:

«Օքոլոր իսկ զՅոյնս ոչ դանդաղիմ մայր կամ դայեակ ասել իմաստից.» Խոս:

«Քանզի արդարեւ գիտակ իսկ ես, թէ չար է արարն, և ընդարդյա չարութիւնն մեր.» Կարեկ. տես յընդարձակն:

## ԳԼՈՒԽ ԴՀ.

### Յաղագի Ականչիւսան:

«Ի վերայ միջարկութեան ևս սակաւ ինչ ունիսք խօսիլ. զի սակաւ է և գործածութիւն սոքա. և զորս եղաք յառաջին մասին, այն բաւական է:

**Օ**սա ոմանք ընդ մակրայս դասեն, բայց ոչ երեխ այս ուղիղ, զի մակրայն ցուցանէ զպարագայս գործողութեանցն, իսկ միջարկութիւնն 'ի միջի արկեալ 'ի բանս՝ յայտ առնէ զընականն կիրա հոգւոյն, որպիսի են կիրք ուրախութեան, տրումութեան, ցաւոց, երկիւղի, ևն: «Քանզի յասելն, «Բայց, որչափի է որովայնամոլութեան բոնաւորութիւն» Ոսկ. միջարկութիւնս բայց ոչ ցուցանէ զպարագայս գործողութեանցն, այլ զիրա հոգւոյն պատճառեալ 'ի զարմանալոյն 'ի վերայ բրոնութեան որովայնամոլութեան: Եւ յասելն, Հաղպա՝ որովօրինակաւ զի՞նչ կամիս առնել կատարեամ» Երջիշ. միջարկութիւնս հաղպա՝ յայտ առնէ զիրա եռանդեան հոգւոյն առ ընդունելութիւն իրիք: Եւ յասելն» Ո՞վ, զիարդ միանդամ վճիռ եհատ, և զեղկելի ձայնն արձակեաց» Ուարդ. «Յն ցուցանէ զիրա զարհուրանաց ընդ ահադին վճիռն: Ըստ այսմ իմա և զայլոց:

**Ա**յլ գիտելի է նախ, զի միջարկութիւնք երբեմն յարին յանուանս նշանակիչ այնց՝ յորոց վերայ է կիրք հոգւոյն. դո, «Ո՞վ սքանչելեաց, գործ՝ առ որ տկարանայ բոնութիւն թագաւորաց» Լամբ:

«Բայց անոխակալութեանն (Քրիստոսի), չեւ ես յանդիմանէր զմաննիչն, այլ ստուեր արկեալ ծածկէր զիլն» Ոսկ: «Ո՞վ ախտացելումն յախտէ, որ խոցի և ոչ ընդուսանու» Շնորհ:

«Ե՞նո՞նի:

«Ա-ա-ա-ա-ա- ի վերայ շարչարելոցդ և հնձելոցդ առ հասարակ հարցը և եղեարցդ» Առաջուց:

Յայսպիսի բանս գլեթէ միշտ զօրութեամբ դտանի բայինչ, որ և երբեմն ներգործութեամբ դնի. դո, «Ո՞վ է նոցա, զի ըստ ձանապարհին կայենի գնացին» Յուդայ: «Երանէ պատ նմա և երկրին, ընդ որ նա անցանիցէ» Երջլ: «Երանէ է մարդոց, զոր ոչ յաղթահարեցին երկունք աղահութեան» Մժե:

Գիտելի է երկրորդ, զի առ միջարկութիւնս վերարերին ըստ իմիք կոչական անուանք, զի ըստ օրինակի միջարկութեանց իրը անկախ 'ի բային և 'ի խնդրոյ նորա դնին 'ի բանս՝ յերկրորդ դէմս. դո, «Քնկալ ու աստուածացինդ Գրիդնիս» զիոքը րիմաց բանս նուազ մերոց տեսութեանս» Խճնադ:

Այլ զպէսպիսութենէ միջարկութեանց ասացաք յառաջին  
մասին հանդերձ օրինակօք: Բայց պարտ է ևս գիտել, զի գտա-  
նին և այլ բաղում միջարկութիւնք, զորս ոչ եղաք՝ ի նմին՝  
վասն ոչ գոլց նոցա՝ ի հասարակ գործածութեան. որպիսի են  
սոքին, առ, ա, ա՛, հա, է, չէ, յէ, ե՛, է՛, ը՛, ի՛, ի՛  
թէ, ու՛, իշտ, տի, տիր, իցիւ, իցիւ թէ, օշ թէ, օշ ե-  
թէ, վայ վաղայ, բեք, ափսոս, և այլ այսպիսիք. զորս չէ ար-  
ժան՝ ի կիր առնուլ՝ ի հասարակ շարադրութիւնս: Տես յըն-  
դարձակն:

## ՄԱՍԻՆ ԵՐՐՈՐԴ

Յաղագու համայնտավեան մասանց բանի:

Հանդէս արուեստի քերականութեան յայսմ մասին պայծառանայ. զի 'ի սմին ամենայն բառը առ միմեանս եկեալ պէս պէս համաձայնութեամբ կազմեն խնջոյս բանի. որով և միտք ուսանողաց տեսեալ զիսայտալ բառից ընդ իրեարս յայս սեղան՝ զուարձանան և բերկրին. ևս և արժանօք վայելեն զպտուզս վաստակոց իւրեանց, զոր վաստակեցին յառաջնն և յերկրորդ մասին: Եշւ յանձանձիրն ճաշակել սկսանին պարարտանալ ոգիք նորա յանուշութենէ կազմաւորութեան բանից: Օայս սեղան՝ կամեցեալ կազմել բարելց՝ ախորժական և ընտիր օրինակօք ունիմք կարգել. խօսեալ նախ համառօտիւ զհամաձայնութենէ մասանց բանի 'ի հասարակի:

Արդ համաձայնութիւնք մասանց բանի են կապակցութիւնք նոցա ընդ միմեանս՝ առ 'ի կազմել զըան: Այս կապակցութիւնք լինին ութ եղանակաւ ըստ ութից մասանց բանի: «Եախ անուան ընդ անուան: Եշրկրորդ գերանուան ընդ գերանուան, և ընդ անուան: Եշրրորդ բայի ընդ անուան, ընդ գերանուան և ընդ ընդունելութեան: Չորրորդ ընդունելութեան ընդ ընդունելութեան, ընդ անուան և ընդ գերանուան: Հինգերորդ նախադրութեան ընդ անուան, և ընդ այնս որք իբր անուն հոլովին: Վեցերորդ մակրայի ընդ բայի, և ընդ այնս որք ունին զզօրութիւն բայի: Եօթներորդ միջարկութեան ընդ բանի: Ութերորդ շաղկապի ընդ բանի և ընդ մասանց նորա:

Յայսոսիկ ութ համաձայնութիւնս առաջի դնին ութ հարկաւոր գիտելիք 'ի շարադրութեան. որք են սոքին. ու, բացայացտիչ և բացայացտեալ. բ, յատկացուցիչ և յատկացուցեալ. չ, ածական և գոյական. դ, յարարերական և յարաբերեալ. ե, անուն բայի. ղ, խնդիր. է, արգելիչ խնդրոյ. ը, նախդիր: Որոց հանդամանք և պիտանութիւնք յայտնի լինին 'ի բացատրութենէ վերոյդրեալ ութից համաձայնութեանցդ:

Այլ գիտելի է, զի զհամաձայնութենէ նտխագրութեան, մակրայի, միջարկութեան և շաղկապի՝ զոր ինչ արժան էր դիտել, խօսեցաք յառաջին և յերկրորդ մասին. ուստի չունիմք ինչ խօսել զոցանէ յայսմ մասին. այլ միայն զհամաձայնութենէ անուան, գերանուան, բայի և ընդունելութեան. յորս բովանդակին ամենայն զօրութիւնք արուեստի քերականութեան:

Եւ նախ՝ կամեցեալ խօսիլ զհամաձայնութենէ անուան ընդ անուան՝ գիտելի է, զի անուանք որովհեաւ կամ գոյական են, և կամ ածական, 'ի գալ սոցա առ միմեանս՝ հարկ է, զի կամ գոյականք ընդ գոյականաց յօդեսցին. կամ ածականք ընդ ածականաց. կամ գոյականք ընդ ածականաց. և կամ ածականք ընդ գոյականաց: Դակ գոյական անուանք երակի կարեն յօդիլ ընդ գոյականաց. նախ՝ իբր բացայացտիչ. երկրորդ՝ իբր յանկացուցիչ. և երրորդ՝ իբր ինդիր. զորոց խօսեսցուք կարդաւ:

## ԳԼՈՒԽ Ե.

Յաղագու համայայնութեան գոյական անուանց ընդ գոյականաց էք բացայացունել: կամ

Յաղագու բացայացունել:

Յորժամ՝ 'ի բանս կամիմք զգոյական անուն ինչ բացայացտել՝ թէ յինչ միտս զնի, և կամ փոխանակ որպէս նշանակէ, յարեմք՝ 'ի նոյն զայլ միւս ևս անուն գոյական՝ թուով և հոլովիւ համաձայն նմին առանց շաղկապի, և զայն կոչեմք բացայացտիլ որպէս երեխ յայս բան. «Այսօր բուսաւ յաննայէ մորենին մարիամ.» Հարակ: Աւը անունս ճարշիած յարեալ յանունս ճորինի լեալ է նմին բացայացտիչ. զի բացայացտէ, թէ մորենին աստ առեալ լինի փոխանակ մարիամու:

Այլ գիտելի է նախ, զի բացայացտիչն երբեմն զնի ևս յառաջ քան զբացայացտեալն. զօ, «Առլուկ՝ հիմն մարգարեից, ասաց, մի ատեր զեղբայր քոյ.» ԱՌԵ:

Աւը անունս ճորին է բացայացտիչ բառիս՝ հիմն ճարժարէկց: Երբեմն ևս 'ի մէջ բացայացտին և բացայացտելոյն անկա-

նի բայ. կօ, «Օկորուսեալ գրամն ինդրեաց՝ զթագաւորական պատկերն» Իժնար: Ուր անունս նախառայական պատկեր՝ է բացայայտիչ իրամոյն, 'ի մէջ անկանելով բայիս՝ ինդրեաց:

Գիտելի է երկրորդ, զի երբեմն բաղում եղական անուանք լինին բացայայտիչ միոյ յոգնականի. կօ, «Որդիք սրբոյ յուսականն պատ և աթանագինէս . . . մահ անձանց նիւթեցին» Յաշն: Էտան: Ուր երկու եղական անուանքս պատ և անանագինէս՝ են բացայայտիչ միոյ յոգնական անուանս՝ որդիք սրբոյ յուսկանն:

Գիտելի է երրորդ, զի թէպէտ բացայայտիչն առանց շաղկապի յարի 'ի բացայայտեալն՝ որպէս և եղաք 'ի վերոյ, բայց որովհետեւ բացայայտիչն է իբր մեկնութիւն բացայայտելոյն, ուր ուրեք կայ բացայայտիչ, անդ կայ զօրութեամբ և մեկնական շաղկապ ինչ. որպէս յայս բան, «Օտիրական մարդն՝ ըզհոգին, թշնամանեցին» Առաք: կայ զօրութեամբ մեկնական շաղկապ՝ այսինքն, որպէս եթէ ասէր. զտիրական մարդն, այսինքն զշոգին թշնամանեցին:

Եւ զի յամենայնի 'ի սոսա միշտ զօրութեամբ կայ շաղկապ մեկնական, վամն այսորիկ բազում անգամ հանդերձ նովաւ դնի բացայայտիչն. կօ, «Յամաքեսցին պտոյտք գետոց. այսինքն՝ մեղաց յորդութիւնը» Առան: Ուր անունս մեղաց յորդութիւնին՝ հանդերձ շաղկապիւս այսինքն՝ լեալ է բացայայտիչ անուանս՝ պարոյտք գետոց:

Երբեմն ևս բայիւ հանդերձ դնի. կօ, «Ընթասցուք այսուհետեւ 'ի սուրբ լերինան, 'ի մարգարէսն ասեմ և յառաքեալս» Գրով. լուս: Ուր անուանքս 'ի մարդարշնեն և յառատեւալ՝ հանդերձ բայիւս առեմ՝ են բացայայտիչ անուանդ՝ 'ի լերինս:

Եւ գարձեալ երբեմն ամբողջ ինչ բան իբրև անուն ինչ լինի բացայայտիչ անուան. կօ, «Ամենայն օրէնք 'ի մի բան կատարին, 'ի սիրեսցես զընկեր քոյ իբրև զանձն քոյ» Գրով: Ուր բանս՝ սիրեսցեն զընկեր ուոյ ևն, է բացայայտիչ անուանս 'ի մը բան:

Այլ այսպիսի բացայայտիչք հասարակօրէն յանորոշ բանս գիւղին. այսինքն՝ յայնպիսիս, որք աներեւոյթ բայիւ կազմին. կօ, «Այս խարէութիւն մտաց ողորմելի է քան զամենայն խարէութիւն, համակ կարգաւորութեամբ յանկարգութեան կալ,

և լուսով՝ի խուար.» Ապրդ: Ուր բանս՝ համակ կարդաւորութեանք յանիարդութեան կալ են, է բացայայտիչ անուանդ՝ այս խանճութեան:

Այս եղանակ բացայայտչի առաւելապէս՝ի գործ ածի՝ի վերայ ցուցական գերանուանցս՝ այս, այդ, այն, առյն, դոյն, նոյն. զօ, «Օիսարդ լինիցի այդ՝ փոխանակել զիմ ախտացեալ ոչխար ընդ առողջ դազանին.» Խոր: Ուր բանս փոխանակել զիմ են, է բացայայտիչ գերանուանս այդ:

Գիտելի է ըրբորդ, զի ուրեք ուրեք յատուկ անուանք առանց համաձայնելոյ ևս լինին բացայայտիչ հասարակ անուանց. իբր զի երբեմն դնին յուղղական հոլովն (իբր ածական). զ՞ր օրինակ, «Առնեն յորդանան գետոյ երիցս անգամ՝ բաժանեցաւ.» Մծբ:

Ուր յատուկ անունս յորդանան՝ է բացայայտիչ գետոյն յուղղական հոլովն (իբր ածական):

Եւ երբեմն ևս յարելով՝ի բառդ անուն՝ նովաւ հանդերձ լինին իբրեւ մի բացայայտիչ հասարակ անուան. (և այս յաւետ՝ի յատուկ անուանս մարդկան). զօ, «Երեց մի պետքոս անուն.» Եղիշէ: Ուր պետքոս անուն է բացայայտիչ բառիս երեց մի:

Գիտելի է հինգերորդ, զի՝ի բացայայտիչ նախդիրն իբր՝ի բազում դնի՝ի վերայ երկուցն ևս, այսինքն՝ի վերայ բացայայտելոյն և՝ի վերայ բացայայտչն մանաւանդ եթէ անկեալ իցէ՝ի միջի այլ մասն բանի. զօ, «Օփրկականն սաղաւարս՝ի գլուխ եղեալ՝ զնշան խաչին.» Ըստ: Ուր նախդիրդ պեղեալ է՝ի վերայ երկուցն ևս. այսինքն՝ի վերայ բացայայտելոյն՝ որ է բառս չըկախան սաղաւարս, և՝ի վերայ բացայայտչն՝ որ է բառս նշան խաչին:

Թէպէտ երբեմն միայն՝ի վերայ նախընթացին դնի. զօ, «Օպաւաւօտ խաղաղութեանն Քրիստոս սիրով՝ի մեզ ընկալ ցուք.» Խոսքով: Ուր նախդիրդ պեղեալ է՝ի վերայ նախընթացին միայն, այս է առաւագ խաղաղութեան. որոյ լեալ է բացայայտիչ անուանս Քրիստոս:

Դա վերցգրեալ օրինակսդ արժան է նկատել և զայս, զի բացայայտիչն և բացայայտեան բազում ուրեք դնի հանդերձ յատկացուցչաւ՝ կամ ածականաւ, որպէս երեի և յայսմ, «Ըուրջ եղեն շունք բազումք՝ զնուուրք պիղաւառի.» Ըստ:

Ուր բացայայտին, այսինքն՝ անունս զի՞նուոցի՝ եղեալ է հանգերձ յատկացուցչաւ, որ է բառս ալիղադրոսի. և բացայայտեալն, այսինքն՝ անունս շատի՝ եղեալ է հանգերձ ածականաւ, որ է բառս բաղպաժի:

Դիմակը է վեցերորդ, զի երեմն թէպէտ գոյական անուանք համաձայն զնին՝ ի բանս առանց շաղկապի, բայց ոչ համարին բացայայտիչ միմեանց, այլ իրը ինդիր բայի. զո՞ր օրինակի, «Երևեցաւ մովսէօի վառմամբ հրոյ՝ ի մորմնւոջ յանապատին.» Զատկար: Ուր երկոքին զոյական անուանքս ՚ի նորենոջ և յանապատին թէպէտ առանց շաղկապի յարեալ են ընդ միմեանս համաձայն թուով և հոլովիւ, բայց ոչ են միմեանց բացայայտիչ այլ երկոքին ևս ինդիր բայիս երեցաւ:

### Գլուխ թ.

Յաղագո համայայնութեան գոյական անուանց ընդ գոյականաց՝ ենք յարկացուցիլ: կամ

Յաղագո յարկացուցիլ:

Ի բանս յորժամ կամիմք յայտ առնել, թէ արգեօք նշանակեալն իրիք գոյական անուանն, որում յատկանայ, կամ որոյ է, զնեմք առ նմին զայլ գոյական անուն՝ ի սեռական հոլովն, որ զնշանակութիւն միւս անուան իւրացուցանէ, կամ ինքեան յատկացուցանէ. այսինքն ցուցանէ՝ թէ նշանակեալն այնը անուան՝ իւր է, և զայն սեռական հոլով կոչեմք յարկացուցիլ զօ, «Որ զբեռն ընկերին բառնայ, կատարէ զօրէննն Քրիստոսի.» Լամբէ: Ուր գոյական անունդ ընկերին լեալ է յատկացուցիչ բերին. զի իւրացուցանէ զբեռն. այսինքն՝ ցուցանէ զբեռն որ ընկերին է. և ոչ որ նաւուն, կամ այլոյ իրիք: Այնպէս և գոյական անունդ Քրիստոսի լեալ է յատկացուցիչ բառիս զըշէնան, զի սեպհականէ ինքեան զնոյն. այսինքն յայտ առնէ՝ թէ Քրիստոսի է այն օրէնք, և ոչ աշխարհի, կամ այլոյ:

Այլ գիտելի է նախ՝ զի յատկացուցիչն բազում անգամ նախադասի յատկացելոյն. զօ, «Որում շատ առաւ դիտութեան իմաստ, շատ ինդիրեցի՝ ի նմանէ, առաքինութեան տե-

սակ.» Խոռընվէ: Ուր անունս գիտութեան՝ լեալ է նախադաս յատկացուցիչը իմաստին. որպէս և անունս առատինութեան գեսակին:

Երբեմն՝ ի մէջ յատկացուցին և յատկացելոյն այլ մասն բանի անկանիք. կօ, «Յախաս թաւալի մեղաց.» Ֆ՝ յախաս մեղաց թաւալի. Ընդհ:

Երբեմն ևս ամբողջ բան մտանէ՝ ի միջե. կօ, «Օի զմեղացն՝ որով սառութեամբ բամբասեցեր զարդարն՝ ի մեծամեծաց կամ՝ ի փոքունց, զգատաստանն զու ինքնին անձամբ քո բարձցես.» այսինքն՝ զու ինքնին բարձցես զգատաստանն մեղացն. Ասպէ:

Գիտելի է երկրորդ, զի երբեմն միոյ անուան լինին բաղում յատկացուցիչք. կօ, «Մթերա ոսկեց և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և ոլէսպէս զունոց և անկուտծոց... բարձրացոյց.» Խո՞ր: Ուր անուանքս ուհեոյ, արծաթոյ, ժաշանց, ևն, են յատկացուցիչ անուանս ճիւղս:

Երբեմն ևս բազում զոյական անուանք լինին միմեանց յատկացուցիչը. կօ, «Տիազ կերպարանաց ճշմարիտ բանից զգեցեալ ունին դժոգւոյն իմաստս.» Դժեստ: Ուր ճշմարիոյ բանիցն է յատկացուցիչ կերպարանաց և կերպարանացն է յատկացուցիչ անուանս՝ պիտի:

Գիտելի է երկրորդ, զի եթէ յատկացուցին կամ յատկացեալն իցէ նախադասեալ, նախադիրն հասարակօրէն զնի միայն՝ ի վերայ նախընթացին. կօ, «Օլուսոյն ճառագայթ սպառը՝ ի յինքեան.» Ըստ:

Երբեմն ևս՝ այլ սակաւ ուրեք, զնի միայն՝ ի վերայ յետադասին. կօ, «Օառայի առեր զէնքարարան.» այսինքն՝ առեր զկերպարան ծառայի. Ըստ:

Երբեմն՝ ի վերայ երկուցն ևս զնի, մանաւանդ եթէ անկեալ իցէ՝ ի միջի այլ մասն բանի. կօ, «Օմահու փարատեաց զերկիւլ.» Ըստ: Ուր նախդիրն եղեալ է՝ ի վերայ երկուց անուանցս ճահեռ և երկիւղ, որոց մինն է յատկացուցիչ, և միւնն յատկացուցեալ, որպէս եթէ ասէր, զերկիւղ մահուն փարատեաց:

Խոկ երբեմն զնի նախդիրն նաև՝ ի վերայ այլոց բառից՝ որք յարին՝ ի յատկացուցին կամ՝ ի յատկացուցեալն, զիարդ և

իցէ. զոր օրինակ, «Օմեծին՝ի ծնունդս կանանց պարապետին և պմլրուչին Յովհաննու զառաքինութեան զշանդէս տօնելով այսօր՝ի ձայն հնչման, ևն.» Ըստ: Աւր փոխանակ միոյ նախկըրի եղեալ կան բազումք. զորս հնար էր չգնել և կարգել այսպէս.՝ի ձայն հնչման տօնելով այսօր զշանդէս տօաքինութեան կարապետին և մկրտչին Յովհաննու մեծին՝ի ծնունդս կանանց:

Պարտ է նկատել և զայս, զի եթէ յատկացուցիչքն կամ յատկացուցեալքն իցեն բազում, նախդիրն իբր՝ի բազումն կրկնի նաեւ՝ի վերայ երկրորդ յետադասին. և երբեմն՝ի վերայ առենայնի. իսկ երբեմն ոչ կրկնի. դօ, «Դուք զիմն արհամարհեալ զսիրոյն պատուիրան՝ պթշնամնոյն ձեր ընկալայք դարձեալ զիրատ, զատելութիւն և զքաժանումն.» Ըստի:

Երբեմն ևս զօրութեամք եղեալ զյատկացուցեալն՝ նախդիրն դնի՝ի վերայ յատկացուցելոյն. դօ, «Խնդրեն ուսանել և զՅովհաննու առաջի դնեն.» այսինքն՝ զօրինակ աղօթելոյն յովհաննու առաջի դնեն. Խդիառ:

Ըստ այսմ պատահի և՝ի գերանուանս. դօ, «Պատուզ հոգւոյն զմերս ասէ առաքեալն (այսինքն՝ զգործ մեր), որ է սէր, խաղաղութիւն. և ոչ թէ զնոցայն (այսինքն՝ զգործ նոցա), որ էր հեռ, նախանձ, ևն.» Լամբը:

### Գլուխ գ.

Յաղագո համայայնութեան գոյական անուանց ընդ գոյականաց իբր ինդէք. կամ

Յաղագո ինդրոյ գոյականաց:

Գոյական անուանք բոց՝ի համաձայնելոյ ընդ գոյականաց իբր բացայայտիչ և իբր յատկացուցիչ, յարին՝ի նոսա նաեւ իբր ինդիր՝ համաձայն բնութեան նոցին: Ա ամն զի բազումք՝ ի նոցանէ ունելով զշաղորդութիւն ընդ բայից՝ բատ պահանջելոյ բնութեան բայիցն առնուն երբեմն զինդիր՝ի պէսպէս հոլովս. ուրպիսի նն բայանուանք. այսինքն՝ այնք որը՝ի բայից ածանցին. որդոն, Շաշակումն, առումն, տեսութիւն, ժա-

ոանգութիւն, ասացուած, և կամ են իբր արմատք նոցին. որպէս, Պատճառ, քարոզ, վիշտ, բարբառ, և ։

Ոմանք յայսպիսի անուանց ունին զհաղորդութիւն ընդ ներգործական բայից, և կոչին ներդաշնականահաղորդ. ոմանք ընդ կրաւորականաց. և կոչին կը առաջականահաղորդ. և ոմանք ընդ չեղոքականաց, և կոչին զեղուժականահաղորդ։ Բայ այսմ իմա և զածական անուանց։

Այսպիսի անուանք երբեմն ունին զզօրութիւն գերբայի մանաւանդ՝ ի հոլովիյն. և երբեմն ևս զզօրութիւն ընդունելութեանց յանգելոց՝ ի օղ և՝ ի եալ։ Աւսաի և ըստ այնմ առնուն զինդիր։

Այլ գիտելի է, զի՞ մեջ սոցա ներդործականահաղորդքն և կրաւորականահաղորդքն առնուն զիրկնատեսակ խնդիր. մի խնդիր սեռի, և մի ևս՝ խնդիր բնութեան. իսկ չեղոքականահաղորդքն՝ միայն զինդիր բնութեան։

Գիտելի է ևս, զի այսպիսի գոյական անուանք ոչ միայն առնուն խնդիր զզոյական անուանս, այլ և՝ ի տեղի նոցա զածականս, ևս և զզերանուանս և զընդունելութիւնս, որպէս տեսցի զինի։

### Այսուհետ առ։

Անուանք ներդաշնականահաղորդ՝ յորժամ իբր գերբայ վարին, առնուն խնդիր սեռի՝ ի սեռական հոլովն. զօ, «Ճաշակածք մեղաց՝ ճաշեցի զմահ.» Ճաշակելու. Աւը սեռական հոլովը թղաց լրաւ է խնդիր սեռի ճաշակման. որպէս եթէ ասէր, ճաշակելով զմեղս ճաշեցի զմահ։

Սոյնպէս է եթէ այսպիսի անուանք ունիցին զզօրութիւն բառից յանգելոց՝ ի օղ, և՝ ի իւ. զօ, «Եղբիւր կենաց աստըւած, և բղխումն ողորմութեան.» այսինքն՝ բղխող ողորմութեան. Ըսր։

Երբեմն ևս առնուն զինդիր հայցական փոխանակ սեռականի. զօ, «Աինդանացուցեր զնա՛ իւմածք քո՝ ի նա զհողի բանական.» Վաշլուց։ Աւը հարցական հոլովդ զնո՞ջէ բանական՝ լեաւ է խնդիր սեռի իւմածն. որպէս թէ ասէր, կինդանացուցեր զնա փչելովդ զհողի բանական։

Այլ եթէ համբաւկը և նորսավարժք չիցեն բաւական որոշելոյ զսեռական խնդիրն՝ ի յատկացուցչէ, մարթէ նոյս հասուլինել այսու, զի եթէ սեռական հոլովն կարիցէ փոխիլ՝ ի հայցական՝ է խնդիր. որպէս անսանի յատաջի եղեալ օրինակդ յասեն, ձաշակելով զմբռ. և ևս զողովնունիւն բղիօղ։ Խակ եթէ ոչ կարիցէ փոխիլ՝ ի հայցական, ոչ է խնդիր, այլ յատկացուցիչ և կամ այլ ինչ։

## Կանոն թ:

Անուանեք ներբուժականակառընդ բաց՝ ի սեռական և՝ ի հայցական խնդրոց, և կամ առանց նոցա ևս, առնուն երբեմն յընտիր շարագրութիւնս զինդիր բնութեան յայնպիսի հոլով, զորակիսի պահանջն բայցն, ընդ որոց ունին զհաղորդութիւն։

Յուղղականն, (թէպէտ՝ ի սակաւս.) ղօ, «Որ զդուանունն պետքանի զքեղ որդի հօր աստուծոյ հայր՝ ի յամզոյն վկայեալ այսօր»։ Ըստ։ Ուր անունս որդին է ուղղական խնդիր պատահնան. որպէս թէ ասէր. զգաւանեն պետքանի զքեղ որդի հօր աստուծոյ՝ հայրն աստուած վկայեաց այսօր՝ ի յամզոյն։

Ի վերջահոլով տրականն. ղօ, «Լուսոյք զՏեանն անսուտ ձեզ խոսոքնան»։ Լամբըրոն։ Ուր յեզն է տրական խնդիր բառից խոսոքնան։

Ի նախրիւ տրականն. ղօ, «Տուր մեղ զիսաղաղութիւն քո, զոր շնորհեցեր սրբոց քոց առաքելոյ՝ ֆամածք քո՝ ի նոսա զինեցանցուցիչ և զամենազօր հոգիդ քո սուրբ»։ Ժամաժեր։ Ուր բառդ՝ ի նոսա է նախրիւ տրական խնդիր ֆամածնն, որպէս թէ ասէր. փչելով քո՝ ի նոսա զհոգիդ։

Ի բացաւականն. ղօ, «Եռաւել քան զարարշունիւնն յոշնչ զաշխարհս՝ մեծազայն փրկութիւն զիւրջնան իմանայիր»։ Եւ զիշէ։ Ուր յանձնէն է բացաւական խնդիր արարշունիւնն, որպէս թէ ասէր. առաւել մեծազայն փրկութիւն իմանայիր զիւրջնան՝ քան զարարչագործել զաշխարհս յոշնչ։

Ի պատմականն. ղօ, «Եւ բազոյն է այս զրոպարտութեան առաջնաթ զմէնջ՝ քան զիւրջնանսականացն առասպելեալ աստուածաբանութիւնն.» այսինքն՝ տան զմէնջ զայս զրոպարտութիւն՝ վերազայն է, և այլն։ Ընորհ։

Խ զործիականն . ղօ , » ԶԵՒՆ ինչ ՚ի միտ առնլոց ըստ հոգւոյն սրբոյ կանխառացութեանն բերանով Պատթի . » այսինքն՝ ըստ ասելոյ կանխառ զայս հոգւոյն սրբոյ բերանով Պատթի . « Ասեայ :

Խ պարասուկանն . ղօ , « Օրինաւոր լուացմունք քահանայիցն , և արկէնունիւ զժողովրդեամբն՝ նշանակէին զշոգեոր մկրտութիւնս . » այսինքն՝ սրբին զջուրս և զարիւնս զժողովրդեամբն նշանակէին , և այլու Պահորն :

Խ ներգոյականն . ղօ , « Որ ՚ի սկզբան օքնադրից պահոյն ՚ի զրախախն . » Լար : Ուր ՚ի որբակարնն է խնդիր բնութեան օքնադրին . որ աստ փոխանակ զոյականի դնի . ևս խնդիր սեռին ՚ի բարդութեան անսանի . այլ պահոյն է յատկացուցիչ . որպէս թէ ասէր , որ ՚ի սկզբան եղիր զօրինս պահոյ ՚ի զրախամբն :

« Ախաղը բութեամբ . ղօ , « Որ արեգածնամբ ըստ պատկերի քո ասէր՝ պատուեցեր զմեզ » այսինքն՝ ստեղծանելով ըստ պատկերի քո . Լար :

Խակ անուանք կը առաջականականը + առնուն զըստառական իբր զինդիր սեռի . ղօ , « Օպաշարութն ՚ի առո անց մեղացն գիշեր կոչէ . » Լար : Ուր բացառական հոլովա՞ն՝ ՚ի քուառանց Ձեղացն է խնդիր սեռի կարառորականահազորդ բայանուանս զպաշլութն : Եյլ զընութեան խնդիրն առնուն ըստ ներգործականաց իւրեանց :

### Ասեան դ :

Սնուանք վեզուականահաղորդ + յայնպիսի հոլով առնուն խնդիր՝ յորպիսի պահանջեն բայցն՝ որոց հաղորդին :

Խ վերջահոլով տրականն . ղօ , « Ենկալութեան վարձուցն հասուցման՝ ընդարձակէ զողինն ՚ի զործս բարութեան . » Առւ Ուր բառս հապուցման վաշնուցն՝ է տրական խնդիր անկալութեան . որպէս թէ ասէր , ակնունիլ հասուցման վարձուց՝ ընդարձակէ զողինն ՚ի բարեգործութիւնս :

Խ նախզրիւ տրականն . ղօ , « Ո՞ այլ զտապանակն աստուծոյ արար գերի այլազգեաց , թէ ոչ քահանայիցն առ ՚ի պաշտան իւրեանց հեղինականն . » Լար : Ուր բառս առ ՚ի պաշտան

ի բրեանց է, խնդիր հեղիսաւութեանն. որպէս թէ ասէր. ո՞յլ զուսպանակն ասառածոյ զերի արար այլազգեաց, եթէ ոչ հեղիսաւուն քահանայից առ պաշտօն իւրեանց:

Ի բացառականն. զօ, «Ճասանէ նմա կէտ վճարման ՚ի կենաց», Համբ, կան: Ուր ՚ի կենաց է բացառական խնդիր վընարման, որպէս թէ ասէր. ճասանէ նմա կէտ վճարելոյ ՚ի կենաց:

Ի պատմականն (այլ ՚ի սակաւս.) զօ, «Յաւիտեան է մեր զնմանէ գոհութեանն, որպէս և շնորհն.» Լամբ: Ուր զնմանէն է պատմական խնդիր գոհութեան:

Ի պարառականն (այլ ՚ի կարի սակաւս.) զօ, «Թագաւորէին մեղք ՚ի ժամանակէ անախ յանցուածոցն Եղամայ զպառուիրառաւն.» Ամբ: Ուր պարառական հոլով զպառուիրառաւն է խնդիր յանցուածոցն:

Ի ներգոյականն. զօ, «Խոստացաւ զերանութիւն և զհանգէսոյ յարքայութեան իւրում.» Ամբ: Ուր բառս յարդարականն է, ներգոյական խնդիր հանդապէան:

Ի ձեռն նախազրութեան. զօ, «Արդի հօր ասելով զբանականացնեան ընդ հօր յայտ առնէ.» Խոսրով: Ուր ընդ հօրն է նախազրութեամբ խնդիր բնութեականան: Ըստ այսմ է և յայլ բազում:

Այլ գիտելի է, զի ոմանք յայսպիսի անուանց երեմն հանգերձ բառն խնդրով իւրեանց առնուն նաև զայլ խնդիր. զօ, «Որ առաքեցէր նախընթաց քում զալատեան սուրբ զմարգարէմն աւետարաննել տիեզերաց զիջունն. քո ՚ի հայրական ծոցյ ՚ի փրկութիւն տիեզերաց.» Շամ: Ուր անունն իջունն առեալ է զերկուս խնդիրս՝ զըացառական, այս է ՚ի հայրական ծոցյ, և նախազրիւ արական, այս է ՚ի գրիս-նի-ու ոչեզելոց:

## ԳԼՈՒԽ Դ.

Յաղագի համայնշութեան գոյական անուանց ընդ ածականաց. կամ

Յաղագի ինդրոյ ածականաց:

Ճամանայնութիւն գոյականաց ընդ ածականաց ոչ այլ ինչ է բայց եթէ լինե ըն դոյականաց՝ խնդիր ածականաց, զի որպէս

զյական անուանք ունելով զհաղորդութիւն ընդ բայից՝ առնուն զինդիր՝ 'ի պէտքէս հոլովս, սոյնպէս և բազումք յածականաց, վասն ունելոյ զհաղորդութիւն ինչ կամ զիերաբերութիւն առ բայս՝ առնուն զինդիր բատ կանոնաց ինդ բառութեան զյականացն. որպէս տեսի յառաջիկայ կանոնադ:

Այլ զիաելի է, զի որպէս ասացաք զդյականաց, սոյնպէս և ածականք ոչ միայն զդյական անուանս առնուն իւրեանց ինդիր, այլ և 'ի տեղի նոցա երեմն զածականս իբր զդյականս, և զդերանուանս, և զդերբայս, ևս և զընդունելութիւնը. զօրոց զօրինակն կարես տեսանել զինի:

## Առանո՞ն ա՞:

Ածականք ներժողթականահաղորդութիւն ունելով զզօրութիւն ընդունելութեանց յանդելոց՝ 'ի ող առնուն զինդիր սեռի 'ի սեռական հոլովն. նո, «Եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանիժորդութիւնը երկնից խորանաց.» Ըստակ:

Աւր սեռական հոլովս խորանաց երինից է՝ ինդիր սեռի անուանս ժառանիժորդութիւն:

Երբեմն սեռնք յայսպիսի ածականաց, այլ սակաւք յոյժանուն զհայցական փոխանտկ սեռականի. նո, «Պատիչք չարեաց, զծնօղս անարժութուն.» Հայով:

Այլ զիաելի է, զի բարդ ածականք բազում անդամ՝ 'ի բարզութենէ ունելով զինդիր սեռին առնուն միայն զինդիր բնութեան յայլ հոլովս. նո, «Քրամանահան յընդհանուր եկեղեցիս Քրիստոսի.» այսինքն՝ հանող զէրաման յընդհանուր եկեղեցիս Քրիստոսի. Ադակ:

## Առանո՞ն ի՞:

Ածականք ներդորձականահաղորդք բաց՝ 'ի ինդրոյ սեռի առնուն երբեմն նաև զինդիր ընութեան յայնպիսի հոլով՝ յորդիսի պահանջին բայցն՝ ընդ որոց ունին զհաղորդութիւն. նո, «Պարժակից է առն իւրում ամենայն բարեաց.» Առակ: Աւր բառս ամենայն բայցեաց է ինդիր սեռի գորժակիցն. իսկ բառս առն իւրում է ինդիր բնութեան՝ 'ի տրական հոլովն. որպէս

թէ ասէր գործող է ամենայն բարեաց ընդ առն իւրում։  
«Ի չեղձմանէ կենցաղոյ ալեաց պահապամ»։» Ըստ։

Ուր՝ ի հեղիմանէ ալեացն է բացառական խնդիր պահապամին։  
որոյ խնդիր սեռին զնի զօրութեամբ։ որպէս թէ ասէր։ պահ-  
պամող մարդկան՝ ի չեղձմանէ ալեաց կենցաղոյ։  
«Ճառանքառաջանը հին օրինացն արդարութեան ընդ մարդարե-  
ից»։ Ըստ։ Ուր բառս արդարաւթեան հին օրինաց՝ ի խնդիր սե-  
ռի ժառանքառաջն։ իսկ բառս ընդ ճարդարէց է խնդիր բնու-  
թեան նախաղբութեանս ընդ։

Երբեմն ևս առանց խնդրոյ սեռի։ կօ, «Ճառանքառը շայոց  
մեծաց»։ Ըստ։ Ուր շայոց մեծացն է տրական խնդիր առե-  
պառաջն։ իսկ խնդիր սեռին զօրութեամբ զնի։ որպէս թէ ասա-  
ցեալ էր։ աւետող բարեաց առ շայոց։

### Առան դ։

Վճականք կը առաջականահաղորդութիւն ունելով զզօրութիւն ըն-  
դունելութեանց յանդելոց՝ ի վե կամ՝ ի ետը, առնուն զիմնդիր  
սեռի՝ ի բացառական հոլովն։ զնը օրինակ, «Եղեղն շարժուն  
՝ ի հողմոյ»։ Պահ։ Ուր բառդ՝ ի հողմոյ է խնդիր շարժունին։  
որպէս թէ ասէր։ շարժեալ՝ ի հողմոյ։  
«Յերեւելի զգայութեանցս անհաւելիցն՝ առնել հաղորդս»։» Ըստ։  
Ուր բառս յերեւելի պայութեանցն՝ է խնդիր բառիս անհաւելիցն։  
որպէս թէ ասէր։ առնել հաղորդ այնց, որը ոչ ճառ ին յե-  
րեւելի զգայութեանց։ Իսկ զինդիր բնութեանն առնուն ըստ  
ներգործականացն։

### Առան դ։

Վճականք չեղանականահաղորդութիւն հասարակօրէն զայնպիսի  
խնդիր առնուն զորպիսի պահանջն ընդ ըստց ունին  
զհաղորդութիւն։

Ոմանք առնուն զվերջահորդով տրական։ կօ, Գտովութեան  
արժանաւոր այն բժիշկ է, որ զանցուսացեալ հիւանդն յանձն  
առնու բժշկել։» Սարդ։

Ոմանք զնախրիւ ալական։ կօ, «Բնութեամբ մարդ սիրող

է բանի, որպէս պատռեցաւ յարարչէն, և «ըսմունիկ՝ի խօս»» Ասրդ:

Ոմանք զբացառական։ ղօ, «Մաշն աղազ՝ի մահուանէ՝ արձակէ զմահու ըմբռնեալն»» Մահճըլ:

Ոմանք (այլ սակաւք) զպատճական։ ղօ, «Թռանձրամիտք էն փարխեցիքն, և անփոյթ զշողեկան խնդրոյն»» Կապայ:

Ոմանք զդործիական։ ղօ, «Եռաղջու անդամօք անկարօաք են բժշկութեան»» Կապ:

Ոմանք զներգոյական։ զոր օրինակ, «Քաղաքավենդ՝ի հաստատութեան»» Կապ:

Ոմանք՝ի ձեռն նախազրութեան։ ղօ, «Թռողեալ են չորք խառն ընդ բարիս յաշխարհի աստ»» Մծբ:

Այլ աստ զիտելի է, զի ածականք չզոքականահաղորդք երբեմն բաց՝ի բուն խնդրոյն առնուն նաև զայլ խնդիր։ ղօ, «Երկնայնոցն՝ի յերկրի հաղորդ ճկնութեամբ . . . սուրբ զանիէլ»» Ըսր։ Ուր երկայնոցն է բուն տրական խնդիր հաղորդին։ իսկ ճգնաւեամբն և՝ի յերելին՝ են երկրորդական և պատահական խնդիրը նորա:

«Ես ինձէն անձամբ իմով ինժնագրաւ՝ի մոշ»» Կապ:

Ուր՝ի ճանի է բուն խնդիր ինժնագրաւին։ իսկ բառս անհամբ իմով է երկրորդական խնդիր նորուն։

«Դ հաւասս բանից և՝ի պատմութիւնս խօսից հաւատագործին՝ իրերաց։ և՝ի հաւատան՝ որ առ Եստուած, միմեանց անհամբանի»» Լամբ։ Ուր իրերացն է բուն տրական խնդիր հաւատագործին։ իսկ՝ի հաւատագործանից ևն՝ երկրորդական խնդիր նորուն։ Այնպէս և միշտացն է բուն տրական խնդիր անհաւատան։ իսկ՝ի հաւատագործ է երկրորդական խնդիր նորա։

Պիտելի է գարձեալ, զի ածական անուանք բաղադրեալք մասնկամբս ան, թէպէտ ըստ բնութեան խրեանց զայլ խընդիր պահանջեն, բայց իրը՝ի բազումն առնուն զբացառական։ ղօ, «Քաշանայը . . . անպատուդ՝ի հաւատոց»» Մահճըլ։

Եւ ևս զիտելի է, զի ածական անուանք ինչ որը նշանակեն զհայրենիս, հասարակօրէն սունուն զխնդիր՝ի գործիական կամ՝ի բացառական հոլովն. զոր օրինակ, «Վարբակէս՝ զաւատաւ մեգացի . . . յինքն յանկուցանէ զպարոյր»» Խոր։ Ուր գաւառան է գործիական խնդիր բառիս մեղացի։

«Եղիս հրեայ զոմն անուն Եկիւղաս յազգէ պոնտացի .» Պատճեան  
Ուր յազգէն է բացառական խնդիր բառիս պոնտացի :

Առանք ինդրոյ աշտականաց յանդելոց 'է իւ:

Այսպիսի ածականք բղիսն 'ի ներգործական բայից . և առ-  
նուն զիսնդիր 'ի սեռական հոլովն իբր զիմնդիր սեռի . զօ , «Փ  
գերեզմանն իջեր խափանէն մահու .» Ըստ : Ուր սեռական հո-  
լովդ հանու լեալ է խնդիր սեռի ածական անուանս խափանէն:  
Եւ այս յաճախեալ է 'ի դիրս :

Բայց երբեմն փոխանակ սեռականի առնուն զհայցական . զօ ,  
«Ետուն մեզ զգեզմն ընդունէն զցօղն երկնային .» Ըստ : Ուր  
հայցական հոլովդ զցօղն երկնային է խնդիր բառիս ընդունէն որ  
լեալ է ածական գեղաննն : Այսպիսի ածականք ուրեք ուրեք  
հանդերձ սեռական կամ հայցական խնդրով առնուն նաև զայլ  
խնդիր՝ յայլ հոլովն իբր զիմնդիր ընութեան :

Դ վերջահոլով տրական . զօ , «Աչ մատնեցեր ամօթայ ըն-  
հապնէնքն զքեզ տան ջանաց մահու .» Կարեկ :

Դ նախդրիւ տրականն . զօ , «Համոզին 'ի խաղաղութիւն  
մլրկածուփ շարժմանց կացուցար .» Կարեկ :

Դ բացառականն . զօ , «Դ նմա հանդեաւ . . . տապանն առյե-  
ցուցէն 'ի հոսանաց մեղաց հայտառան աղանց .» այսինքն՝ որ ապ-  
րեցոյցն զաղինս զհայտառանեաց 'ի հոսանաց մեղաց . Ըստ :

Դ գործիականն . զօ , «Քաղը ածայն հնչըմամբ դաշնացէն մն-  
լորեալ հօտին .» Ըստ :

Դ ներգոյականն , և այն իբր բառ պատահման . զօ , «Յահա-  
ւորն առենի յայդնէնք իրաւամբք զմատակարսութիւնն որ առ  
մեզ .» Կար :

Դ ձեռն նախադրութեան . զօ , «Եղօթքն է . . . զԱսառած-  
ընդ մարդկան հաշուցուցէն» Սարդ . առ . պէտ . է :

Գրանին և քանի մի ածականք՝ սակաւք յոյժ , այսպիսի վեր-  
ջառութեամբ բղիսնալք 'ի չեզքական բայից . որպիսի են  
բառքս , բնակիւլ խափանէն և աղասառուցէն որք երբեմն առնուն  
զիմնդիր բառ բայիցն , և երբեմն փոխանակ նոցին զահական .  
զօ , «Բնակիւլ 'ի խաւարի տեսաք զլցա դիտութեան եկեալ  
հասեալ .» Խոսքով :

«Ընդարձակասուն բնակելու ձիւնեղին լերանց՝ եղին բնակելու խորշակարեր զաշտաց.» Խղելու:

Ա առն ինդրոյ աժամկան անուանոց բաղրապահանոց:

Սոքա չըրեկըն առնուն զինդիր: Երբեմն զսեսական, կամ զարական. զօ, «Ա Եհագոյն սելովեհից և բազմաշեայ քերով-րեհից.» Ծար:

Ուր բառքդ սելովէլեից և ծելովէլեից ևն խնդիր վլհագոյն բառին:

Երբեմն զբացառական. զօ, «Օ դաժանագոյն՝ ի կենդանեաց զօձն՝ զնէ օրինակ իշխանին մահու.» Խդի:

Ուր բացառական հոլովս՝ է ինդիր դաժանագոյնին:

Երբեմն զներգոյական. զօ, «Օ անուցար վլհագոյն՝ ի սիրոզ իմաստութեան.» Ծնորհ: Ուր ներգոյական հոլովդ՝ է սելովական իմաստութեան է խնդիր վլհագոյնին:

Երբեմն ևս և բազում անդամ նախազրութեամբս ժան, և ուրեք ուրեք ևս նախազրութեամբս՝ է մէջ. զօ, «Թռէ և քան զզազանս խարագոյն իցէ, քան զոչիսարսն հանդարդագոյն լինիցի.» Ծնորհ:

Ընթեռնուլ արժանաւորեցաք (զբանս առն) . . .՝ ի մէջ իմաստոց իմաստիագոյնի.» Խոր:

Գիտելի է ևս, զի բազումք յածականաց ուրեք ուրեք իրր բազգատական վարելով՝ ըստ բազգատական անուանց առնուն զինդիր. զօ, «Թռագաւորաց վլհագառ, որ ոչ ցուցաւ՝ ի դարձա.» այսինքն՝ թագաւորաց վլհագատագոյն. Խար:

«Գիտեա, ասէ, ով մեծով դիւցազանց, զի դիմեալ զայ՝ ի վերայ քո Ինէլ.» այսինքն՝ մեծագոյնդ դիւցազանց. Խոր:

«Խարեն զդարզդանիսոն՝ ի մարդկանէ.» Խժնաբ:

«Տատրակ . . . ապղցրախօս՝ ի հաւս վայրենիս.» Աէ-ըեզ:

«Յիմար է՝ որ ընդ վլհա քան զինքն հակառակէ.» Պիդոյից:

## ԳԼՈՒԽ Ե.

Յաղագու համայնքութեան ածական անուանց ընդ գոյականաց:

Ածական անուանք յարելով՝ ի գոյական՝ յայտ առնեն զորպիսութիւն իրայն, զորս գոյականքն նշանակեն. որպէս յայտ է՝ ի զրելոց յերկրորդ մասին. գլ. Ե: Եւ քանզի պէտքէս յարին սոքա՝ ի նոսա, պէտքէս համաձայնին ընդ նոսին. որոց վասն զիցուք զվեց կանոնս:

## Առանք Ա:

Ածական անուանք յորժամ յետագասին գոյականաց, համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ. զօ, «Որդւոյ նենդաւորի բարի ինչ մի եղիցի.» Առանք:

Ահա՝ ի սմին ածական անուանք նենդաւովն՝ համաձայնեալ է ընդ գոյականի իւրում, այսինքն ընդ բառիս որդւոյ՝ թուով և հոլովիւ. զի որպէս որդւոյն է եղական և վերջահոլով տրական, սոյնպէս և նենդաւովնն:

Այսնպէս ևս եթէ բազումք իցեն յետագաս ածականքն, որպատին համաձայնիլ ընդ գոյականին թուով և հոլով. զօ, «Երցոյց՝ եթէ ուստի ուր խոնարհիցաւ և էջ վասն մարդկան մեղադրաց անարժանից.» Առանք:

Այլ գիտելի է նախ, զի ստկաւ ուրեք յետագաս ածականք՝ ի նախդրիւ հոլով՝ յուղղականս յոզնական անուանց զնին երբեմն անհամաձայն. զօ, «Օպսակս անապական՝ ի քէն ընկալանն.» փոխանակ զնելոյ, զպսակս անապականս. Ըստ:

Ուրեք ուրեք ևս յերգս և յոտանաւորս նաև՝ ի վերջահոլովն վասն յարմար ձեւացուցանելոյ զոսա բանիցն. զօ, «Ետես մովսէս զօրինակ կուսին՝ ի սինա լցեալ լուսովն անհարոյց.» սյսինքն՝ անմասացյ լուսով. Ըստ:

Քարձեալ գիտելի է, զի ածականք յանդեալք՝ ի եայ և եան իրը անհոլով զոլով,՝ ի յետագասին հասարակօրէն ոչ համաձայնին ընդ գոյականացն. զօ, «Քարինս արձակեցեր որպարփու սյսու վայտեայ ընդդէմ Գողիագու.» Եստ:

Ըստ այսի է և՝ ի յազգային և՝ ի տոհմային ածական. ղօ,  
«Տունիք տենչալիք տանս նորդութեան.» Երբնիաց:

Առանձ է:

Ածական անուանք, յորժամ նախադասին գոյականաց, ոչ  
համաձայնին ընդ նոսա ոչ թուով և ոչ հոլովիւ. այլ զնին պար-  
զապէս, որպէս էին յուղական հոլովն. ղօ, «Անապական պաս-  
կաց արժանի եղեն.» Ըստ: Ահա՝ ի սմին ածական անուանս ա-  
նապական նախադասեալ գոյական անուանս պատկաց, ոչ իւիք  
համաձայնեալ է ընդ նմա. զի պատկացն է տրական հոլով, և  
յոդնակի. իսկ անապականն է ուղղական և եղակի:

Սոյնպէս է ևս յորժամ նախադաս ածականը իցեն բազում:  
ղօ, «Աներկայ և անպատոր ոգւով զրոշմեսցուք զմեզ.» Խոս-  
չով: Աւր ածականքս աների ու անողոքուր առանց համաձայնու-  
թեան նախադասին գոյական անուանս «Փառվ.»

Եյլ զիտելի է նախ, զի ածականք միավանիք նաև երկա-  
վանիք՝ որպիսի են, մի, այլ մեծ, փոփ, նոր, հին, առարկ, աջ,  
յոդանիս, բաղաւած, բուլը, ևն, բազում անդամ՝ ի նախադասին  
համաձայնին ընդ գոյականաց թուով և հոլովիւ. ղօ, «Միով  
հոգւով զօրացեալքս զիարդ՝ ի մմեանց խորշիմք.» Լաճեր-  
նաց.՝ ի ճառան կարդ. եկել:

«Յամենայն պատուիրանս Աստուծոյ կամաւոր գործելն է զո-  
գութեան արժանաւոր, և մեծաց վարձուց առիթ.» Ասրդ:  
«Բալըրով սրախւ եկի առ քեզ ասա.» Ըստ:

Սորա ուրեք ուրեք միան հոլովիւ համաձայնին անեղական  
անուանց, և ոչ թուով. ղօ, «Տեսե՞ր զառհաւատչեայն նորոյ  
շնորհացս, եթէ ուստի սկսաւ և ուր կատարեցաւ.» Ասրդիւ:  
«Մեծի աւետեաց եղել մի շնորդ (Գարբիել).» Լաճեադ:

«Օմեզ նորոգել՝ ի հիոյ մեզաց.» Ըստ:

Ուրեք ուրեք նաև յոդնավանի ածականք, մանաւանդ յան-  
զեալքն՝ ի գոյն՝ համաձայնութեամք նախադասին գոյականաց՝  
ըստ պահանջելոյ վայելչութեան բանին, այլ՝ ի սակաւ. ղօ,  
«Ամանք չայելասդունէց սովորութեանց ջանան խափանումն՝ ի  
վերայ բերել.» Յով. էմասու:

## Ապահն է :

Եթէ 'ի մէջ նախադաս ածականի և յետադաս գոյականին անկցի բայ՝ կամ՝ ընդունելութիւն, ածականն իրը 'ի բազումն համաձայնի ընդ գոյականին թուով և հոլովիւ . ղօ, «Ըստաքելականացն աշակե բաեցան բանից .» Գրիգոր կան : Աւր ածականս առատէլականացն համաձայնեալ է թուով և հոլովիւ գոյական անուանն բանից վասն ընդ մէջ անկանելոյ բայիս աղախերտեցան :

Այլ երբեմն առանց համաձայնութեան դնի . ղօ, «Համակորչան կարօտանում մեքենայից .» Լամբ :

## Ապահն է :

Եթէ նախադաս ածականն ունիցի զգիմորոշական տառ, երբեմն դնի համաձայն յետադաս գոյականին, և երբեմն անհամաձայն, ըստ պահանջելոյ բառիցն, և ըստ վայելութեան բանին . ղօ, «Աչ յօժարութեամբ ունկնդիր լինել վնասակարացն բանից, այլ օգտակարացն .» Շնորհ: «Երբուսուք ծարաւեաց չափաւորապէս 'ի ծայրածաւալն ծովէ դոյզն ինչ ճաշակ .» Շնորհ:

## Ապահն է :

Եթէ նախադաս գոյականքն իցեն բազում յասուկ անուանք եղականք, յետադաս ածականքն թէ մի իցեն՝ և թէ բազում, ողարախն լինել ըստ թուոյն յոզնական և ըստ հոլովին համաձայն . ղօ, «Խորանօք բնակեաց Սահակաւ և Յակոբաւ հանդերձ ժառանգակցու նոցին աւեաեաց .» այսինքն՝ հանդերձ Սահակաւ և Յակոբաւ ժառանգակցօք այնց աւետեաց . Եթէ :

Սոյնպէս և 'ի նախադասին եթէ ունիցին զգիմորոշական տառ, համաձայնութեամբ դնին . ղօ, «Դու Ըստուած ոչ եղեր ապաշխարութիւն վասն արդարոցն Երլահամու, Խահակայ և Յակոբայ, որք ոչ մեղան քեզ .» Ժամանէլու:

## Ապահն է :

Եթէ ածականն իցէ նախադասեալ գոյականի, նախդիրն դնի 'ի վերայ ածականին . ղօ, «Եղաչեմ զամենեսեան զարթ-

նուլ՝ ի մահահրաւելը թմբրութենէ կենցաղոյս .» Ը նորիակի : Ուր նախդիրն բացառական հոլովոյս՝ ի նմբռութենէ եղեալ է միայն՝ ի վերայ նախադաս ածականի նորա, այսինքն՝ ի վերայ նախահրաւելը ին :

Աւ ևս եթէ նախադաս ածականքն իցեն բազում, և ունիցին զշաղկապդ և, զնախդիրն պարա է զնել՝ ի վերայ ամենայն ածականաց . կօ, «Օ անօգուտ և զմնասակար բանս ոչ տալ խօսել լրզուին, այլ լռել .» Ը նորի :

Խակ եթէ յառաջ քան զշաղկապաւոր ածականն կայցէ բառ ինչ, որպէս դերանուն, կամ միջական անուն . ևն, յորոց վերայ իցէ եղեալ նախդիրն, ոչ ևս է հարկ միշտ կրինել զայն՝ ի վերայ յաջորդ ածականաց . զոր օրինակ, «Աւրեմն՝ ի յերոց ստայօդ և չարաթոյն բանից մոլորեալ են՝ ի պանքոյ հայոց ըզգուշանալ .» Ը նորի :

«Յամենայն ազտաղուկ և ալէկոծ փորձանաց մեկուսի բնակեալ .» Լամբ :

«Ա այրենացեալ յառաջին ընտանի և խաղաղ բնութենէն՝ կոհ հակո լեռնաձևն յարուցանէ .» Ապրէ :

«Որոց պատուիրեմք յայսմհետէ՝ ի բաց կալ յայտպէն՝ աներկիւզ և չար սովորութեանց .» Ը նորի :

Այլ եթէ նախընթաց ածականքն իցեն առանց շաղկապի, նախդիրն իրը՝ ի բազում զնի՝ ի վերայ առաջնոյն միայն . կօ, «Ճրաժարեցոյց՝ ի հեթանոսական անկարգ շատխօսութենէն .» Իժնադ :

«Ճշկեա զշրասապ ջերմնական տոչորումն մղձկեալ սրտիս .» Եպքէ :

«Դրբե բազմութիւն զօրաց զմեծանիստ լայնատարած դաշտովքն իջանեն (մարախք) .» Ա եցը :

Խակ եթէ յետադաս գոյականքն իցեն բազումք յօդեալք շաղկապաւ և, նախդիրն զնի ոչ միայն՝ ի վերայ ածականին, այլ և՝ ի վերայ երկրորդ գոյականին, և չետագայից նորա . կօ, «Օ պատշաճ կարծիս և զդիտութիւն վասն նորա ոչ ունէին .» Իժնադ :

«Օ եկամուտ չարիսն և զամբարտաւանութիւնն մերկացին .» Իժնադ :

«Օհրեշտական կարգս և պլարս յաշխարհի յանձնն առեալ բերին» (կուտանք). Կուլ ընծայ:

«Օայս վեցերորդ կանոն մերձեցն նուե առ նախադաս գոյականս. իբր զի եթէ գոյականն նախադասեսցի ածականին, ըդ նախդին պարտ է զնել՝ ի վերայ գոյականին. ղօ, «Օայր հաւատարիմ զործ է գտանել.» Առակ:

Այլ եթէ յետադաս ածականըն իցին բազում, նախդին իբր ՚ի բազում զնի միայն՝ ի վերայ նախադաս գոյականին. ղօ, «Օարս պատուականս և պիտանիս հաստատէր ՚ի նահապետութիւնս.» Յակն:

«Լաւ է մանուկ աղքատ և իմաստուն՝ քան պմագաւոր ծերե անմլոտ.» Ճարդն:

«Ունի զօրէնս խաղաղականս և փրկարանս.» Եղիշ:

«Եւ այն անկաւ յերկիր բարի և պարարտ.» Պատկ:

Խակ երբեմն զնի նաև ՚ի վերայ երկրորդ յետադաս ածականին. ղօ, «Օայր զտարթ և զառատ սիրէ Ած.» Առակ:

«Ընկալու... զիւնանս տրտմական և զախտալից.» Ենորի:

«Տանջին ՚ի ճգունս զանազանս և ՚ի բազմապատիկս.» Ասրդ:

Խ վախճան այսր կանոնի պարտ է զիաել, զի եթէ ՚ի մէջ գոյականի և ածականի մացէ բայ, նախդիրն սիստէս կարէ զասիլ. զի երբեմն զնի ՚ի վերայ նախադասին միայն. ղօ, «Փ ծայրագոյնն ժամանեցաք մաքրութիւն.» Լամճ:

Երբեմն զնի ՚ի վերայ երկուցն ևս. ղօ, «Կարեցաբար մատուցեալ զծայրագոյն ցուցեր զինամն.» Կառ:

Գոյական անուանէ՝ ՚ի պեղի աժականաց:

Գիտելի է, զի ուրեք ուրեք գոյական անուանը ինչ իբր ածական յարին յանուանս. ղօ, «Ա՞ր ապաւած սիրտ... ՚ի յիշատակին զայս ոչ երկրողագէ տուաջի նորա.» Լամճ:

«Ապաւէր և մաշէր զիտաւար խորհուրդս նորա.» Եղիշ:

«Օժապան ցանկութիւնն ՚ի բաց վարել և զընասնի ողջախուհութիւնն անմլաս ՚ի ներքս բնակեցուցանել.» Ասրդ:

Այնպէս վարին երբեմն և անուանք աղգաց, ևս և անկօց. ղօ, «Յայն լեզու ուսեալ (Եղիաղար) պատմադրեաց զզործն Շաղհոյ և Յուլիանու.» Խորին:

«Ար կոչե՞ի հայ բարբառ կորուստ +» Յայտնութեան :

«Օտունն մեծ զրուագեաց ճայր փայտիւք .» Ե հօաց :

«Ըստել պատիւ մի դնէք բարդի ծառոյն քան այլ ծառոց .» Ե նորհայլե :

Ըստ սոսա վերաբերին և այնք, որք յարին 'ի բառդ անուան դո, «Եպիսկոպոսն անուան 'ի հելենացի լեզուէ է .» Ա ամբ :

Ուր բառու չպիսկողուան դնի իբր ածական բառիս անուան, և կամ

իբր բացայայտիչ :

Բառ այսմ է տեսանել և յօրինակսդ որ զկնի :

«Հաջին անուան զանմարմին նշանակէ զընութիւն .» Ե նորհ :

«Հայրդ անուան մի է հոգեւորաց և մարմնաւորաց .» Եղիշե :

Երբեմն նաև վերացեալ անուանք յատկացուցչաբար եղեալ 'ի մէջ բերին զզօրութիւն ածականի. զնի օրինակ, «Հոգի քց բարութեան առաջնորդեսցէ ինձ .» Առև. այսինքն՝ հոգի քց բարի առաջնորդեսցէ ինձ :

«Անօթ ընարութեան է ինձ նա .» այսինքն՝ անօթ ընտիր .

Գործ :

«Հպարտացայ հողս անարդութեան .» այսինքն՝ անարդ հողս .

Նոր:

### ԳՏ. ՈՒ. Օ.

Յաղագ համայնութեան աժական անուանց ընդ աժականց :

Չորեքին համաձանին ընդ միմեանս ածական անուանք. «Եախ իբր ածական. դո, «Դմաստակ իւլլադար. Ճարտասան անմուսնի... ունայնաբան շաղակրատ... ովտիսային աղահ .» Եարեկ . Ուր բառքս իւլլադար, անճուտնի, ունայնաբան և ովտիսային են ածական բառիցս իմաստակ, ճարդասան, շաղակրատ և ադակ :

Երկրորդ իբր ինդիր. դո, «Ի մարմնի վարս ստացեալ անհամեմատ ճարդաստորաց .» Ե առք: Ուր ճարդաստորացն է արական ինդիր անհամեմատնի :

Երրորդ իբր բացայայտիչ, այլ 'ի սակաւս, դո, «Օներդ գործութիւն լեզուին 'ի ներհակացն կամի ցուցանել, 'ի բարդոյն ասեմ և 'ի լուսնին .» Առաջ: Ուր ածականք 'ի բարդոյն և 'ի լուսնին լեալ են բացայայտիչ ածական անուանս 'ի ներհակացն :

**Չորրորդ՝** իբր յատկացուցիչ, այլ այս 'ի սակաւս յոյժ։ զօ, «Յայտ արար զտնօրինականան կենաքարին։» Արէադ. վերապահը մւր ածական անունս կենաքարին է յատկացուցիչ ածականիդ պահօքինականներ։

**Յայտմ** ամենայնի զոր ասացաք, թէպէտ ածականիք ընդ ածականս կազին, բայց յամենայնի ևս զօրութեամբ գնին զոյտ ականք նոցին, որպէս և յայտ է։

Ուրեք ուրեք ևս համարին եղեալ իբր գոյական։ որպէս յասեն, «Որ ելեր 'ի բարձրադիտակ քառաթեին։» Եաբ. ածական անունս բարձրադիտակ համարի իբր գոյական եղեալ։ որում լեալ է յատկացուցիչ ածական անունգ փառանենին իբր գոյական։

### ԳԼՈՒԽ Է.

**Յաղախ** համայայնութեան միջական անուանց, «բժտ ասին, նուաս- իանի, հանրականի, վերբերականի, հարցականի և մասնականի։

Սոքա առ հասարակ թէպէտ ըստ համաձայնութեան այլոց անուանց վարին, բայց քանզի ուրեք ուրեք փոքր մի այլաղդ գնին, վասն այնորիկ արժան համարիմ ասել ինչ ինչ զսոցանէ 'ի մասնաւորի, խօսեցեալ նախ զինդրառութենէ սոցին։ զորմ գիտելի է, զի 'ի մէջ սոցա հանրականքն և վերբերականքն ոչ աւնուն զինդիր։ բայց եթէ գուցէ ըստ պատահման, և կամ վասն կարգի բանին։

Խսկ թուականիք, հարցականիք և մասնականիք հասարակօրէն առնուն զինդիր 'ի հոլովն բացառական։ զօ, «Երձակեաց Երկուակ յաշակեբացն իւրոց։» Մատու։

«**Օ** յարարածոց . . . այնպէս պատուեաց Եստուած՝ որպէս զքեղ։» Ապրդ։

«**Անմեղ** լինել առնե՞ 'ի մարդկանէ անկար է . . .» Լամբ։

«**Զար** է նախանձ, և որք նովաւ վարակեալք են, չածեն ինչ 'ի պատշաճիցն զմտաւ . . .» Խդնադար։

«**Օ** յարարածոց . . . յէլիցն ըստ իւրում ընթացիցն ուղղէ . . .» Լամբ։

Ուրեք ուրեք ևս առնուն սոքա առ հասարակ զներգոյական, զօ, Զորբորդ 'ի նուա . . . 'ի կերպարանս արծուոյ։» Գարեգ ապրը։

«Չունի ստ ՚ի նոսա անուան չարութեան.» Ըստ:

«Ո՞՛ի նոսա իւրումն ոչ ծառայեաց ախտի.» Երեսպալես:

Երբեմն ևս թուական անուանք ՚ի յարիլն ՚ի բառդ Ավանուն խնդիր զնոյն ՚ի գործիական հոլովն. զօ, «Անկան առաքեալքն առաքինիք ՚ի բով անդր թուով երկուասանն.» Եժան:

«Վատունք ձեռաց նորա և ոտից վեց վեց՝ ժամն և չըս թուով.» Եղանականորաց: Վատիցուք այժմ խօսել զայաց յամենայնէ ՚ի մասնաւորի:

### Առան Անուական անուաննց:

Սոքա առ հասարակ միշտ իբր ածական վարին. և ըստ իմիք ըստ կանոնի ածականաց համաձայնին ընդ գոյականաց; յորս յարին. վասն որոյ կամեցեալ համառօտիւ անցանել զորքօք՝ պարտ է զիտել, զի ՚ի մէջ սոցա ընդարձակն, որպէս Մի, երկու, տասն, երկուտասան, քսուատուն, եօթանասուն, հարիւր, երկերիւր ևն, յորժամ յետաղասին գոյականաց՝ հասարակօրէն համաձայնին ընդ նոսա. զօ, «Երկեցաւ աշակերտաց իւրոց երկուասանիցն.» Ընորի. ընդհանուր:

Տայց երբեմն ևս առանց համաձայնութեան դնին. զոր օրինակ, «Վերձ է յԵրուսաղէմ իբրեւ ասպարիզօք հինդ.» Ե. Վահ:

Այլ ՚ի նախադրիւ հոլով գրեթէ միշտ անհամաձայն դնին. զօ, «Յետ Երշաւրի թագաւորէ Երշակ ամս իննեացան, Երտաշէս ամս ժամն.» Խոսք:

Խակ ՚ի նախադասիլն հասարակօրէն ոչ համաձայնին. զօ, «Օկնի երեսուն ամաց սպան Կայէն զաւարէլ.» Օչափար. կան:

Ուրեք ուրեք ևս համաձայնութեամբ դնին. զօ, «Ակն ՚ի Յորդանան ՚ի լրումն երեսնից ամաց.» Ընորի:

Թառական անուանք պատականէ, որպիսի են՝ Երկիրորդ, երրորդ, եօթներորդ, մետասաներորդ, ևն, յորժամ յետագասին անուանց՝ միշտ համաձայնին ընդ նոսա. զօ, «Յամնեանն մետասաներորդն որ օր էր ամսոյն, երեկցան գլուխք լերանց.» Օմնդոց:

Խակ յորժամ նախագասին, իբր ՚ի բազումն անհամաձայն դնին. զօ, «Յերբորդ ժամուն ստեղծաւ Եղամ.» Խոսքավ:

ԱՅԼ երբեմն համաձայն կօ, «Ա հինգհարիւրեւրովի ամի (կենաց Եղի) սպառնալիք պատուհասին ելանէին յասառուծոյ. և 'ի վըհարիւրովի ամի անդ ջրհեղեղն հասանէր յաշխարհ.» Խոչ. ընծայ:

Թռուական անուանք անցնելսականի, որպիսի են՝ Երկօրեան կամ երկօրին, չորեքեան կամ չորեքին, եօթանեքեան, տանեքեան; ևն. հասարակօրէն համաձայնութեամբ գոյականաց վարին, թէ 'ի նախադասին և թէ 'ի յետադասին. կօ, «Օք ոչ եթէ Երկուում ոտիւք կազայցէ ոք, և ոչ յայտ լիցի.» Խոսքով: «Յայնչափ քաջութեան սրտի մանկանցն եօնանեցունց սրտարեկ լինէր թագաւորն.» Է: Մակաբ:

Թռուական անուանք զափականի, որք են՝ Երբեակ, չորբեակ, եօթնեակ, ութեակ, յիննեակ, ևն, ևս և կրիտականի, որք են Երեքպատիկ, տաննպատիկ, քսմնապատիկ, ևն, հազեւ երբեք յետադասին գոյականաց. այլ հասարակօրէն նախադաս լինելով յարին 'ի նոսա առանց համաձայնելոյ լինդ նոսա. կօ, «Տօնեմք (զվարդավառն) յեօթներորդում ամսեանն ըստ յաւիտենիս ըստ այսմիկ եօննեակ շըջագյութեան.» Խոսք. կարդ: «Հատուցանէր զգարձ փոխարինին պատնդադին յաւելուածով.» Քով. կան:

Ա առան հանցական անուանց:

Հանրական անուանի, որք են՝ ամենեքեան և ամենեքին, ընդ որս են և բոլորեքեան և բոլորեքին՝ որք և իրը ածական վարին, հասարակօրէն ինքնին 'ի զործ ածին՝ զօրութեամբ ունելով զգոյական. կօ,

«Որ ամենեցունց իշխէ՝ յամենեցունց դոզայ.» Ապք:

«Տեսանեն... զղատաւորն ամենեցուն Քրիստոս նատեալ լինդ աջմէ հօլն բոլորեցուն.» Խժնաբ:

Խակ 'ի յարին յանուանս և յընգունելութիւնս՝ և մանաւանդ 'ի զերանուանս՝ միշտ համաձայնին ընդ նոսա, թէ 'ի նախադասին և թէ 'ի յետադասին. կօ, «Օտամենեանին ինձ յանձնարարեալն ոչ կորուսից.» Եպք:

«Օտամենեան զնոսա այսու միով բանիւս աւետաւորէ.» Խոսք:

ԱՅԼ գիտելի է, զե յաճախ զործածութիւն հանրական ա-

նուանց ընդ անուանց՝ ծանրացուցանէ զընթացս բանին. վասն որոյ բազում անդամ՝ ի տեղի սոցա դնեմք զբառդ ամենայն. զորոյ զգործածութենէ արժան է գիտել, զի սա յորժամ յարի յեղակի ցուցական դերանուանս, միշտ և յամենայնի համաձայնի ընդ նոսա. զօ, «Ա ամն այսր ամենայնի ածցէ զքեզ աստուած՝ ի գատաստան.» Խաղալ:

«Դ վերայ ամենայնի այսորիկ անսամ՝ տէր.» Երայ:

Եւ յորժամ՝ ի յոգնականս յարի, ըստ թուղյն եղական դնի. զի ըստ նշանակութեանն գոլով բազմաւորական՝ եղական ձայնիւ յոգնական համարի. զօ, «Եյոցիկ ամենայնի ապերախտ գտան.» Խճիստ:

«Դու ես տէր և գլուխ նոցա ամենայնի.» Ա արդ հարց:

Իսկ յորժամ նախադասի անուան կամ ընդունելութեան, ոչ համաձայնի ընդ նոսա. զօ, «Եմենայն պարծանաց պարծանք խոնարհութիւնն է.» Ասրդ:

Եյլ՝ ի յետադասին՝ ի յեղականմ համաձայն դնի.» զօ, Եսն ամենայնի գլուխ Քըլիսոս է.» Ա. կորինի:

Իսկ՝ ի յոգնականմ անհամաձայն դնի ընդ թուղյն. զօ, Երարածոյս ամենայնի արար խաղաղութիւն.» Ասրդ:

«Դու սկիզբն և սպատճառ բարեաց ամենայնի.» Եսար:

«Առեալ զգլաւաւորսն զամենայն չուէ՝ ի մծբին.» Խոր:

Եյլ գիտելի է, զի սա յորժամ նախորիւ հանդերձ լինի ածական, նախորիրն երեսն կրկնի՝ ի վերայ իւր և՝ ի վերայ այնք՝ յոր յարի. զօ, «Եսնիցես զարդարութիւն յամենայն՝ ի կեանս քո.» Տոբ:

«Եկն եհաս ժամանակ, զի զամենայն զիեղա անուն՝ ի մէնջ՝ ի բաց բարձուք.» Եղալ:

«Օ հպարտութիւն զամենայն՝ ի բաց ընկեցուք.» Երբ:

Ա առն վերբերական անուան:

Ա երբերական անուան, «լը են այսպիսի, այդպիսի, այնպիսի, սոյնպիսի, զոյնպիսի, նոյնպիսի, այսքան, այդքան, ևն, իրր ածական վարին, և՝ ի յետադասին միշտ համաձայնին ըստ կանոնի ածականաց, թէպէտ և հազիւ ուրեք է յետադասիւ սոցա: Իսկ՝ ի նախադասին իրը՝ ի բազումն անհամաձայն

գնին. զօ, «Պղձամ՝ աեսութեան այսպիսէ անկոյ.» Առաջիսոր: «Պարտիմք լինել արթուն, զի լինիցի մեղ յայստան վտանգից զերծանել.» Խճի:

Խսկ երբեմն համաձայն դնին՝ի վերջահոլովս. զօ, «Երաց լերուք, յայտպիսեաց ոչխարազգեստ գայլոց.» Շնորհի: «Օբարդ բժշկեսցիս, անձն իմ եղկելի, 'ի յայստանեաց տիգաց խոցոտեալ.» Կարելի:

«Դարձեալ՝ եթէ անկցի 'ի միջե բայ, իբր բազումն համաձայն դնին. զօ, «Որք այսպիսէո՞ւ վարեին խորհրդովք... զամենայն տուժեցան.» Խճիսոր:

«Յայստանեացս սա որոշեալ պատշաճագոյն յարմարութեանց.»

Պիտոյից:

«Սասցի 'ի վերոյ՝ 'ի վերջահոլովս. զի 'ի յուղական և 'ի նախրիւ հոլովս յոգնականին ոչ երբեք համաձայնին. զի ոչ լինի ասել այսպիսէք բանք, յայնպիսիս իրս, զայսքանս ժամանակս, ևն. այլ այսպիսիս բանք, յայնպիսի իրս, զայսքանս ժամանակս, և այլն:

### Ա ասն հարցական անուանից:

Հարցական անուանետ, որք են՝ ո, ով, զի՞նչ, ի՞նչ, ո՞ր, ո՞րքան, քանի, որպիսի, զի՞նչպիսի, պէսպէս վարին. և նախ 'ի մէջ սոցա բառքս ՞և ՞և յորժամ՝ի գործ ածին իբր անուն հարցական, իբրու գոյական վարին. զօ, «Օ՛կարէ գալ առաջի դոցա յանդուգն յարձակման.» Խճիլի:

Խակ վասն այլոց հարցականաց գիտելի է, զի զի՞նչն երբեմն հանդերձ բայիւ վարի իբր գոյական կամ իբր նոյն. զօ, «Օք՞նչ իցէ, որ լինելոց իցէ.» Խճիսոր:

«Եւ արդ զի՞նչ գործեսցես՝ անձն իմ կորուսեալ.» Կար:

Եւ երբեմն յարի յանուանս իբր ածական առանց հոլովման. զօ, «Օք՞նչ վայելումն իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցաւօք ուտիցեմ.» Կարելի:

Ըստ այսմ և հարցական անունս ի՞նչ երբեմն իբր գոյական վարի առանձինն, և երբեմն իբր ածական յարի յանուանս. զօ, «Եւ արդ չէ՞նչ կային այս ամենայն արթնութեան պէտք.» Խճիսոր:

«Օսծիէ (բանսարկուն) խարէութեամբ իւրով զսկիզբան բար-  
ւոյն և չարին, եթէ ուսամի և յէնէ իրս գոյանայ .» Սարդ :

Խոկ հարցական անուանքս ո՞ր, ո՞րքան, քանի՞, որպիսի՞,  
զի՞նչպիսի՞, որք ածական վարին, հասարակօրէն նախադասան  
անուանց . երբեմն առանց համուձայնելոյ . զօ, «Յո՞ր մահուանէ  
յորպիսի՞ կենդանութիւն փոխեցաք սիրելով զեղռարս .» Սարդ :

Բայց երբեմն համաձայնութեամբ, մանաւանդ ո՞ն և ո՞րդանն .  
զօ, «Որո՞ւմ կորատեան և գեհենի ակնկալութիւն ոչ է առա-  
ջի ձեր .» Ընդդ :

«Որդանեաց տարակուսանաց խաւարի՞ լուսաւորութիւն յուսց  
կենաց խառնեցից .» Եարդէ :

«Օ այսպիսի կարծրութիւն նիւթոյ . . . ոչ զիտէ ոք՝ թէ, ո՞ւ-  
ովիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց .» Խորդ :

### Վասն ճառնական անուանց :

Վասնական անուանէ՝ ոմն, ոք, իմն, ինչ, ընդ որս են և սո-  
քա, մի իմն կամ մի ոմն, որ ոք, որ ինչ, ոչինչ, ինչ ինչ,  
առենայն ինչ, որ ինչ միանդամ, ևն, սոքա երբեմն ինքնին  
վարին՝ ի բանս իրը գոյականք . զօ, «Ո՞ն իշխէ, և ո՞ն իշ-  
խի .» Խորդ :

«Ո՞ր ո՞ւ զախամն իշխանութեամբ կարէ սպանանել, և զառա-  
քինութիւնս կացուցանել, թագաւոր արդար է .» Սարդ :

«Օ ո՞ր ինչ միանդամ խոստովանի ոք, կորուսանէ, եթէ զմեզմ  
և եթէ զարդարութիւն .» Սարդ :

Վայլ յորժամ վարին սոքա ընդ անուանց կամ ընդ ընդու-  
նելութեանց, լինին իրը ածականք մանաւորիչք նշանակու-  
թեան նոցա . զօ, «Վշարչ ինչ է բնութիւնս .» Խորդ :

«Օ մո՞ն գետպանն ձեռվ փութապէս առաքեցին .» Եղիշէ :

«Ինչ ինչ և յառլւոց ընկալան տեղեկութիւն կարգաց .» Մ  
ինչ ինչ տեղեկութիւն . այս է, քանի մի . Լամբէ :

Սոքա՝ ի յետադասիլն անուանց կամ ընդունելութեանց,  
երբեմն ևս՝ ի նախադասիլն, եթէ իրը մանաւորիչ նշանա-  
կութեան նոցա վարեցին, հասարակօրէն թուով և հոլովին  
համաձայնին ընդ նոսա . զօ, «Օ զաղթեալմն անդրէն դարձու-  
ցանէ . . . բաց՝ ի նախարարէ ու մէնէ, որոյ անուն Օտայ կոչիւր .»  
Խորդ :

«Պատուասիրաց սմանց զանձս առաջի դնելին.» Յովն. կան:  
«Ու ՚ի ժամանակի էմբ+, ոյլ ժամանակը ՚ի նմանէ զոյացան.»  
Երևէ:

«Լուայ յումնէ ոչ պարտաւորէ.» Եապէ:

Իսսա իննն երբեմն առանց համաձայնութեան դնի. ղօ,  
«Վեծի ին ցանկացար.» Կու:

«Սա աւանիկ ազնուականի ին ցանկացեալ են.» Եբ:

«Հանէ իրը թաթառվ ին ջուր ՚ի ծովէն.» Ապր:

Սա, այսինքն՝ իննն և բառդ ին բազում ուրեք իրը զարդ  
դնին. ղօ, «Եյսպիսեաւ ին պատրաստութեամբ անձին հան-  
գերձանաց կուռ վառեալ.» Եապ:

«Օպատմասս հարստութեանն մեք ին ոք գիտէաք.» Երէնէ:

Առան ճառնական անուանց Միւս, երկաքանչիւր և իւրաքան-  
չիւր:

Սոքա իբր ածական վարին, բազում անգամ զօրութեամբ  
ունելով զզոյականն. ղօ, «Վին մւստան ձայնակցի ՚ի յանցա-  
նելն.» Լապէ:

«Երկառակներոց աղօթիւր տօնողացս ողորմեա.» Եապ:

«Խրատանշիւր ՚ի վերայ իւրոյ արմատոյ արձանացի.» Լապէ:

Իսկ յորժամ յարին ՚ի զոյականս, հասարակօրէն նախադա-  
սին նայա, և իրը ՚ի բազում անհամաձայն դնին. ղօ, «Խմբ-  
կողմանէ գետոյն.» Խոր:

«Երկառակներ ծայրիւր ... ծածկեալ է յեղականացս բնու-  
թեանց.» Եապէ:

«Խրատանշիւր գործոց հասուցմանք լինելոց է՝ և խորհրդոց  
և բանից քննութիւնք.» Ապր:

Բայց երբեմն ևս համաձայնութեամբ դնին. ղօ, «Բսա մւ-  
ստաճ բանի սոյն այս յայտնի ցուցանի.» Խոսքով:

«Տեսուք պերկառակներոց սոցա բարերախտութիւնս.» Պիո:

«Վարձէին անվեհեր փութով զհաւասացեալ հօմն յերատան-  
շիւրուան ժամանակի.» Յովն. կան:

«Ասն զե յերատանշիւրոց նոցա շարափառութիւնք յոյժ ան-  
նմանիք են միմեանց.» Յովն. իմաստ:

## ԳԼՈՒԽ Ը.

Յաղագո համայայնութեան դեբանուանց ընդ դեբանուանու :

Համաձայնութիւն գերանուանց ընդ գերանուանս յայտմէ , զի եկեալ սոցա առ միմեանս համաձայն թուով և հոլովիւ վարին 'ի բանս իրբ նոյն , այսինքն իրբեմ մի գերանուն : Իսկ թէ ոյք ընդ որս յարին , զիտելի է , զի 'ի մէջ սոցա էական գերանունս ինչն՝ յարի յայլ ամենայն գերանուանս ընդ իւրաքանչիւր գիմաց նոցին , (բաց 'ի ստացականաց) :

Եւ նախ յարի յէականս . զօ , «Օայլս խրատեմ , և էս ինչն անփորձ եմ » . «Ապէէ :

Երկրորդ՝ յարի 'ի ցուցականս . զօ , «Աս ինչն զմելս մեր բառնայ » . Կու :

Սյոնդէս յարին ընդ միմեանս նաև ցուցական գերանուանք . զօ , Արյն այս ձայն զամենեսեան յարուցանելոց է 'ի գերեզմանացն . » . «Ասնայ :

Պարտ է զիտել , զի 'ի յարիլ սոցա ընդ միմեանս 'ի նախողիւ հոլովիւ , նախդիլն զնի 'ի վերաց ամենեցուն , զօ , «Ի այն յայս միաս երգեաց զերեմներորդ առաջնորդ սազման » . Առքի :

## ԳԼՈՒԽ ԹՅ.

Յաղագո համայայնութեան դեբանուանց ընդ անուանց . և նախ

յաղագո համայայնութեան էական դեբանուանց»

Ես , զու , ինըն , իւր :

Դերանուանք որովհետեւ այլեւայլ են տեսակաւ , այսինքն՝ էական , ցուցական , ստացական , յարաբերական և զիմօրոշական , այլեւայլ օրինակաւ յարին յանուանս , և պէսպէս եզանակաւ համաձայնին . զորոց կամեցեալ խօսիլ կարգաւ՝ ասասցուք նախ զհամաձայնութենէ էական գերանուանցս ես , դու , ինչն , էւր . ընդ որս են և գերանուանքս մեծանց և իշերաց . (ևս և ցուցական գերանուանքս աս , դա , նա . յորբամ 'ի զործ ածին էականապէս) :

Առքա ամենքին զոյականապէս վարին . և ըստ օրինակի զոյ-

ական անուանց լինին անուն բայի, խնդիր բայի և խնդիր ընդունելութեանց որպէս ունիմք ասել յիւրեանց տեղիս: Եւ ևս՝ խնդիր նախաղըութեանց որպէս յայտ է յեզելոցն յառաջին մասին:

Խոկ՝ ի յարին յանուանս, լինին նախ խնդիր անուանց զսյականաց և ածականաց, որպէս ունիս տեսանել՝ ի խնդրառութեան նոցա որպիսի է և այս «Օքիառաւորիչ» իշխ վաստառը: Եւըն: Ուր գերանունս իշխ է խնդիր ածական անուանս պատուածութիւն:

Երկրորդ՝ լինին յատկացուցիչ ղօ, «Աիրա ի՞մ ուրախ եղել յամենայն վաստակս ի՞մ:» Ճառղուկ:

Երրորդ՝ լինին բացայայտելի ՚ի ձեռն զսյական անուանց համաձայնելով ընդ նոսա թուով և հոլովիւ. ղօ, «Ես իմաստութիւն բնակիմ՝ ի խորհրդեան:» Երակ: Ուր եսն լեալ է բացայայտելի: և իմաստութիւնն բացայայտիչ:

Չորրորդ՝ լինին բացայայտիչ ածական անուանց զոր օրինակ, «Օքէ զմեղաւորս արժանի արարելք վաստառորել զքիզ:» Յուղ: իմաստ:

Ըստ այսմ յարին սոքս բազում անդամ և յածական ընդունելութիւնս իբր բացայայտիչք ղօ, «Թաէ յուսահատելոյս ինչ միջնորդեացես... թէ՝ ի կործանեալս յէս ակնարկեացես:» Կար:

## ԳԼՈՒԽ Ժ.

Յաղաց համայնշեան նույնական դելուստանցս Սա, դա, նա:

Սոքա յորժամ հոլովին՝ սա, սորա դա, դորա և Ան, վարին զսյականապէս և պէսպէս օրինակաւ՝ ի դործ ածին:

Խոկ՝ ի հոլովիլն սա, սորին դա, դորին նա նորին կամ նորուն, հասարակօրէն վարին ածականապէս և իբր ածականք յարին յառաջոյ յանուանս՝ համաձայնելով ընդ նոսա թուով և հոլովիւ, և այս հասարակօրէն՝ ի հինդ հոլովս միայն:

Խ սեռականն ղօ, «Պառւղն թէպէտե նորին ծառոյն է և ծաղկին, այլ ամենայնիւ որոշեալ է՝ ի նոցանէ:» այսինքն՝ նոյն ծառոյն: Ապադ:

Խ վերջահոլով տրականն: ղօ, «Եւ քանիզ այս ըստ ամին

մասին կնքեցաւ և ճշմարտեցաւ, առ այս մահու, և ես վկայ-  
եմ կրկին հաստատեալ .» Եսար:

Ե գործիականն . ղօ, «Ե նոյն փառաւորութիւն նոզին հո-  
գուով կոչեցաք .» Երպեկ:

Ե պարառականն . ղօ, «Օ ամենայն զբանակն զնովին տեղեա-  
գուումարէր .» Պատրժ. աղեւ:

Ե ներգոյականն . ղօ, «Ե նմի յամսութեան կան .» Երպեկ:  
Եսկ յայլ հոլովս հասարակօրէն իրը զոյական վարին. և  
եթէ հարկ լիցի ածականապէս վարել, 'ի տեղի սոցա զնեմք բզ-  
ցուցական գերանուանս Այս, այդ, այն. սոյն, զոյն, որպէս տես-  
ցի 'ի ստորեւ:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

ՅԱՂԱԳԻ համայնութեան ցուցական դեղանուանց

Այս, այդ, այն:

Սոքա միշտ իրը ածական վարին, բազում անգամ զօրու-  
թեամբ ունելով զգոյականն . ղօ, «Ու ինչ 'ի խոր է քան բզ-  
քեզ, զայն մի քններ, և որ ինչ հզօր է քան զքեզ, զայն մի  
հարցաներ. որ ինչ հրաման տուաւ, զայնու ած զմիտս քոյ .» Կու:

Այլ յորժամ յարին սոքա յանուանս 'ի նախագահին հա-  
սարակօրէն համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ բաց 'ի  
բացառականաց յանգելոց 'ի է. ղօ, «Եպաշխարութիւն չեք  
յայնմ աշխարհի .» Ածբ:

Բայց երեմն ևս առանց համաձայնութեան զնին, այլ սա-  
կաւ ուրեք. ղօ, «Ընդէր կորուստ այդ իւզոյդ .» Ապար:

Եսացի բաց 'ի բացառականաց յանգելոց 'ի է. զի ըստ այսմ  
ու համաձայնին սոքա 'ի նախագահին, բայց եթէ կրկնեցի  
նախադիրն . ղօ, «Եսկ քահանայական կարգն յայսցանէ 'ի գոր-  
ծոցս որիշ է .» Լամբ:

Եսկ յորժամ յետագառին սոքա անուանց՝ համաձայնին ընդ  
նոսա թուով և հոլովիւ . ղօ, «Վմենայն պառզը իմաստու-  
թեանն այնովին, որ զողորմութիւն ծնանի, բարի են .» Ապար:

Հաղիւ ուրեք ևս անհամաձայն դնին. կօ, «Ճանթես կացողաշատութեանս այս սկիզբն.» Եսար:

Ի համաձայնութեանս այսոցիկ գերանուանց հարկ է դիտել և զայս, զի՞ն նախադասին սոցա, նախդիբն հասարակօրէն դնի միայն 'ի վերայ սոցա. կօ, «Քոյով խորհրդով անցոցին պայս անցս ընդ իս և ընդ զօրս.» Եղիշե:

Խսկ 'ի յետագասիլ սոցա նախդիբն միշտ և անվթէպ դնի թէ 'ի վերայ սոցա, և թէ 'ի վերայ անուանցն, բաց 'ի նախդըրէս այս 'ի վեց հոլովս:

Ի նախդրիւ տրականն. կօ, «Այսպէս ասէր տէր տէր ցուկերադ ցայդոսիկ.» Եղիշե:

Ի հայցականն. կօ, «Ընդ ամենայն ազգս առներ պանկարգութիւնս պայս.» Եղիշե:

Ի բացառականն. կօ, «Ուրախարար զոհագործութեամբս ապրեցուցես զիս յորոգայթէ յայսմանէ.» Յովե. Յմասպ:

Ի պատմականն. կօ, «Եաւ որ մարզպան աշխարհին լեալ էր... մեծապէս գոհ էր զառնէս զայսմանէ.» Եղիշե:

Ի պարառականն. կօ, «Օքազմօք զայտիւն զանց արարեալ փութացուք հասմանէ յընչաւէտ հօր առաս որդին.»

Ի ներգոյականն, կօ, «Ճռագաւոր առնես զամենեսին... որք թագաւորեցին 'ի վերայ ախտից 'ի կեանս ցայսոսիկ.» Կոռարով:

Բատ այսմ կրկնին հասարակօրէն և նախադրութիւնքս ըստ և ընդ. կօ, «Գնել զնոսա յաւերակ և յանապատ... ըստ առուրս ըստ այսմիկ.» Եղիշե:

«Ա այ անձանց նոցա, որք զյաւիտենականն բարեկենդանութիւն ընդ ապականացուիս ընդ այսմիկ փոխանակեն.» Իգնատ:

Սոյնպէս ևս եթէ նախդիրքդ զ յ ե 'ի, իցեն եղեալ 'ի վերայ նախընթաց ածականի, հարկ է կրկնել զնոսին, եթէ գոյականն անկեալ իցէ 'ի մէջ ածականին և գերանուանն. կօ, «Օքարթոյց զմիտս նոցա... զջշմարիտ պատկերէն պայնմանէ բուսն հարկանէլ.» Ասրդիս. տէս յընդարձակն. կ. 11:

## ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղաք համայսյուն-լեռն ցուցական դեբանուանցաւ  
Այն, զոյն, նոյն :

Սպաս միշտ իրը ածական վարին . և զի յատուկ հոլովումն  
ոչ ունին, այլ միայն նախդրիւ հոլովին, յորժամ նախագահին  
անուանց, անհամաձայն դնին . զօ, «Զայնակից առյ ուղղափա-  
ռութեանա է սուրբ եկեղեցիս Աստուծոյ .» Գլուխոր էալ :

Այսոքիկ գերանուանք՝ մանաւանդ նոյն՝ հազիւ ուրեք ան-  
միջապէս յետագասին անուանց . իսկ եթէ յետագասեցին,  
սպարտ է զնախդիրն կրկնել . զօ, «Եւ յորոգայթ ՚ի նոյն անկ-  
ցին .» Ասդ :

Ի վախճան ցուցական գերանուանց ամենայնի՝ գիտել ար-  
ժան է և զայս, զի սոքա տոհասարակ դնին երբեմն՝ ի բանա իրը  
թարմատար, կամ իրը բացայատելի՝ ի ձեռն այնց բառից,  
յորս յարին յառաջը կամ զինի . զօ, «Ամենայն ինչ որ յաշ-  
խարհի է չէ նա մեր .» Խժնադ :

«Բազմաց արդարոց քաջավայելու և են շերիմք նոցա .» Խժնադ :  
«Յօղդ որ ցօղե՝ ի քին, այդ բժշկութիւն է նոցա .» ՚ի գիշե-  
րաց յօշն :

«Օվեմն զոր անարգեցին՝ նա եղեւ գլուխ անկեան .» Աստուծ :

Յորս գերանուանքդ նա, նոցա, այդ, ան, իրը թարմա-  
տար դնին, կամ իրը բացայատելի՝ ի ձեռն բառից ամենայն  
ինչ, և արդարոց, և ցողը և զվետն :

## ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղաք համայսյուն-լեռն առացական դեբանուանցաւ  
Խմ, քոյ, մեր, ձեր, իւր, իւրոյ :

Սոքա միշտ ածականաբար վարին . և յորժամ յարին յա-  
նուանս ևս և յընգունելութիւնս, յամենայնի համաձայնին ընդ  
նոսա՝ ի վերջահոլովին, թէ՝ ի յետագասին, թէ՝ ի նախագա-

սին և թէ անկցի՝ ի միջեւ այլ մասն բանի. զօ, «Օխարդ  
շրթամբքը ի՞նչ զանձն իմ անիծից.» Նար:

«Շնորհը տեսանեմք զարեւ յետ Ձեզ սիրելեացն.» Եղիկ:

«Քառամբ առնուս ախտի ջատագով զժիւրեալ ճշմարտու-  
թիւնն.» Լամբ:

Ասացի համաձայնիւ սոցա՝ ի վերջահովան, զի ի նախդրիւ  
հոլովս և յուղականս միշտ անհամաձայն զնին. զօ, Ամենայն  
խորհուրդը ի՞մ հաստատեացին.» Եսայ. և ոչ լինի ասել խոր-  
հուրդը իմք:

«Ուստի ինձ առնել զկամն ո՞յզ.» և ոչ քոյս. Սաղ:

«Խաժանեաց զկեանս Ձը.» և ոչ մերս. Խոսրով:

«Ապաարեացէ զկամն Յեր՝ ի կամն ի՞ւր.» և ոչ ձերն և իւրս.  
Արշակոս:

Առաջ լինին ևս ածական գերբայից նովին համաձայնութիւն,  
որով յարին յանուանս. զօ, «Ե բարեպաշտելս ի՞նու՞մ զայ-  
թակդիմ.» Նար:

«Տացի կեանս նմա՝ ի կենաց առողջուն ո՞յզով արդահատելովդ.»  
Ասրդին:

Խոկ եթէ ուրեք ուրեք երեւացի անհամաձայն, այն ոչ է  
ստացական զերանուն իրը ածական, այլ սեռական հոլով էա-  
կան զերանուանց. որպէս յասելն, «Ճարդարանալս ի՞մ և մե-  
զանչւմ.» Նար: «Ճերանունս ի՞մ ոչ է ստացական, այլ էական.  
և եզեալ է աստ իրը անուն զերբայիդ յարդարանալս:

### ԳԼՈՒԽ Ժ.Դ.

Յաղագո համայայնութեան յարաբերական դերանուանս Որ:

Յառաջ քան զխօսիւ զհամաձայնութենէ սորա՝ զիանելի է,  
զի սա՝ ի կարդս բանի զօրութեամբ՝ ի միջ բերեալ զայլ մասն  
բանի՝ զնին ներգործութեամբ՝ ի աեզի նորա. որպէս զի մի  
կրկնեացի մի և նոյն բառ:

Երդ նախ առաջին՝ յարաբերէ սա զանուն, զղերանուն և  
զընդունելութիւն. զօ, «Ամենայն նիւթոյ՝ ո՞վ մարմին է, ա-  
պականութիւն հետի ի.» Լամբ: Ուր ո՞ն յարաբերէ զանունդ՝  
ամենայն նիւթոյ:

«Քարւոք է խոնարհութիւն յամենայն ժամ, և յամենայն նեղութեանց ապրեցուցանէ զայնոսիկ, ոյն մերձենան առ նա»:

**Ածբ:** Աւր ոյժն յարաբերէ զգերանունդ պայնոսիկ:

«Արժանի զայ ճաշակել զջուր յազերէ փրկութեան նորոգողնն զմեզ ըստուն խկ ընկալայ»: Յովհ. կան: Աւր բառ որոյ յարաբերէ զընդունելութիւնդ նորոգողնն:

Աւրեք ուրեք յարաբերէ առնաև զբայ և զբան. զօ, «Մարմնա ճգնի, աքնէ և պահէ, որովհ և օգնէ մոտայ և կամաց»:

**Լամբ:** Աւր բառդ որովհ յարաբերէ զբայսդ ճգնի, օդինէ, ևն: «Մարդ բարի... զյաղթին սիրէ, որով և նուածէ. և ոչ զյաղթելն, որով զմարտն գրգուէ»: **Լամբ:** Աւր բառդ որովհ յարաբերէ զյաղթին և զյաղթին:

«Ու վաստակեցի ՚ի հունձս արմուեացն, որով ՚ի մուսս ձեւնե առուրցն խոռոշութեան կերակրել պատրաստեցայց»: Եաբ: Աւր որովհն յարաբերէ զայս բան՝ ու վաստակեցի ՚ի հունձս արմեացն:

Գիտելի է ևս, զի այս գերանուն երբեմն յարաբերէ վեառ խընթացն. զօ, «Ի գործացն, պար գործէ, առնու զանուն»: **Լամբ:**

Եւ երբեմն զշեառեալն. զօ, «Օսր վասն այլոց կորատեան խօսիմք՝ անձամբ ՚ի նմին եմը»: Խիշուար: Աւր զարն յարաբերէ զի վերջոյ եղեալ բառդ ՚ի նմին:

Երբեմն ևս մասնէ ՚ի մէջ յարաբերէ լի անուանն, և ՚ի մէջ բայի նորա, կամ յատկացուցչի նորին, և կամ ածականի նորուն, ևն. զօ, «Երդ զբեռնդ զոր գու ոչ ևս բառնալոց, եր վասն հոգաս և գատիս»: **Լամբ:** առեն:

«Կնատգիւտ արգարութեամբ լիցի՝ պահանջեաց, փրկութիւնն»: այսինքն՝ ծանիցես զջմարտութիւնն, զոր պահանջեաց»: **Լամբ:**

«Օի ծանիցես զբանիցն որոյ աշակերտեցար զջմարտութիւնն»: այսինքն՝ ծանիցես զջմարտութիւնն բանիցն, որոց աշակերտեցար. **Լամբ:**

«Օ ոգեկանն, որ յառաքինութենէն է, պինդ պահիցեմք զազատութիւնն»: այսինքն՝ պինդ պահիցեմք զոգեկան աղատութիւնն, որ յառաքինութենէն է. Յովհ. իմաստ:

Բաղում անգամ ևս զօրութեամբ ունի սա զյարաբերելին.

զօ, «Որ նախ խոնարհի, նախապատիւ բարձրացի.» Լամբ:

Ուր զօրութեամբ կայ բառս նա. որպէս թէ ասէր՝ նա որ խոնարհի, բարձրացի:

«Խշան ոք կոչի, յորժամ ունի սրոց իշխէ. և աբքայ, յորժամ ունի սրոց առաջնորդէ.» այսինքն՝ յորժամ ունի գլուխատիս, որոց իշխէ, ևն. Լամբ:

Ամաձայնութիւն այսը գերանուան կրինակի նկատի: «Եախ՝ զի թուով համաձայնի ընդ այնմ, զոր յարաբերէ. զի որով հետեւ դնի՝ ի տեղի նորս, զայնքան պարտի նշանակել, զորքան այն նշանակէ: Ուստի եթէ յարաբերեալն միակի նշանակեացէ, պարտի դնիլ եղակի. զօ, «Այն է տիրապէս իմաստուն, ո՞ր զործով ուսուցանէ զեւրն իմաստութիւն. այն է ըստ աստուծոյ վարդապետ, ո՞ր նախ առնէ, և ապա ուսուցանէ.» Ապրդ:

«Բուռն հարի զանհաստատ հողմոց, ո՞ր միշտ տատանեալ այսը անդր տարաբերիմ.» Ապրեկացի:

Խոկ եթէ յարաբերելին իցէ բազմաւորական, յարաբերականն զնի յոզնակի. զօ, «Մի պատրեսցուք՝ ի հեշտալեացս, ո՞ր կախարդեն զզայութիւնս.» Ապրդ:

Եւ քանզի բազում եղականը ևս ունին զզօրութիւն յոզնականի, եթէ յարաբերեալքն լինիցին բազում եղականք, յարաբերականն ևս իբր՝ ի բազում յոզնակի զնի. զօ, «Առոք են փառասիրութիւն և մարդահաճութիւն, ոյտ և գլաւատան խկ հալածեն.» Ապրդ:

Խոկ եթէ յարաբերելին իցէ անեղական անուն, որովհետեւ այն ըստ նշանակութեանն իբր եղական է, յարաբերականն ևս բազում անդամ եղակի զնի. զօ, «Յիշեալ զշնորհս աւազանին՝ ո՞ր լուսաւորեցար.» Երշնէկացի:

Եւ ներհակ այսմ՝ եթէ յարաբերելին իցէ անուն հաւաքական կամ հանրական,՝ ի վարիլ նոցա իբր յոզնական վասն զոլոց նշանակութեանն նոցա բազմաւորական, յարաբերականն ո՞ն զնի յոզնակի. զօ, «Օհարդ կարիցեմք և զքահանսցավետական գաստաւորութիւնն ի գործ արկանել առ ազդ այնպիսի, ո՞ր գատաւորաց եկեղեցւոց նստին գատաւորք.» Ընողի:

Ասացի՝ ի վարիլ իբր յոզնական, զի եթէ իբր եղական վարեսցին այսպիսի անուանք, յարաբերականն ո՞ն ևս զնի եղակի. զօ, «Ամենայն, ո՞ր զչար զործէ, ատեայ զլոյս.» Յոդ:

«Ճողովուրդ, «ո՞ զնայր ընդ խաւար՝ ետես զլցոս մեծ.» Եսայ:

Այլ գիտելի է, զի այս գերանուն բազում ուրեք ըստ թուոյն զօրութեամբ համաձայնի. քանզի բազում անդամ փոխանակ յոզնական դնելց եզական դնի՝ մանաւանդ յուղականնե և՝ ի նախորիւ հոլովն. զօ, «Ան բազումք՝ ի մարդկանէ, «ո՞ երեկին բազմաց, եթէ սուրբք են և առաքինիք.», և նախատանաց և ոչ միոյ համբերին.» Ապրի: «Օսոյն զայս միաս ամենայն ոք ստացի առ աստուծած՝ ի վերայ ամենայն նեղութեանց և չարչարանաց, զը վասն նորա կրեմք.» Խժնադ:

Երկրորդ համաձայնութիւն այսր գերանուն նկատի յայսմ, զի յայնպիսի հոլով դնի, յորպիսի դնելի էր յարաբերելին, եթէ եղեալ էր ներգործութեամբ ըստ պահանջելց բային կամ անուանն: Աւստի, երբեմն դնի յուղական հոլովն՝ իր անուն բայի. զոր օրինակ, «Ամենայն ո՞ զշար գործէ, չար գտցէ.» Ագաթ:

Երբեմն դնի՝ ի սեռական հոլովն՝ իրը յատկացուցիչ զօ, «Մասնելն առաջի աստուծոյ նոցա է, «ո՞ս սիրան է ուղեղ ընդ նմա.» Լամբ:

Երբեմն դնի յայլ հոլովն՝ իրը խնդիր բայի, ևս և իրը խնդիր անուան, և ընդունելութեան, և նախադրութեան. զօ, «Օի զը սերմանեսցես՝ վնյոյն և հնձեսցես.» Ապրի հարց: Աւր զըն է խնդիր բայիս սերմանեսցես:

«Ոլուծ ցանկացաւն ոչ եհաս՝ ի կեան.» Երդն: Աւր «օլուծն է խնդիր ցանկացաւն:»

«Ոլոյ համեմատ և զսա ցուցանէ.» Գեղորդի: Աւր «օլոյն է խընդիր անուանն համեմատ:

«Այս այն (երկիր) է... «օլոյ ցանկացողն աղաղակէր, հոգի քոյ բարի.» ևն. Միայնէլ: Աւր «օլոյն է խնդիր ընդունելութեանը ըստ ցանկացողն:

«Ամենայն՝ ի քէն է, և որդւովդ. առանց «օլոյ եղիւ և ոչինչ.» Ագաթ: Աւր «օլոյն է խնդիր նախադրութեանս առանց:

Այլ ասկայն՝ ի գերապանծ շարագրութիւնս երեմն այլազգ կարգի այս համաձայնութիւն ըստ չորից. նախ՝ յորժամ յարաբերականն համաձայնի ընդ յարաբերելոյն՝ ի նոյն հոլով, թէ և յայլ հոլով էր դնելի (ըստ յունական ոճոյ). զօ, «Ասածնորդեա ժողովրդեանն այնմիկ՝ ի աեղին՝ յոր ասացի քեզ.»

Եւկը, փոխանակ զնելոյ, 'ի տեղեն զբ ասացի քեզ. (որպէս եղեալ է Ասկան):

Երկրորդ՝ ընդ հակառակն, յորժամ յարաբերեալն համաձայնի ընդ յարաբերականին, զօ, «Եւ զբանն զբ խօսիք մի մնացէ առ ձեզ,» Ժամագիրի. փոխանակ ասելոյ. և բանն զոր խօսիք մի մնացէ առ ձեզ:

Երրորդ՝ ըստ երկուցն ևս անհամաձայն գոլոյ եթէ յարաբերականին, և եթէ յարաբերելոյն. զօ, «Զնոյն դրէ առ որ «'ի խուժաստան էին ժողովուրդը.» Ծառվ. արժը. փոխանակ ասելոյ, զնոյն դրէ առ ժողովուրդն՝ որ+ 'ի խուժաստան էին:

Չորրորդ՝ ըստ համաձայնելոյ զօրութեամբ եղեալ յարաբերեցելոյն. զօ, «Քաղցր է տէր՝ որոց սպասեն նմա յաւուր նեղութեան.» «Եւառած. փոխանակ ասելոյ. քաղցր է տէր այնոցի, որը սպասեն նմա: Եւ այս չորեքին եղանակը զորս եգագ, հասարակ են առ նախնիս մեր՝ ոչ 'ի ստորին շարադրութիւնս, այլ 'ի գերապանծս:

Խ վախճան ճառիս արժան է զիաել և զայս. իբր զե երբեմն 'ի յարաբերականն յարին և այլ գերանուանիք թարմատարաբար, կամ իբր զարդ. և այս՝ մանաւանդ 'ի թարզմանեալ գիրս. զօ, «Երանեալ է այս, որոց օդնութիւն իւր 'ի քին է.» Սաղ: Ուր գերանունս իւր զնի իբր զարդ, կամ իբր բացայացած յարաբերականին՝ որպէս ասացաք զցուցական զերանուանց 'ի վերջ ժը. դլայն:

Գիշելի է զարձեալ, զե յարաբերական ո՞ն երբեմն առանց ո՞նելոյ զզօրութիւն յարաբերականի, այլ յաւէտ զզօրութիւն անորոշ հարցականի, զնի յառաջոց իբր ածական՝ թուով և հոլովիւ համաձայն. զօ, «Ոլով չափով չափէք՝ չափեացի ձեզ.»

Մասս:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագ ովելու շահեան յօթեց ո, զ, ն:

Եւյսօքիկ յօդք նախ յարին 'ի գերանուանս իբր զարդ. զօ, «Կնեա կորացեալ անաշեացէ (սատանայ).» Եղիշէ:

«Չեմ իբր զձեզդ անագորոյն.» «Երջն:

«Ուր եմ եմ, անդ և պաշտօնեայի իմ եզեցի.» Յովի:

Այլ գիտելի է, զի՞ ի յարիլ սոցա յայնպիսի դերանուանս որք՝ ի ձայնաւորս յանգին, հանդերձ յ պատուի գնին. զոր օրինակ, «Քրիստոսն յորժամ զայցէ, միթէ առելի՛ ինչ նշանս առնիցէ՝ քան զոր առյա առնէ.» այսինքն՝ քան զոր սա առնէ. Յովի:

«Յօդն որ՝ ի ժոյթ կողէ ցօղեալ.» այսինքն՝ ի քո կողէդ. Ըստ: «Օգուտ զայն գիտէ՝ զոր նայի առնէ.» այսինքն՝ նա առնէ. Կոստրով:

Այլ՝ ի յարաբերականս՝ ըստ որում են յարաբերականք, ոչ յարին այս յօդք. զի ոչ լինի ասել՝ որս երեխն, որդ փառաւորեալ ես, որն խօսէր, որն առաքեաց, ևն. այլ որ երեխնա, որ փառաւորեալդ ես, որ խօսէրն, ևն. զօ, «Մարտիկ մատակարարեն զայս, ով երեխնա, այլ հոգին սուրբ տայ զայն ով ոչն երեխ.» Կով:

«Որ փառաւորեալդ ես՝ ի վերայ ամենայն աիելերաց.» Աժամի: «Դաւիթ արքայ ոչ բարկանայր (ընդ բանան՝ Ամանայ), զի ոչ՝ ի նա հոյէր ով խօսէրն, այլ՝ ի նա հոյէր ով առաքեայն.» Կով:

Երկրորդ՝ յարին սոքա յանուանս. զօ, «Եթէ աշակերտ ես, վարդապետիս նման լեր.» Սարգի:

«Քառասուն թիւդ՝ ի հինգ ութից աւարտի.» Արքայ:

«Քարերարացն և հեղոցն ընտթիւնդ քարշէ զքեղ կալ՝ ի ծառայութիւն.» Սարգի:

Երրորդ՝ յարին՝ ի բայս. զօ, «Մինչ դեռ արշաւեմա՝ առ՝ ի յետոյն հակամիտեմ.» Կարեկացի:

«Օրհնեալ որ դաստ յանուան աեասն.» Յովի:

«Որ կոչն՝ ի բժշկել զօրաւոր է և պատրաստ.» Սարգի:

Չորրորդ՝ յընդանելութիւնս. զօ, «Զայնես չլսողիս և ոչ սրտամիս. փութաս մեղկելոյս և ոչ խավանիս.» Կարպ:

«Սատեալդ՝ յաթոռ. քերովքէից նիստ գթութեամբ՝ ի մեր հոգիս.» Ըստ:

«Օ ամենեսեան աշակերտեցին հոգւով զօրացեալքն և մարմնով առապեալքն.» Լամբի:

Հինգերորդ՝ (այլ ասկառ ուրեք)՝ ի մակրայս. զօ,

«Ա ան ժողովրդեան՝ որ շուրջն կան՝ առնեմ.» Կամայ:

«Բայց զեարդ այժմով տեսանէ՝ ոչ դիտեմք.» Յան:

«Որ իրաւապէմն դատի, զմարմնականն՝ ի ծոցս մեր հասուցանէ տանջանս.» Յան. ի մասու:

Այսոքիկ յօդք ուրեք ուրեք զնին փոխանակ միմեանց. քանի զի ան գնի յերիս դէմս ևս. զօ, «Որպէս սկսոք»՝ ի նմին և կատարեսուք.» Եղիշ:

«Դ գրելոց» ձեր ծանուցաւ.» Շնորհալի:

«Վարսիր ընդ այնուիկ՝ որ մալանչնու ընդ մեզ.» Եղիշ:

Այնպէս և պան. զօ, «Առ ի՞նչ արդեօք հրամայեսցես քան թէ հրամայեցիք.» Եղիշ:

«Օ որ ասէքո՞ ցուցէք գործով.» Գևորգ:

«Որ նսանինդ աւագիկ ամենեքեան առաջի քո.» Լամբ:

Ըստ այսմ և նուն. զօ, «Խակ եթէ ոչ զայն առնիցեմք՝ զոր հրամայեցաքն, և զայն խօսիցիմք՝ զոր վարդապետեցաքն, աղառութեան օրինօքն եմք դատելոց.» Ասրի:

«Օ իարդ ուսուցանես ինձ, եթէ առնու ոք զբոյդ՝ զու մի սպահանջեր, երբ դու զբոյն պահանջես.» ՎՃբ:

«Որ մեռանին արդարացեալ է՝ ի մեզաց անտի.» Հայով:

Առքա երբեմն փոխանակ գնելոյ՝ ի վերայ բուն անուան, կամ դերբայի, կամ խնդրոյ բային, ևն, գնին՝ ի վերայ այլոց բառոց առ.՝ ի գեղեցկացուցանել զշարագրութիւնն. զօ, «Օ ի՞նչ գործեցից ողբալիս հոգի՝ յայնմ մեծի աւուր վտանգի.» փոխանակ ասելոյ, ողբալիս հոգիս. Կար:

«Գովեմ զՃմարտութեանդ լինել օժանդակ.» փոխանակ ասելոյ, գովեմ զլինելի քո օժանդակ Ճմարտութեան. Լամբ:

«Ամենայն ոք որ հակառակամարտն է, զյաղթօղի լինել որքան կարէ ախորժէ.» փոխանակ ասելոյ, զյաղթօղ լինելն. Լամբ:

Այլ աստ գիտելի է, զի այսոքիկ յօդք բազում անզամ գնին՝ ի տեղի գերանուանց զօրութեամբ յարելոց յանուանս և յընդունելութիւնս և՝ ի բայս պէսպէս օրինակաւ. զօ, «Դ վեր ամբարձայ մոխիրս մերժելի.» փոխանակ ասելոյ, ի վեր ամբարձայ ևս մոխիրս, կամ՝ ի վեր ամբարձայ ևս, որ եմ մախիր մերժելի. Կար:

«Արծեցեր անօրէնդ՝ ի մաի քում, և թէ ես քեզ նմանիցիմ.» այսինքն՝ կարծեցեր պատ, որ անօրէն ես, ևն. Ասրի:

«Որ գթայն ողորմութիւն գացէ .» այսինքն՝ նա, որ գթայ, ողորմութիւն գացէ . Առաջ:

«Որ եղեն լինել ոչ ունի .» այսինքն՝ այն որ եղեւ, ոչ և լինելի . Եթեապէս:

Դաշնամակ գիտելի է, զի յօդդ ն զնի երբեմն փսխանակ անուան, որ զօրութեամբ իմանի և այս երրակի . Մի՛ յարելով՝ ի յատկացուցին զօրութեամբ իմացեալ անուանն . զօ, «Սոդ է բարկութիւն, որ գովելի է՝ ի գրոց . որպէս մովսէսին, որով զեգիպատացին սպան . . . և է բարկութիւն, որ սպատաւելի է . որպէս կայենին, որով զեզեայրն իւր սպան » այսինքն՝ որպէս բարկութիւն մովսէսի . ևն . Ապա՞ :

Երկրորդ՝ յարելով՝ ի յածականն . զօ, «Օպղատնականն համարձակագոյն այժմ բարբառիմ» այսինքն՝ զպղատնական բանն, Խոռվն :

Երբորդ՝ յարելով՝ ի ինդիլն նախադրութեանց, յորս իւցէ եղեալ ներգործութեամբ նախդիրդ և զօրութեամբ իմացեալ անուանն . այլ այս՝ ի սակաւա յոյժ . զօ, «Ծնդ զօրս հրեշտակաց միաբանական օրհնութեամբ բարեբանեցէք զի վերայ քերովլեկիցն .» այսինքն՝ բարեբանեցէք վնասեալն՝ ի վերայ քերովլեկից, կամ զայն՝ որ է՝ ի վերայ քերովլեկից . Եապէս: «Օպիւրալուրն և զառանց խոր բառիցն յարգեն .» այսինքն՝ զքանն, կամ զայն որ առանց խոր բառից . Ապա՞ :

«Օվամն մեղացն ոչ ինդրեցեր .» այսինքն՝ զմասուցեալն քեզ վամն մեղաց, կամ զայն՝ որ վամն մեղաց . Ապա:

## ԳԼՈՒԽ Ժ.Օ.

Յաղաժո համայնքնեան բայի ընդ անուան, ընդ դերանուան և ընդ ընդունելունեան :

Տայք կրկնակի համաձայնին ընդ անուանս, ընդ զերանուանս և ընդ ընդունելութիւնս: «Եալն՝ իբր ընդ այնս, որք ասին առաջն բայի: Երկրորդ՝ իբր ընդ այնս, որք ասին ինդիր բայի . զոր օրինակ յասելն, «Ծերան ամպարշտաց կլանէ զղատաստանս .» Առաջ: ՚ի սմին բանի բայս կանէ ունի զերկուս անուանս, որոց առաջինն՝ այսինքն՝ բերանն եղեալ է անուան բայի,

և նշանակէ զտէր գործողութեան կլանելցին. իսկ միւսն՝ այսինքն՝ պատաստարանու եղեալ է խնդիր բայի, և նշանակէ զենթակայն՝ առ որ լինի գործողութիւն կլանելցին։ Իսկ անունա աճարյացից է յատկացուցիչ բերանոցին։ Այժմ նախ խօսեցուք զառաջինն համաձայնութենէ, այսինքն՝ զանուանէ բայից, և ապա զերկրորդէն՝ այսինքն զինդրոյ նոցին։

**Յաղախու առաջն համայայնութեան բայից, կամ**

**Յաղախու անուան բայի։**

Անուն բային է այն՝ որ նշանակէ զտէր գործողութեանն. այսինքն՝ զգործողն կամ զկրողն, և կամ զայն որ լինի. որպէս յայտ է 'ի վերցգրելոցդ. և քանիզի յատկապէս անուանք և դերանուանք և ընդունելութիւնք կարգին նշանակել զգործողն կամ զկրողն, նոքա միայն յատկապէս լինին անուն բայի, որպէս յայտ լիցի 'ի յաջորդ գրելոցդ։ Եւ զի աներեսոյթ բայր ևս երբեմն իբր անուն վարին, նոքա ևս լինին բազում անզամ անուն բայի. որպէս ունիմք ասել 'ի ստորև 'ի վերջն է. կանոնին։

Իսկ այլ մասունք բանի որովհետեւ պիտակաբար միայն կարեն վարիլ իբր անուն, անյատկապէս կարեն լինել անուն բայի. ըստ որում են բառք ինչ. զօ,

«Դբշն նախզիր է բանի.» Լամբ։

«Օ այս աշութեօդն յայտ առնէ.» Լամապ։

«Օ ի ևս այլ է, և և ևս այլ.» Խոռոչով։

«Ո՞ն փափաքանաց որում ոչ հասանեմք՝ է տարացոյց ապաշաւանաց.» Լամբ։

«Պակաբեմն ամենեցուն յայտ է.» «Լամայ։

Այլ այժմ զսոքօք զանց արարեալ դիցուք զշինդ կանոնան վասն համաձայնութեան անուան բայի ընդ բայի։

**Կանոն առ։**

Եթէ բայն իցէ դիմաւոր, անուն բային պարտի դնիլ յուղղական հոլովն. զօ, «Պատարեցին նեղութիւնքն, և եհաս հանգիստն.» Լամապ։ Ուր անուանքս նեղութեանքն և հանգիստն են անուն բայիցս պատարեցին և եհաս. և եղեալ են յուղղական հոլովն վասն դիմաւոր լինելոյ բայիցն։

Խակ եթէ բայն իցէ անդէմ, որպիսի են աներեւոյթք, զերայք և դրագէմք, անուն բային հասարակօրէն դնի 'ի սեռական հոլովն. զօ, «Այն է ժամանակ, յորում երանութիւնքն լուն. աղտափաց մեծանալ և սժառչաց մսիթարիլ և հեղաց զվերին երկիրն ժառանգել.» Իժնար: Ուր անուանքս աղտափաց, սժառչաց և հեղաց են անուն բայի 'ի սեռական հոլովն վասն անդէմ լինելոյ բայիցս Ձժանալ մինացել և ժառանգել. որք եթէ որոշեալ դիմօք կարգէին, անուանքն ևս յուղղական հոլովն դնէին. որգոն, աղքատք մեծանան, սղաւորք մսիթարին և հեղաց ժառանգեն զվերին երկիրն: Ըստ այսմ է տեսանել և 'ի յաջորդ օրինակսդ:

«Ե ճարակել խոցուածոյս անդրէն վիրաւորիմ.» Կար:

Ուր բառդ խոցուածոյս է անուն բայիս 'ի ճարակել: «Ճաղում անգամ գան ըմպելով ճանկան 'ի բաց ոչ զաւնայ.» Ուր ճանկան է անուն բայի դերբայիս ընդելով. Արդի: «Արբեց Հարդանաց մտրակեալ զերիվարն 'ի փախուսա զախոյեանն պարսից զարձուցանէր.» Խռջ. արժը:

Ուր բառս որբեց վարդանաց է անուն դրագէմ բայիս ճարակելով. Ուրեք ուրեք ևս դնի յուղղական հոլովն. զօ, «Ճամեալ 'ի թիկունս աներեւոյթ օժնութիւնն խորտակեաց յայտնապէս զզաղանի պատերազմն.» Շար:

Խակ դերանուանք դնին երբեմն նաև 'ի տրական հոլովն, և այս յաւէտ 'ի դերբայս և յաներեւոյթ եղանակս. զօ, «Փափաքեաց անձն իմ 'ի ցանկալ նիշ յիրաւունս քո.» Արա:

Գրիտելի է ևս, զի անուն բային յարակատար և գերակատար ժամանակաց, և անցելոյ ստորագասականին 'ի յերրորդ դէմն եղականին իրը 'ի բազումն դնի 'ի սեռական հոլովն. զօ, «Եւ իմ եղեալ է 'ի մատի իմում բազում չարչարանօք կարձել զձեղ 'ի կենաց ձերոց.» Եղիշէ: Ուր սեռական գերանունս իմ լեալ է անուն բայիս եղեալէ:

«Գրիտեալ էր ներ յաստուածաղէն տառիս, զի մի մոռացայց ըպձեղ.» Մագիստր: Ուր սեռական հոլովն ներ լեալ է անուն բայիս դրեալէ:

«Թաէ մատացեալ իցէ Թը զանուն Աստուծոյ մերոյ.» Ապղճու:

Ուր սեռական հոլովն Ձը լեալ է անուն բայիս նորացեալ էց: Տես և 'ի մասն. ը. զլ. ժթ. 'ի վերջի:

Խոկ երբեմն զնի յուղղական հոլովն. զօ, «Ճանգուցեալ է հարվ Սասուծոյ՝ ի քեզ, ով եղբայր» . Ա ապր: «Ունիս զոք, ով ստացեալ իցէ զջշմարիտ հնազանդութիւն» . Ա ապր հարց:

## Կանոն Է:

«Խարձեալ եթէ բայն իցէ դիմաւոր, բայն պարտի թուով և դիմաւ համաձայնիւ ընդ նմա. զօ, «Ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ» . Յուն: Ուր որպէս բայս աղասիեցէ լսութուցն է եղական, նոյնպէս և անուն բային՝ այսինքն ճշտրապութիւնն, է եղական. և որպէս բայն է յերբորդ դէմն, նոյնպէս և անուն բային՝ ի ձեռն և յօդին:

Խոկ բառս զիեզ է խնդիր աղասիելոյն: Այնպէս է և՝ ի յաջորդ օրինակադ յերիս դէմն ևս: «Վմբարտաւանեցայ կոշիս շնչաւոր» . Ա ապր: «Մեռար անձանիր, և զմահացեալմն նորոգեցեր» . Ա ապր: «Պատրիժն ուսուցանեն զզգաստութիւն» . Գետիք:

Բայց գիտելի է, զի այսպիսի յօդք որոշեք դիմաց բազում անգամ զօրութեամբ զնին յերրորդ դէմն. զօ, «Դև զգե ոչ հանէ» . Եղբակ: Ուր զօրութեամբ գոյ յօդս և որպէս թէ առեր, դէմն ոչ հանէ զգե: Բատ այսին է տեսանել և՝ ի յաջորդ օրինակադ:

«Խոնարհութիւնն բանակիտղ է սրբութեան» . Ա ծբ:

«Եայ փորձի՝ ի բերանոյ գովչաց իւրոց» . Ա ապակ:

«Ճամանեցին ինձ զարկ, և ես ոչ կարացի ճանաչել» . Ա ապր:

Խոկ գերանուանք յիւրեանց ունելով զգեմն՝ ոչ կարօտին դիմորշական տառից, այլ առանց նոցա համաձայնին. զոր օրինակ, «Եայն է սպաս տանել ձուլեալ պատկերի և մեղաց ախտի. արդ եւ գնացի ընդ այս ճանապարհ կորսուեան հետոց խուսարի» . Ա ապեէ:

«Որոշեակ մարդ ես դա, ոչ պակասին՝ ի քեն բիծք» .

Ա ապր հարց:

